ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Հաշվետվություն

ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Հաշվետվություն

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ
Երևան – 2011

Ծրագիրն իրականացրել է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» (ՔՀԻ) հասարակական կազմակերպությունը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Աշխատանքային խումբ.

Արման Դանիելյան, խմբի ղեկավար
Սիրանուշ Սահակյան, իրավաբան
Լիլիթ Պետրոսյան, համակարգող
Թամարա Հովնանյան, համակարգող
Յուլիանա Մելքումյան, սոցիոլոգ
²ñß³Ï ¶³ëå³ñÛ³Ý, Ñá·»µ³Ý
Մայադա Շակուր, փորձագետ
Թագուհի Սուսլիյան, խմբագիր

Խորհրդատվությունն ապահովել է անչափահասների արդարադատության միջազգային փորձագետ տիկին Վալերի Վատենբերգը: Հեղինակները իրենց երախտագիտությունն են հայտնում նրա արժեքավոր մեկնաբանությունների և դիտողությունների համար:

Զեկույցում ներկայացված տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները պատկանում են հեղինակներին և միշտ չէ, որ արտացոլում են ԵԱՀԿ-ի տեսակետները:

ISBN: 978-92-9235-883-9

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ
Հայաստանի Հանրապետություն
Երևան 0025, Այգեստան 11 փողոց, 43 շենք
Հեռ.՝ (+37410) 574317
Ֆաքս՝ (+37410) 559634
csi@csi.am
www.csi.am, www.hra.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 6

ԱՄՓՈՓՈՒՄ 7

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 13

1.1 Կիրառվող միջազգային չափորոշիչներ 13

1.2 Ներպետական օրենքներ և նախաձեռնություններ 13

1.3 Արդարադատության համակարգը 14

1.4 Ոստիկանությունը 14

1.5 Անչափահասների ուղղիչ հիմնարկները և համայնքային կանխարգելիչ ծրագրերը 15

ԳԼՈՒԽ 2. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ 17

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 20

3.1 Քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով (diversion) 21

3.2 Քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով դատական ընթացակարգերի համատեքստում և այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը 26

ԳԼՈՒԽ 4. ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ 33

ԳԼՈՒԽ 5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ 36

ԳԼՈՒԽ 6. ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ 38

ԳԼՈՒԽ 7. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԱՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ 42

ԳԼՈՒԽ 8. ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ եվ ՆՐԱՆՑ ՄԱՏՉԵԼԻ ԼԵԶՎՈՎ 46

8.1 Անչափահաս ամբաստանյալների հետ նախնական զրույցի անցկացում 47

8.2 Մեղադրանքի բացատրությունը անչափահասներին հարմարեցված եղանակով 49

8.3 Անչափահաս ամբաստանյալների հոգեվիճակը դատական քննության ընթացքում և դատարանում տիրող մթնոլորտը 49

8.4 Դատավորի կողմից ագրեսիվության դրդում կամ ամբաստանյալի ակնկալվող ագրեսիվ վարքագծի չեզոքացում կամ կանխում 51

8.5 Դատական նիստերի ընթացքում տեղի ունեցած հուզական և վարքային ակտիվություն 53

8.6 Անչափահասի ունակությունը արտահայտելու իր տեսակետները դատական քննության ժամանակ և հարգալից ու նրբազգաց վերաբերմունքի արժանանալ 54

8.7 Անչափահասի ուղեկցումը (իրավական ներկայացուցիչներ, ծնողներ և խնամակալներ) 56

8.8 Անչափահաս ամբաստանյալի տարիքին, մտավոր, ֆիզիկական և զգացմունքային առանձնահատկություններին համապատասխանող դատաքննության գործընթացներ 57

8.9 Դատավարության տևողությունը 59

ԳԼՈՒԽ 9. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ 62

ԳԼՈՒԽ 10. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 67

ԳԼՈՒԽ 11. ԼՈՒՐՋ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԱՅԼ ՀԻՄՔԵՐ 72

11.1 Կանխարգելում 72

11.2 Անչափահաս տուժողների և վկաների անբավարար պաշտպանություն 73

11.3 Անչափահաս մեղադրյալների և տուժողների հանդեպ բռնությունների և ճնշումների գործադրումը 75

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 78

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՓՈԽԱՐԻՆՄԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ 83

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՄՐԱԳՐՎՈՂ ԱՌԱՋԱԴԵՄ ՓՈՐՁԸ 90

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 95

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ (ուժի մեջ են եղել նյութը պատրաստելու ժամանակահատվածում) 97

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արագացված դատական քննություն	Այն հանցագործությունների վերաբերյալ դատավարությունների անցկացման կարգ, որոնց համար առավելագույն պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկում, որոնց կատարումը ամբաստանյալը խոստովանում է, հետևաբար, քրեական գործով ձեռք բերված ապացույցներն ընդհանուր կարգով չեն հետազոտվում:
Երեխա	Մինչև 18 տարեկան ցանկացած անձ:
Երեխային հարմարեցված արդարադատություն	Արդարադատության այնպիսի համակարգ, որը երաշխավորում է հարգանք և երեխայի բոլոր իրավունքների արդյունավետ իրականացում որքան հնարավոր է բարձր մակարդակում՝ հաշվի առնելով երեխայի հասունության աստիճանը, կատարած հանցանքը, դրա հետևանքները հասկանալու ունակությունը, ինչպես նաև յուրաքանչյուր երեխայի անհատական հանգամանքները: Մասնավորապես, արդարադատության այնպիսի մոտեցում, որի միջոցով նվազագույնի են հասցվում տրավման և վախի զգացողությունը, որոնց անչափահասը սովորաբար կարող է ենթարկվել չափահասների համար նախատեսված ընթացակարգերի պայմաններում: Այն պետք է հասանելի լինի, համապատասխանի տարիքին, լինի արագ, երեխայի իրավունքներին և կարիքներին համապատասխանեցված, հարգանք ցուցաբերվի երեխայի իրավունքների հանդեպ, այդ թվում՝ արդար դատաքննության, դատավարությանը մասնակցելու և այն հասկանալու, մասնավոր կյանքի, անձեռնմխելիության և արժանապատվություն իրավունքները:
Համայնքային պատժամիջոցներ	Ցանկացած պատժամիջոց, որը չի մեկուսացնում անչափահասին հասարակությունից, սակայն նրա ազատությունը որոշակիորեն սահմանափակում է՝ պայմանների և/կամ պարտականությունների սահմանման միջոցով, որոնց կատարումն իրականացնում են այդ նպատակով օրենքով ստեղծված մարմինները:
Ազատությունից զրկում	Դատական կամ վարչական մարմնի որոշման հիման վրա հատուկ հաստատությունում տեղավորելը, որտեղից անչափահասն իրավունք չունի իր կամքով հեռանալ:
Քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով	Գործընթաց, որի միջոցով իրավախախտ երեխաներին հնարավորություն է տրվում շրջանցել դատական ընթացակարգերը (մինչդատական վարույթի ընթացքում քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով և ոչ ֆորմալ/այլընտրանքային պատժամիջոցների կիրառում):
Անչափահաս կասկածյալ/մեղադրյալ/ամբաստանյալ	Երեխա, ում մեղսագրվում է հանցագործություն, կամ ով մեղավոր է ճանաչվել այն հանցագործության համար, որը կատարվել է 14 (սահմանափակ թվով հանցագործությունների դեպքում) կամ 16-18 տարեկան հասակում, և որոնց գործերի քննությունն իրականացվում է չափահասների գործերով վարույթից տարբերվող ընթացակարգով:
Անչափահաս/չափահաս	Երիտասարդ անձ, ով կասկածվում է այնպիսի հանցանքի կատարման մեջ, որը կատարվել է մինչև 18 տարին լրանալը, սակայն դատավարության ընթացքում կամ մինչև դատավարությունը սկսելը դարձել է չափահաս:
Հանցանք	Ցանկացած վարքագիծ (գործողություն կամ անգործություն), որն ապացուցվելու դեպքում պատժելի է համապատասխան իրավական համակարգի քրեական օրենքով:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՔՕ	ՀՀ քրեական օրենսգիրք
ՔԴՕ	ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
ՔԿՕ	ՀՀ քրեակատարողական օրենսգիրք
ԴՕ	ՀՀ դատական օրենսգիրք
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԻԿ	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
ՏՍԽ	Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհուրդ
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԳԱ	Գլխավոր ասամբլեա
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ՏՍՄԻՄԴ	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՄԻՀՀ	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿՄՀ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ

ԱՄՓՈՓՈՒՄ

2010 թ. փետրվարին «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ մեկնարկեց անչափահասների գործերի մոնիթորինգի փորձնական ծրագիր, որը տևեց 8 ամիս: Ծրագրի ընթացքում դիտարկվել են անչափահասների մասնակցությամբ հանցագործությունների վերաբերյալ գործեր Հայաստանի երեք խոշոր քաղաքներում՝ Երևանում, Վանաձորում և Գյումրիում: Քաղաքներն ընտրելիս հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստացված անչափահասների մասնակցությամբ հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ ըստ մարզերի: Ըստ վիճակագրական տվյալների՝ անչափահասների շրջանում հանցավորության բարձր մակարդակ գրանցվել էր Երևանում, Շիրակի և Լոռու մարզերում:

Ծրագրի առաջնային նպատակն էր գնահատել Հայաստանում անչափահասների գործերով արդարադատության որակի համապատասխանությունը արդար դատաքննության իրավունքի չափորոշիչներին, ինչպես նաև դատական մոնիթորինգի արդյունքների հիման վրա բացահայտել միջազգային և ազգային չափորոշիչներով սահմանված երեխաների իրավունքների իրականացման արդարադատության համակարգի խոցելի տեղերը: Վերոհիշյալ արդյունքների և բացահայտումների հիման վրա ՔՀԻ-ն մշակել է առաջարկություններ և բարեփոխմանն ուղղված լուծումներ՝ ծառայելով որպես տեղեկատվության աղբյուր և օժանդակելով Հայաստանում անչափահասների արդարադատության համակարգի հետագա բարելավմանը, ներառյալ՝ օրենքի բարեփոխում և իրավակիրառական պրակտիկայի կատարելագործում և դրանց համապատասխանություն մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին:

Ծրագիրն իրականացվել է երեք փուլով: Առաջին փուլի ընթացքում կատարվել են նախապատրաստական աշխատանքներ: Այդ փուլում պաշտոնական գրություն էր ուղարկվել ՀՀ վճռաբեկ դատարան, որում ներկայացվել էին ծրագիրը, դրա նպատակները և դրա շրջանակներում իրականացվող գործողությունները: Ձեռք էր բերվել համագործակցության համաձայնություն: Հանդիպում էր տեղի ունեցել Վճռաբեկ դատարանի դատավոր տիկին Ելիզավետա Դանիելյանի հետ, ով դատարանի անունից պատրաստակամություն էր հայտնել տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ և օժանդակել ծրագրի բարեհաջող և ժամանակին իրականացմանը:

Ծրագրի իրականացման ընթացքում Վճռաբեկ դատարանը միշտ պատրաստակամությամբ էր արձագանքում ՔՀԻ-ի հարցումներին՝ տրամադրելով պահանջվող տեղեկությունները: ՔՀԻ-ն իր երախտագիտությունն է հայտնում Վճռաբեկ դատարանին արդյունավետ համագործակցության համար:

Դատական նիստերի մասին տեղեկատվությունը նաև ստացվել է դատարանի Datalex տեղեկատվական համակարգի միջոցով: Մոնիթորինգի ենթակա գործերի ի հայտ բերման նպատակներով հիմնականում օգտագործվել է Datalex տվյալների բազան, որն այնքան էլ արդյունավետ չէր՝ համակարգի անկանոն թարմացումների, տվյալների բազայի անբավարարության և այլ պատճառներով:

Նախապատրաստական փուլի ընթացքում ՔՀԻ-ը հայտարարել է դիտորդների ընտրության մրցույթ և պայմանագրեր կնքել ընտրված մասնագետների հետ: Ընտրությունը կատարելիս հաշվի են առնվել թեկնածուի համապատասխան կրթությունը, աշխատանքային փորձը, շահերի բախման բացակայությունը:

Ընտրված թեկնածուների համար անցկացվել են երկօրյա վերապատրաստման դասընթացներ՝ ծրագրի նպատակների և մեթոդաբանության, մոնիթորինգի անցկացման հիմնական սկզբունք-

ների, ինչպես նաև անչափահասների արդարադատության մասին միջազգային չափորոշիչների, քրեական և քրեադատավարական օրենսդրության վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Դիտորդի վարքագծի կանոնագրքին, որը հանգամանորեն պարզաբանվել է մասնակիցներին: Դասընթացի ավարտից հետո բոլոր դիտորդները ստորագրությամբ պարտավորվել են խստորեն պահպանել վարքագծի կանոնագրքով սահմանված կանոնները:

Վերապատրաստումներն անցկացվել են հրավիրված իրավական հարցերով փորձագետի, ոստիկանության քննիչի, սոցիոլոգի և փաստաբանների կողմից: Սոցիոլոգը և փորձագետը դիտորդներին ներկայացրել են մոնիթորինգի զեկույցի մշակված ձևերը և դրանց լրացման կարգը: Վերապատրաստման դասընթացի ավարտին անցկացվել է ուսուցողական դատավարություն, որը դիտարկել են մասնակիցները: Արդյունքում՝ փորձարկվել և ստուգվել են զեկույցի ձևերը:

Դիտորդական խումբը բաղկացած էր 8 մարդուց. 1-ը՝ Գյումրուց, 2-ը՝ Վանաձորից և 5-ը՝ Երևանից: Պահուստային ցուցակում ընդգրկված էր երեք մարդ: Դիտորդների գործողությունները վերահսկում էր ծրագրի համակարգողը, ով մոնիթորինգ անցկացնելու համար հայտնում էր սկսվող գործերի մասին:

Մոնիթորինգ իրականացնելու նպատակով կազմվել են զեկույցների ձևեր, որոնցում արտացոլվել են արդար դատաքննության միջազգային և ներպետական չափորոշիչները: Մշակվել են զեկույցի երկու ձևեր՝ դատական նիստի, որը լրացվում էր յուրաքանչյուր նիստի համար, և դատական գործի, որը վերաբերում էր ընդհանուր գործին և պարունակում էր գործին բնորոշ ընդհանուր հարցեր: Յուրաքանչյուր դիտարկված գործի համար դիտորդը կազմում և ներկայացնում էր դատական գործի վերաբերյալ մեկ զեկույց և դատական նիստի մի քանի զեկույցներ՝ կախված դատական նիստերի քանակից: Մինչդատական փուլի վերաբերյալ հարցերը դիտորդները լրացնում էին փաստաբանների, օրինական ներկայացուցիչների, ամբաստանյալների հետ անցկացված հարցազրույցների հիման վրա:

Զեկույցի ձևերը բաժանված էին մասերի՝ ըստ արդար դատաքննության իրավունքի տարբեր ասպեկտների: Զեկույցի վերջում կար հավելված, որտեղ դիտորդները գրանցում էին այն բոլոր մանրամասները, որոնք տեղ չէին գտել զեկույցի հիմնական մասում: Զեկույցը նաև պարունակում էր հոգեբանի կազմած հարցեր, որոնք նպատակ ունեին գնահատելու դատավարությունների հոգեբանական ասպեկտը:

Դիտորդների ներկայացրած զեկույցները և փաստաբանների ու մյուս մասնակիցների հետ անցկացված հարցազրույցները վերջնական հաշվետվության պատրաստման առաջնային աղբյուրն էին:

Մոնիթորինգի իրականացման երկրորդ փուլի ընթացքում դիտորդները հետևում էին դատավարությունների ընթացքին՝ բացահայտելու դրանց համապատասխանությունը արդար դատաքննության ազգային և միջազգային չափորոշիչներին: Դիտորդները համակարգված տեղեկություններ չեն հավաքել մինչդատական վարույթի վերաբերյալ, ինչպես նաև չեն իրականացրել մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի իրավունքների պաշտպանության ուղղակի մոնիթորինգ: Այնուամենայնիվ, երբ հարցազրույցների կամ դիտարկումների միջոցով այդ փուլերի վերաբերյալ տեղեկություններ էին հայտնվում, դիտորդները գրանցում էին դրանք:

Դիտարկված գործերը վերլուծվել են ՀՀ-ի կողմից վավերացված և իրավաբանորեն պարտադիր մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերին համապատասխանության տեսանկյունից, հատկապես՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (ԵԻԿ)[1] և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ)[2]: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացնելու վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), ՄԱԿ-ի Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության կանոնները («Հավանայի կանոններ»), ՄԱԿ-ի 1997/30/ Անչափահասների

1 Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ընդունվել է 1989 թ. նոյեմբերի 20-ին, որին Հայաստանը միացել է 1993 թ. հունիսի 23-ին:

2 Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան 2002 թ. ապրիլի 26-ին:

արդարադատության իրականացման բանաձևը («Վիեննայի սկզբունքներ»), Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների մասին ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Տոկիոյի կանոններ»), Անչափահասների իրավախախտումների կանխարգելման ՄԱԿ-ի սկզբունքները («Ռիադի սկզբունքներ») նույնպես պարունակում են անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման չափորոշիչներ: Այդ պատճառով նաև պատշաճ ուշադրություն է դարձվել Հայաստանի «փափուկ իրավունքի» չափորոշիչներին:

Մարտի 1-ից սեպտեմբերի 15-ը Երևանի, Վանաձորի և Գյումրու դատարաններում 45 գործ է լսվել: Դիտորդները դիտարկել են ընդհանուր առմամբ 37 գործ, որոնք ընթացել են 124 դատական նիստերում: Դիտարկված գործերից 34-ի վերաբերյալ դատարանը վերջնական վճիռ է կայացրել[3]:

Ստորև ներկայացված է դիտարկված գործերի ընդհանուր վիճակագրությունը՝ ըստ քրեական օրենսգրքի հոդվածների:

Քրեական օրենսգրքի հոդված	Քանակը
Հոդված 177. Գողությունը	37
Հոդված 176. Կողոպուտը	5
Հոդված 112. Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը	3
Հոդված 175. Ավազակությունը	2
Հոդված 178. Խարդախությունը	2
Հոդված 185. Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը	2
Հոդված 104. Սպանությունը	1
Հոդված 113. Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը	1
Հոդված 116. Առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ	1
Հոդված 137. Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը	1
Հոդված 179. Յուրացնելը կամ վատնելը	1
Հոդված 258. Խուլիգանությունը	1
Հոդված 259. Ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը	1
Հոդված 268. Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի	1
Հոդված 324. Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը	1

Աղյուսակ 1. Դիտարկված գործերը՝ ըստ ՔՕ հոդվածների[4]

Մոնիթորինգի ենթարկված գործերի աշխարհագրական բաշխումը ներկայացված է 1-ին գծապատկերում:

3 Մոնիթորինգի գործողությունների ավարտից հետո ծրագրի անձնակազմը տեղեկացվել էր, որ երկու անավարտ գործերով դատարանը դատավճիռներ է կայացրել: Datalex համակարգի միջոցով այդ գործերի արդյունքների և վճիռների մասին տեղեկությունները հավաքվել և օգտագործվել են այս հաշվետվության մեջ:

4 Անձը կարող է մեղադրվել մի քանի հանցանքներում, հետևաբար հոդվածների թիվը չի համապատասխանում մոնիթորինգի ենթարկված գործերում ներգրավված ամբաստանյալների թվին: Մոնիթորինգի ընթացքում ուժի մեջ եղած քրեական օրենսգրքի հոդվածների բովանդակությունը տեսնելու համար տե՛ս 4-րդ հավելվածը:



Գծապատկեր 1. Մոնիթորինգի ենթարկված գործերի աշխարհագրական բաշխումը տոկոսներով

Մոնիթորինգի ենթարկված գործերում որպես ամբաստանյալ ներգրավվել են 72 անձինք, որոնցից 39-ը՝ անչափահաս, 10-ը՝ անչափահաս հանցանք կատարելու պահին, սակայն չափահաս են դարձել քրեական գործի վարույթի ընթացքում, մինչդեռ 23-ը՝ չափահաս (հանցակցությամբ կատարված հանցագործություններ)[5]:

Վիճակագրական տվյալներով՝ անչափահաս ամբաստանյալների 29%-ը 16 տարեկան էր, և միայն 8%-ն էր 14 տարեկան: ՀՀ ՔՕ-ի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության հանցագործության որոշ տեսակների համար, ինչպես, օրինակ՝ սպանության, դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, մարդուն առևանգելու, բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ավազակության, գողության, կողոպուտի, շորթման, առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու, ծանրացնող հանգամանքներում գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու, թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր հափշտակելու կամ շորթելու, տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու, խուլիգանության համար[6]:

Անչափահաս ամբաստանյալների տարիքային խմբերը մանրամասն ներկայացված են 2-րդ գծապատկերում:

5 Այն անձինք, ովքեր հանցանք կատարելու պահին եղել են անչափահաս, համարվում են «անչափահասներ» անչափահասների արդարադատության նպատակների համար: Հետևաբար, այս տարանջատումը կարևոր է քրեական գործի վարույթի ընթացքում որոշ դատավարական երաշխիքների կիրառման միասնականությունը գնահատելու համար, հատկապես պաշտպանների, օրինական ներկայացուցիչների պարտադիր մասնակցության հարցերը քննարկելիս: Այդպիսով, վիճակագրության համար որպես առաջնային տվյալ օգտագործվում է 49-ը (39 անչափահաս, 10 չափահաս, որոնք հանցանքի կատարման պահին եղել են անչափահաս), եթե այլ բան ուղղակիորեն չի նշված:

6 ՔՕ, հոդված 24:



Գծապատկեր 2. Անչափահաս ամբաստանյալների տարիքային խմբերը

Անչափահաս ամբաստանյալների 98%-ը տղա էր, և միայն 2%-ը՝ աղջիկ: Ամբաստանյալների մեծ մասը լրիվ ընտանիքներից էր, և միայն 4%-ի ծնողներն էին ամուսնալուծված:



Գծապատկեր 3. Անչափահաս ամբաստանյալ ընտանեկան կարգավիճակը

Անչափահասների 96%-ն ապրում էր ծնող(ներ)ի հետ, 2%-ը՝ բարեկամների մոտ և 2%-ը՝ հաստատություններում:

Անչափահաս ամբաստանյալների մոտ 49%-ը դպրոց չէր հաճախում, նրանցից 2%-ը հաճախում էր հատուկ դպրոց:



Գծապատկեր 4. Կրթություն

Մոնիթորինգի արդյունքներից պարզվել է, որ անչափահասներից 12%-ը կրկնահանցագործ էր: Մյուս կողմից՝ անչափահաս ամբաստանյալների 6%-ը նախկինում ոստիկանությունում գրանցված է եղել որպես «ռիսկային» երեխաներ:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1 ԿԻՐԱՌՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1993 թ. հունիսի 23-ին Հայաստանը միացել է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային:

ԵԻԿ-ը պահանջում է մասնակից պետություններից մշակել և իրականացնել անչափահասների արդարադատության համապարփակ քաղաքականություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների իրավախախտումների կանխարգելմանը, այլընտրանքային միջոցների ներդրմանը, որոնք հնարավորություն կտան անչափահասների իրավախախտումներին արձագանքելու՝ առանց դատավարական ընթացակարգերին դիմելու, ինչպես նաև պարզաբանումներ տրամադրել և իրականացնել ԵԻԿ–ի 37-րդ և 40-րդ հոդվածներում պարունակվող բոլոր դրույթները: Մյուս միջազգային փաստաթղթերը, ինչպիսիք են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՏՍՄԻՄԴ) նույնպես կիրառելի են և պարունակում են անչափահասների արդարադատության վերաբերյալ դրույթներ[7]:

1.2 ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անչափահասների արդարադատության շրջանակային օրենք ՀՀ-ում գոյություն չունի: Արդարադատության իրականացման վերաբերյալ դրույթները սահմանվում են ՔՕ-ով, ՔԴՕ-ով, ՔԿՕ-ով, ինչպես նաև այլ օրենքներով ու ակտերով:

2003 թ. ընդունվել է Երեխաների իրավունքների պաշտպանության գործողությունների ազգային ծրագիրը («2003 թ. ազգային ծրագիր»), որը պետք է իրականացվի 2004-2015 թթ.: 2003 թ. ազգային ծրագրի VII գլուխն անդրադառնում է անչափահաս իրավախախտներին այլ խնդիրների համատեքստում, ներառյալ՝ թափառաշրջիկությունը, թրաֆիքինգը և երեխաների սեռական շահագործումը: Այն կոչ է անում՝ (i) «Անչափահասների կողմից թափառաշրջիկության, մուրացկանության և իրավախախտումների կանխարգելման մասին օրենք ընդունել, (ii) իրավախախտումներ կատարած անչափահասների համար հատուկ ստեղծագործական կենտրոնի հիմնում, (iii) իրավախախտումների կանխարգելում և անչափահասների իրավունքների պաշտպանություն իրականացնել, (iv) այլընտրանքային պատիժների ավելի լայն կիրառում և ընդլայնել ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային խափանման միջոցների և լրացուցիչ պատժատեսակների ավելի լայն կիրառումը, (v) հասնել քրեակատարողական հիմնարկներում գտնվող անչափահասների թվի կրճատմանը, (vi) ամրապնդել համագործակցությունը պետական, վիճակագրական մարմինների և քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինների միջև, (vii) անչափահասների վերաբերյալ դատական գործերով մեդիացիայի (տուժողի և մեղադրյալի միջև հաշտություն կայացնելու նպատակով կատարվող միջնորդություն) ինստիտուտի բնագավառում առկա միջազգային փորձի և չափանիշների ուսումնասիրում՝ հետագայում այն ՀՀ-ում ներդնելու նպատակով, (viii) իրավախախտ և դժվար դաստիարակվող անչափահասների հետ համապատասխան աշխատանքներ իրականացնող կադրերի պատրաստում և վերապատրաստում իրականացնել, և (ix) իրականացնել անչափահասների զբաղվածությունն ապահովող գործողություններ և այլ ծրագրեր, ներառյալ հանցագործության մեջ մեղադրվող և/կամ

7 Տե՛ս 3-րդ հավելվածը, որտեղ տրվում է երեխաներին առնչվող միջազգային մեխանիզմների ավելի ընդարձակ ցուցակ:

հանցագործության համար դատապարտված անչափահասների զբաղվածության ապահովումը (հաշվի առնելով երեխաների աշխատանքին վերաբերող Աշխատանքային օրենսգրքի դրույթները):

2005 թ. ստեղծվեց երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողով, որը պատասխանատու է 2003 թ. ազգային ծրագրի իրականացման համար: Հանձնաժողովի իրավասությունների մեջ են մտնում երեխաների իրավունքների հետ կապված խնդիրների վերլուծությունը, ինչպես նաև «երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման, հանրային, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների» միջև համագործակցության խթանումը:

2008 թ. կառավարության թիվ 1039-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը («2008 թ. պետական ծրագիր»), որը սահմանում է բարեփոխումների կարիք ունեցող կարևորագույն ոլորտները և որոշակի միջոցառումների ժամանակացույցը: Անչափահասների արդարադատությանն առնչվող այդ ծրագրով նախատեսվում էր 2008-2010 թթ. Երևանում, Գյումրիում և Վանաձորում ստեղծել անչափահասների վերականգնողական կենտրոններ, որտեղ ուժեղացվում է քաղաքապետարանում գործող երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և շահագրգիռ մարմինների, կազմակերպությունների միջև համագործակցությունը: Երևանում մեկնարկում է 10 դպրոցներում ոստիկաններ նշանակելու փորձնական ծրագիրը: 2008 թ. ազգային ծրագիրը նույնպես հաստատում է, որ գոյություն չունի հանցագործությունների կանխարգելման պետական համընդհանուր քաղաքականություն, ինչպես նաև նշվում է, որ անչափահասների հանցագործությունների կանխարգելման սոցիալական ծրագրերի արդյունավետությունը ցածր է:

1.3 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայաստանում չկան անչափահասների հատուկ դատարաններ կամ մասնագիտացված դատավորներ: Թեև պետական պաշտոնյաները պնդում են, որ գոյություն ունի որոշ դատավորների՝ անչափահասների գործերով մասնագիտացնելու ոչ պաշտոնական գործելաոճ, և անչափահասների գործերը հանձնվում են փորձառու դատավորներին, հիմնականում՝ դատարանների նախագահին, այնուամենայնիվ, նման հետևողական գործելաոճ դիտորդները չեն բացահայտել:

Դատախազության համակարգում նույնպես չկա անչափահասների գործերի քննություն և քրեական հետապնդում իրականացնող մասնագիտացված ստորաբաժանում:

Ներկայումս անչափահաս մեղադրյալներին անվճար ծառայություններ տրամադրում է հանրային պաշտպանի գրասենյակը:

1.4 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ոստիկանության ենթակայության ներքո գոյություն ունի անչափահասների գործերով ծառայություն, որն իր պարտականությունները հիմնականում իրականացնում է՝ «գրանցելով» ռիսկային երեխաներին: Գրանցումն իրականացվում է համաձայն ՀՀ ներքին գործերի (այժմ՝ ՀՀ

ոստիկանության) (նախկինում) նախարարի (այժմ՝ ոստիկանապետի) 08.08.1996 թ. N 633 հրամանով հաստատված հրահանգի:

Թեև հրահանգը նախատեսված էր ժամանակավոր կիրառության համար, այն դեռևս ուժի մեջ է: Հնացած որոշումը պարունակում է բազմաթիվ դրույթներ, որոնք հակասում են երեխաներին վերաբերող և Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին, ինչպես նաև ներպետական օրենսդրությանը:

Համաձայն այդ որոշման՝ ոստիկանության ցուցակներում որպես «ռիսկային երեխաներ» գրանցված երեխաների խմբերն ընդգրկում են ազատազրկման վայրերից ազատվածներին, պայմանական դատապարտվածներին, ազատազրկման հետ չկապված, այլ պատիժներով դատապարտվածներին, հանցագործություն կատարած, բայց վարչական կամ հասարակական ներգործության ենթարկելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատվածներին, հատուկ ուսումնադաստիարակչական հիմնարկներ վերադարձածներին, մուրացկանությամբ կամ թափառաշրջիկությամբ զբաղվողներին, այլ հակահասարակական կյանք վարող անչափահասներին:

Գրանցված երեխաների անունները պահվում են ոստիկանության ցուցակներում առնվազն մեկ տարի, բայց ոչ ավելի, քան նրանց չափահասության տարիքին հասնելը: Ոստիկանության տվյալ ստորաբաժանումը անչափահասների հետ իրականացնում է հիմնականում կանխարգելիչ աշխատանքներ, ինչպիսին են նրանց վարքագծի, շրջապատի մոնիթորինգը կամ այլ սահմանափակումների կիրառում՝ համաձայն դատարանի որոշման: Աշխատանքները կատարվում են յուրաքանչյուր երեխայի համար կազմված անհատական պլանի համաձայն:

1.5 ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՈՒՂՂԻՉ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԾՐԱԳՐԵՐԸ

Կրթության նախարարության ենթակայության տակ կան երկու հատուկ դպրոցներ՝ հանրապետական թիվ 1 հատուկ համալիրը՝ Վարդաշենում, և Երևանի թիվ 18 հատուկ դպրոցը՝ Նուբարաշենում[8], որտեղ սովորում են անչափահաս իրավախախտներ և ռիսկային երեխաներ, մեկ ուղղիչ հիմնարկ՝ դատապարտված անչափահասների համար և դատարանի դատավճռին սպասող անչափահասների մեկ կենտրոն, որը գտնվում է արդարադատության նախարարության ենթակայության տակ, և երեխաների աջակցման մեկ կենտրոն (նախկինում հայտնի իբրև «ընդունման և բաշխման կենտրոն») մայրաքաղաքում:

Վերջին տարիների ընթացքում ոստիկանությունը երեխաների աջակցման կենտրոնը հանձնել է Հայ օգնության ֆոնդին (ՀՕՖ)՝ համաձայն երկկողմ համաձայնագրի: ՀՕՖ-ը վերափոխել է այն՝ դարձնելով ռիսկային երեխաների օրինակելի կենտրոն: Ոստիկանության անչափահասների ստորաբաժանումը ՀԿ-ների հետ համատեղ մասնակցում է բնակության վայրերում կազմակերպվող կանխարգելման և ուղղման նորարարական ծրագրերին: Մասնավորապես, ոստիկանության և Project Harmony International ծրագրի համագործակցության շնորհիվ մեկնարկել է համայնքային կանխարգելման և վերականգնման հաջողված ծրագիր, որն իրականացվում է վեց քաղաքներում և ընդգրկված է 2003 թ. ազգային ծրագրում: Երեխաները համայնքային կենտրոններ են ուղեգրվում ոստիկանության բաժանմունքների և դպրոցների կողմից: Այդ կենտրոններ ուղեգրված անչափահասների մեջ կան թե՛ ոստիկանության բաժանմունքների ցուցակներում գրանցված և թե՛ չգրանցված երեխաներ:

Այդ կենտրոնները որդեգրել են ԱՄՆ-ի (մասնավորապես՝ Վերմոնտ նահանգի) արդարադատության համայնքային կենտրոնների մոդելը: Դրանք դիտարկվում են որպես ոստիկանության

8 Երևանի թիվ 18 հատուկ դպրոցը (Նուբարաշենում) վերակազմավորվել է «Փոքր Միեր» կրթական համալիրի՝ որպես Երևանում գործող Նուբարաշենի մասնաճյուղ՝ համաձայն կառավարության 23.12.2010 թ. թիվ 1722 որոշման:

բաժանմունքներին այլընտրանքներ[9], որոնց միջոցով հնարավոր է խուսափել ստիգմատիզացիայից: Այդ կենտրոնները կալանավորման/ազատազրկման այլընտրանք չեն, դրանք հիմնականում աշխատանքներ են ծավալում քրեական պատասխանատվության տարիքից ցածր երեխաների հետ, որոնք գրանցված են ոստիկանության ցուցակներում, կամ 18 տարեկանից ցածր անչափահասների հետ, որոնք կատարել են մանր վարչական իրավախախտումներ: Կենտրոնը բաղկացած է վերականգնողական խորհրդի անդամներից (հոգեբաններ, ուսուցիչներ, սոցիալական աշխատողներ և այլն), ովքեր օժանդակում են երեխաների վերականգնմանը: Բացի այդ, կենտրոններում աշխատում են համայնքի ակտիվ անդամներ և ուսանողներ կամավորական հիմունքներով:

2010 թ. 100 անչափահաս է ուղեգրվել նման կենտրոններ: 31 անչափահասների հետ աշխատանքները շարունակվում են, 58-ի հետ հաջողությամբ ավարտվել են, իսկ 8 անչափահաս հրաժարվել է այդ կենտրոններ հաճախելուց:

9 Եթե երեխան գրանցված է ոստիկանության բաժանմունքում, պարտավոր է ենթարկվել որոշակի պահանջների, որոնց իրականացումը վերահսկվում է ոստիկանության կողմից, ինչպես, օրինակ՝ ամեն շաբաթ ոստիկանի այցելություններ երեխայի ընտանիք: Եթե երեխային ուղարկում են կենտրոն, ոստիկանությունը ֆորմալ ձևով շարունակում է կատարել իր վերահսկողական դերը երեխայի նկատմամբ, սակայն այդ վերահսկումն ավելի թույլ է: Կենտրոններում գտնվող երեխաների հանդեպ ոստիկանությունը համակարգում է իր վերահսկողական պարտականությունները արդարադատության համայնքային կենտրոնների աշխատանքների և նրանցից ստացված արձագանքների միջոցով: Կենտրոնները գործում են իբրև ոստիկանության «վստահված անձ»:

ԳԼՈՒԽ 2. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման կարևորագույն իրավական փաստաթուղթ է, քանի որ այն իրավաբանորեն պարտադիր է ՄԱԿ-ի գրեթե բոլոր անդամ երկրների համար: Հետևաբար, այն ավելի համընդգրկուն է և պարտադիր, քան միջազգային այլ փաստաթղթեր: Անչափահասների արդարադատությանն են վերաբերում կոնվենցիայի 37-րդ և 40-րդ հոդվածները: Այդուհանդերձ, ԵԻԿ-ը սոսկ դրույթների թվարկում չէ, այլ միտված է դիտարկելու երեխային՝ որպես լիարժեք մարդկային էակի:

Ուստի շատ կարևոր է 37-րդ և 40-րդ հոդվածները մեկնաբանել կոնվենցիայի ընդհանուր և նրա հիմնական «երաշխավորող իրավունքների» (umbrella rights) համատեքստում: Այն ներառում է կյանքի, գոյատևելու և զարգանալու իրավունքը, երեխայի շահերի պաշտպանությունը իբրև առաջնային սկզբունք ընդունելը, խտրականության բացառումը և մասնակցության իրավունքը: ԵԻԿ-ը պարունակում է նաև կանխարգելմանն առնչվող դրույթներ: Գոյություն ունի նաև Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս երեխաների իրավունքների մասին թիվ 10 Ընդհանուր մեկնաբանությունը:

«Ռիադի ղեկավարող սկզբունքները» (Riyadh Guidelines) ներկայացնում են կանխարգելման և սոցիալական վերաինտեգրման համապարփակ և պրոակտիվ մոտեցում, որը մանրամասնում է սոցիալական և տնտեսական ռազմավարությունները, որոնք առնչվում են սոցիալական գրեթե բոլոր ոլորտներին՝ ընտանիքին, դպրոցին, հասարակությանը, լրատվամիջոցներին, սոցիալական քաղաքականությանը, օրենսդրությանը և անչափահասների արդարադատությանը:

Կանխարգելումը դիտարկվում է ոչ միայն որպես բացասական իրավիճակների հաղթահարման, այլև բարեկեցությանը և բարգավաճմանն օժանդակող դրական միջոց: Այն պահանջում է առավել պրոակտիվ մոտեցում, որում պետք է ներառված լինեն «անչափահասների ներդաշնակ զարգացումը երաշխավորող ամբողջ հասարակության ջանքերը»:

Մասնավորապես, պետություններին խորհուրդ է տրվում զարգացնել համայնքային ներգործության միջոցներ՝ օգնելով կանխարգելել երեխաների իրավախախտ վարքագիծը, և ընդունել, որ «սոցիալական հսկողության պաշտոնական հաստատություններին» պետք է դիմել միայն ծայրահեղ իրավիճակներում: Ընդհանուր կանխարգելումը բաղկացած է «կառավարման յուրաքանչյուր մակարդակում իրականացվող կանխարգելման ընդգրկուն ծրագրերից», որոնք պետք է ներառեն՝ պետական և հասարակական կազմակերպությունների ջանքերի համակարգման մեխանիզմներ, շարունակական մոնիթորինգ և գնահատումներ, հասարակության ներգրավվածություն բազմաթիվ ծառայություններում և ծրագրերում, միջգյուղային համագործակցություն և պատանիների մասնակցություն կանխարգելման քաղաքականությանը և գործընթացներին: «Ռիադի ղեկավարող սկզբունքները» նույնպես կոչ են անում «կարգավիճակային» իրավախախտումների ապաքրեականացմանը և առաջարկում են կանխարգելիչ ծրագրերում առաջնահերթություն տալ այն երեխաներին, որոնք լքման, անուշադրության մատնվելու, շահագործման և բռնության վտանգի տակ են:

«Պեկինյան կանոնները» (Beijing Rules) ուղեցույց են պետությունների համար, թե ինչպես պաշտպանել երեխաների իրավունքները և հարգել նրանց կարիքները անչափահասների արդարադատության առանձին և մասնագիտացված համակարգերը մշակելիս: Այս փաստաթուղթն առաջին միջազգային իրավական գործիքն է, որում անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու նորմերը ներկայացված են համապարփակ և հանգամանորեն՝ հաշվի առնելով երեխայի իրավունքները և զարգացումը: Այդ Կանոններն ընդունվել է ԵԻԿ-ից առաջ, նշված է ԵԻԿ-ի նախաբանում, իսկ դրանց բազմաթիվ սկզբունքներ ներառվել են ԵԻԿ-ի բուն տեքստում:

«Կանոնները» խրախուսում է իրավական ընթացակարգերի և պաշտոնական քննության փոխարեն համայնքային ծրագրերի, ցանկացած պետական մարմնում առավելագույնս երեխայի շահերից ելնելով քննության իրականացումը, մինչև անչափահասին ազատությունից զրկելը գործի մանրակրկիտ քննությունը, անչափահասների գործերով զբաղվող անձնակազմի համար պարտադիր մասնագիտացված վերապատրաստումը, ազատությունից զրկելու դեպքում վաղաժամկետ ազատվելու հնարավորության դիտարկումը, արդյունավետ ծրագրման և քաղաքականության ձևավորման համար անհրաժեշտ հետազոտությունների կազմակերպումը և խթանումը: Կանոնների համաձայն՝ անչափահասների արդարադատության համակարգը պետք է լինի արդար և մարդկային, պետք է կարևորի երեխայի բարեկեցությունը և երաշխավորի, որ իշխանությունների արձագանքը համաչափ լինի անհատական հանգամանքներին, ինչպես նաև հանցանքի ծանրությանը: Ընդգծվում է նաև վերականգնման կարևորությունը, որին կարելի է հասնել կրթությամբ, զբաղվածության ապահովմամբ, երեխայի համար բնակարանային պայմաններ ստեղծելով, որն իրականացնելու համար պահանջվում է կամավորների, կամավորական կազմակերպությունների, տեղական կազմակերպությունների և համայնքային ռեսուրսների օժանդակությունը:

«Հավանայի կանոնները» (Havana Rules) սահմանում է այն չափորոշիչները, որոնք կիրառվում են, երբ երեխան (մինչև 18 տարեկան ցանկացած անձ) դատական, վարչական կամ այլ հանրային իշխանության մարմնի կողմից անազատության մեջ է պահվում է որևէ հաստատությունում կամ հիմնարկում (լինի քրեական, ուղղիչ, դաստիարակչական կամ պաշտպանության միջոցների կիրառման համար և անկախ այն հանգամանքից, թե ազատությունից զրկելը տեղի է ունեցել դատապարտման, հանցանք կատարելու հիմնավոր կասկածի, թե այն պատճառով, որ երեխան դիտարկվել է որպես «ռիսկային»): Բացի այդ, «Հավանայի կանոններն» ամրագրում է համընդհանուր սկզբունքները, որոնք սահմանում են այն հատուկ հանգամանքները, որոնց դեպքում երեխան կարող է զրկվել իր ազատությունից՝ ընդգծելով, որ ազատազրկումը պետք է լինի ծայրահեղ միջոց, որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցով և իրականացվի սահմանափակ և բացառիկ դեպքերում: Այն իրավիճակների համար, երբ ազատազրկումն անխուսափելի է, մանրամասն սահմանված են պահման պայմանների նվազագույն չափորոշիչներ: «Հավանայի կանոնները» ծառայում է որպես միջազգայնորեն ընդունված շրջանակ, որի նպատակն է հակազդել ազատազրկման վնասակար ազդեցությանը՝ երաշխավորելով երեխաների իրավունքների հանդեպ հարգանքը:

«Տոկիոյի կանոնների» (Tokyo Rules) նպատակն է նպաստելու քրեական արդարադատության իրականացմանը համայնքային ներգրավվածությունը, հատկապես իրավախախտների ուղղման ոլորտում, ինչպես նաև իրավախախտների մեջ զարգացնել պատասխանատվություն հասարակության հանդեպ: «Տոկիոյի կանոններն» իրացնելիս պետությունները պետք է ապահովեն իրավախախտների իրավունքների, տուժողների և հանրության անվտանգության, հանցագործությունների կանխման հարցում հասարակության մտահոգության միջև համապատասխան հավասարակշռությունը: Հանցանքի բնույթին և ծանրությանը, հանցագործի անհատականությանը, նրան բնութագրող հատկություններին և հասարակության պաշտպանությանը համապատասխան առավելագույն ճկունություն ապահովելու, ինչպես նաև ազատությունից «ոչ անհրաժեշտ» զրկումից խուսափելու համար քրեական արդարադատության համակարգը պետք է ապահովի ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներ՝ սկսած մինչդատական վարույթից մինչև հետ–դատապարտման փուլ:

Իրավական համակարգին համապատասխան՝ ոստիկանությունը, դատախազությունը կամ վարույթն իրականացնող այլ մարմինները պետք է լիազորված լինեն ազատ արձակելու մեղադրյալին, եթե նրանց կարծիքով գործը շարունակելու անհրաժեշտություն չկա՝ ելնելով հասարակության պաշտպանության, հանցագործությունների կանխման կամ օրենքի նկատմամբ հարգանք ներշնչելու և տուժողի իրավունքները պաշտպանելու նկատառումներից:

«Վիեննայի ղեկավարող սկզբունքները» (Vienna Guidelines) պարունակում է կառավարություններից ստացված տեղեկատվության հիման վրա պատրաստված տարբեր երկրներում

անչափահասների արդարադատության իրականացման համակարգերի նկարագրություն, այդ թվում՝ անչափահասների արդարադատության վերաբերյալ միջազգային կանոնների և չափորոշիչների արդյունավետ իրացմանն օժանդակելու համար գործողությունների ազգային ծրագրերը մշակելիս կառավարությունների ներգրավվածության մասին: Փաստաթուղթն ունի «Քրեական արդարադատության համակարգում երեխաներին առնչվող գործողությունների ուղեցույց սկզբունքներ» հավելված, որը փորձագետները ստեղծել են 1997 թ. փետրվարին Վիեննայում կայացած հանդիպման ընթացքում: Գործողությունների ծրագրի այս նախագիծը ներկայացնում է ընդգրկուն միջոցներ, որոնք պետք է ձեռնարկել անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման արդյունավետ գործող համակարգ ստեղծելու նպատակով՝ համաձայն ԵԻԿ-ի, «Ռիադի ղեկավարող սկզբունքների», «Պեկինյան կանոնների» և «Հավանայի կանոնների»:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրեական հետապնդման ենթարկվող անչափահասների նկատմամբ օրենսդրական բազայի ներմուծումը, որը ներառում է վաղաժամ միջամտություն, վերականգնողական արդարադատություն և բազմակողմանի մոտեցումներ, խթանում է անչափահասների արդարադատության բարելավմանը և կրճատում անչափահասների մասնակցությամբ իրավախախտումների թիվը[10]: Այս գործընթացը կարող է առավել արդյունավետ իրականացվել, եթե ուշադրությունը կենտրոնացվի քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներին և վերականգնմանը՝ առավել հաճախ կիրառելով համայնքային ներգործության միջոցները, ինչպես նաև իրավախախտ պատանիների հետ աշխատելու նախաձեռնություններին օժանդակելով: Կարևոր է նաև անչափահասների իրավախախտումների նվազման գործում խրախուսել ընտանիքների ներգրավումը և մասնակցությունը:

Միջազգային չափորոշիչներով պահանջվում են իրավախախտ անչափահասների նկատմամբ միջոցներ ձեռնարկել՝ առանց դատաքննության դիմելու՝ մարդու իրավունքների լիակատար պաշտպանության և իրավական երաշխիքների պահպանմամբ[11]: Հաշվի առնելով այն փաստը, որ անչափահաս իրավախախտների մեծ մասը կատարում է միայն ոչ մեծ ծանրության հանցանք, պետք է արմատավորվի անչափահասներին քրեական արդարադատության համակարգից հեռացնելու և այլընտրանքային (սոցիալական) ծառայություններին դիմելու (այսինքն՝ քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով) պրակտիկա, որը կարող է և պետք է կիրառվի դեպքերի մեծամասնության դեպքում[12]:

Անչափահաս իրավախախտների, ներառյալ նախկինում դատապարտվածների նկատմամբ պետք է այնպիսի վերաբերմունք որդեգրել, որը կօգնի նրանց վերաինտեգրվելուն: Անչափահասի ձերբակալումը, կալանավորումը կամ ազատազրկումը պետք է օգտագործվեն միայն որպես ծայրահեղ միջոցներ: Ուստի անհրաժեշտ է մշակել և իրականացնել անչափահասների արդարադատության ընդգրկուն քաղաքականության մաս հանդիսացող բազմազան միջոցառումներ, որոնք կապահովեն հանցանք կատարած անչափահասների բարեկեցությունը և համարժեք կլինեն հանցագործության կատարման հանգամանքներին և արարքի ծանրությանը: Այդ միջոցառումները պետք է ընդգրկեն խնամքը, նախազգուշացումները, խնամակալությունը, վարքագծի նկատմամբ հսկողությունը, պրոբացիան, խորհրդատվությունը, դաստիարակչական և վերապատրաստման ծրագրերը և հատուկ հաստատություններում տեղավորելու այլընտրանքային միջոցների կիրառումը[13]:

Հանցագործության կատարման մեջ մեղադրվող կամ դատապարտված անչափահասների նկատմամբ, պետական մարմինների կողմից կարող են իրականացվել երկու կարգի միջամտություններ՝ առանց դատաքննության դիմելու միջոցառումներ և միջոցառումներ դատաքննության համատեքստում[14]: Դրանք առանձին կդիտարկվեն ներքոհիշյալ ենթաբաժիններում:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ մեղադրյալ անչափահասների մեծ մասը, և նույնիսկ նրանք, ովքեր իրականում հանցագործություն են կատարել, հետ կկանգնեն այն վարքագծից, որի պատճառով նրանք խախտել են օրենքը, առանց ինստիտուցիոնալ միջամտությունների[15]:

10 Mark W. Lipsey; David B. Wilson; Lynn Cothern, Effective Intervention for Serious Juvenile Defendants.

11 ԵԻԿ, 40(3)-րդ հոդված:

12 Երեխաների և անչափահասների արդարադատություն: Կատարելագործման առաջարկություններ: Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների հանձնակատար, կարելի է գտնել հետևյալ կայքում՝ https://wcd.coe.int/wcd/com.instranet.InstraServlet?Index=no&command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=1370644&SecMode=1&DocId=1417380&Usage=2

13 ԵԻԿ, 40(4)-րդ հոդված:

14 Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս երեխաների իրավունքների մասին թիվ 10 Ընդհանուր մեկնաբանությունը (2007), պարբերություն 22:

15 Օրինակ՝ Ավստրիայում արձանագրվել է անչափահասներին հատուկ հաստատություններում տեղավորելու ամենացածր ցուցանիշը, ինչպես նաև կրկնահանցագործության շատ ցածր մակարդակ:

Ինստիտուցիոնալ միջամտությանը դիմում են այն դեպքերում, երբ հավանական է հանցանքի կրկնությունը. դա լինում է սակավաթիվ չափահասների դեպքում, որոնք համակցությամբ հանցագործություններ են կատարել կամ նախկինում դատապարտվել են: Օրինակ՝ դիտորդներն արձանագրել են ընդամենը 12% կրկնահանցագործություն:

3.1 ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ (DIVERSION)

Քրեական պատասխանատվությունը փոխարինելով այլընտրանքային միջոցներով՝ անչափահաս իրավախախտներին դատական ընթացակարգերից հետ են պահում և հնարավորություն ընձեռում ոչ դատական մարմիններին զբաղվել նրանցով՝ դրանով խուսափելով ֆորմալ դատական քննության բացասական ազդեցությունից և քրեական անցյալ ունենալուց՝ նվազեցնելով հետագա իրավախախտումների հավանականությունը: Քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով նաև վերականգնողական արդարադատության կարևոր բաղկացուցիչներից է, որը հոգ է տանում այն անձանց մասին, որոնք տուժել են ենթադրյալ հանցագործությունից: Դրա միջոցով բողոք ներկայացնող անձին հնարավորություն է ընձեռվում անմիջականորեն խոսել անչափահասի հետ նրա պատճառած վնասների և վնասվածքների մասին: Որոշ դեպքերում կարող է տեղի ունենալ մեդիացիա, կամ կողմերը կարող են համաձայնության գալ այն հարցի շուրջ, թե անչափահասն ինչպես կարող է հատուցել տուժողին կամ ինչ-որ դրական բան անել հասարակության համար, ինչպես, օրինակ՝ տուժողից ներողություն խնդրել անօրինական վարքագիծ դրսևորելու համար, ֆինանսական կամ այլ հատուցումներ կատարել կամ անչափահասի ընտանիքի և հասարակության ուժերի ներգրավմամբ օգնել կրկնահանցագործության կանխմանը:

Քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով մեղմում է ազատազրկումը ուղեկցող ստիգմատիզացիան, բռնությունը, ստորացումը և սոցիալական խզումը: Այն հնարավորություն է տալիս խուսափելու անչափահասների պիտակավորումից և նրանց քրեական անցյալն ամրապնդելուց՝ մեկուսացնելով նրանց հանցանք կատարածների շրջանում, ինչպես նաև զերծ մնալ անչափահասների վերաինտեգրվելու և հետագա զարգացման հնարավորությունների սահմանափակումից:

Դատապարտված անչափահասներին պատժի ենթարկելը (հատկապես ազատազրկման ձևով) ձևավորում է «հանցագործի» ինքնություն: Նրանք սովորում են հանցագործության հնարքներ, խոսում են հանցագործների ժարգոնով և ընտելանում են հանցագործների մշակույթին, որն ամենայն հավանականությամբ կամրապնդի անչափահասի սեփական ընկալումը իբրև հանցագործի: Երբ նրանք մեկ անգամ իրենց ընկալում են որպես հանցագործ, ինչպես նաև հանցագործ են ճանաչվում լայն հասարակության կողմից, նրանց համար ավելի դժվար է լինում հետագայում փոխվել և հարմարվել դպրոցական և ընտանեկան կյանքին:

Հետևաբար բոլոր հնարավոր դեպքերում անչափահասներին պետք է հեռու պահել դատական ընթացակարգերից և ազատությունից զրկելուց այն դեպքերում, երբ հնարավոր է[16]: Ավելին՝ անչափահասի շահերից չի բխում նախկինում դատապարտվածներին զրկել քրեական պատասխանատվության փոխարինման այլընտրանքային միջոցներից: Նման մոտեցումը կլիներ չափազանց նեղ: Ամեն դեպքում պետք է որդեգրել անհատական մոտեցումը և անչափահասի անձի և նրան վերագրվող հանցանքի վերլուծության հիման վրա նրա նկատմամբ կիրառել նվազագույն սահմանափակող միջոցը:

Մյուս կողմից՝ քրեական պատասխանատվությունը այլընտրանքային միջոցներով փոխարինելուց շահում է նաև ամբողջ հասարակությունը: Ազատելով հասարակությանը դատավարությունների անցկացման ծախսերից և դատապարտման ստիգմատիզացիոն հետևանքներից,

16 Petty, C. and Brown, M. (eds), Justice for Children, 1998, p.12.

քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինման ենթարկված անձանց հնարավորություն է տրվում ինտեգրման միջոցով, այլ ոչ թե սոցիալական մեկուսացմամբ, հատուցել իրենց համայնքներին:

Նույն կերպ, ազատազրկման սոցիալական ծախսերի վերլուծությունները վկայում են, որ հասարակությունը բարձր գին է վճարում ուղղիչ հիմնարկների ծախսերի հատուցման համար, ինչպես նաև բարձր սոցիալական գին, երբ բանտում ստիգմատիզացիան և սոցիալականացումը հանգեցնում են ապագայում կրկնվող կալանավորումների և դատապարտումների:

ԵԻԿ-ով սահմանվում են որոշակի պայմաններ, որոնք պետք է բավարարվեն քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինվելու դեպքում: Դրանցից առավել կարևոր պայմաններն են.

1. Քրեական պատասխանատվությունը պետք է փոխարինվի այլընտրանքային միջոցներով միայն այն դեպքում, երբ գոյություն ունեն արժանահավատ ապացույցներ, որ անչափահասը կատարել է ենթադրյալ հանցանքը, որ նա ազատորեն և կամավոր խոստովանում է իր մեղքը, և որ այդ խոստովանությունը ստանալու համար չեն կիրառվել ահաբեկման կամ ճնշման միջոցներ, և, ի վերջո, որ այդ մեղքի ընդունումը չի օգտագործվելու անչափահասի դեմ հետագա որևէ իրավական ընթացակարգի շրջանակում[17]:
2. Օրենքը պետք է պարունակի հատուկ դրույթներ այն մասին, թե ո՛ր դեպքերում է հնարավոր քրեական պատասխանատվությունը փոխարինել այլընտրանքային միջոցներով: Ոստիկանության, դատախազության և/կամ այլ հաստատությունների լիազորությունները այս դեպքերում պետք է վերանայվեն և կարգավորվեն, որպեսզի պաշտպանեն անչափահասին խտրականությունից և ազատազրկումից հետո բարձրացնեն հասարակությանը նրա վերաինտեգրման հավանականությունը: ԵԻԿ-ի և միջազգային չափորոշիչների համաձայն՝ քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով պետք է քննարկվի բոլոր դեպքերի համար: Ավելին, պաշտպանության կողմին պետք է հանձնարարել անչափահասին հարմարեցված քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինման ոչ պաշտոնական տարբերակներ ներկայացնել, քանի որ պաշտպաններն անչափահասին ավելի լավ են ճանաչում, քան արդարադատության այլ ներկայացուցիչներ՝ շնորհիվ հաճախորդների հետ կոնֆիդենցիալ հարաբերությունների: Նման փոխհարաբերությունների արդյունքում պաշտպանության կողմից առաջարկվող տեղեկատվությունը կլինի արժեքավոր, որը ոչ թե կկրկնի, այլ կլրացնի արդարադատության այլ դերակատարների գործողությունները: Բացի այդ, անձն ավելի հակված է կատարելու այն գործողությունները, որոնց ընտրությանն ինքը մասնակցել է, քան ուրիշների պարտադրած գործողությունները: Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով կիրառելու համար պետք է հստակորեն սահմանվեն չափանիշներ և գործոններ:
3. Այն դեպքերում, երբ իրավասու մարմիններն առաջարկում են անչափահասի նկատմամբ քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներ, երեխային պետք է տրվի այդ միջոցի ընտրության համապատասխանության և նպատակահարմարության վերաբերյալ իրավական կամ այլ աջակցություն: (Պաշտպանության կողմը պետք է աշխատի նույն հետևողականությամբ, ինչ ոստիկանությունը/դատախազությունը, որպեսզի մշակվի և ընտրվի յուրաքանչյուր երեխայի անհատական հանգամանքներին համապատասխան այլընտրանքային միջոց):

17 ԵԻԿ-ի այս դրույթը խնդրահարույց է թվում: Եթե անչափահասը չի կատարել հանցագործություն, որում մեղադրվում է, ապա նրա հանդեպ չի կարող կիրառվել քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով, որի հետևանքով անմեղ անչափահասը կարող է կալանավորվել, իսկ մեղավորը՝ ազատ արձակվել: Փոխարինման էության այսպիսի ընկալումը կարող է արատավոր պրակտիկա արմատավորել, երբ բոլոր անչափահաս մեղադրյալները խոստովանեն իրենց հանցանքը՝ փոխարինման «արտոնյալ» հնարավորությունից օգտվելու համար:

4. Երեխայի նկատմամբ քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցների կիրառման դեպքում գործը պետք է վերջնականորեն դադարեցվի, իսկ բոլոր քրեական գրանցումները՝ ոչնչացվեն:

Ծրագիրն իրականացնելու ընթացքում բազմաթիվ դեպքեր են դիտարկվել, երբ հանցանք կատարած անչափահասին պետք է տրվեր քրեական պատասխանատվությունն այլընտրանքային միջոցներով փոխարինելու հնարավորություն, սակայն նրա գործն ուղարկվել էր դատարան: Այս առումով Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտը թույլ է և անկատար անչափահասների գործերով օպերատիվ և ոչ խտրական քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով իրականացնելու հարցում: Դատելով պոզիտիվիստական արդարադատության փորձից՝ արդարադատության գործընթացում ներգրավված մարմինները կաշկանդված են իրենց գործողություններում, նրանք կարող են կատարել միայն այն, ինչ ամրագրված է օրենքում, և ոչ թե գործել սեփական հայեցողությամբ կամ ղեկավարվել ընդհանուր սկզբունքներով: Այս համատեքստում ոստիկանության, դատախազության և դատավորների կողմից քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով իրականացնելու համար հատուկ ցուցումների բացակայությունը արգելք է հանդիսանում, սակայն օրենքով ոչ մի դրույթով ուղղակիորեն չի արգելվում դիտարկել այլընտրանքային լուծումների լայն հնարավորություններ:

ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը հնարավորություն են ընձեռում որոշ դեպքերում հանցանք կատարողին ազատել քրեական պատասխանատվությունից: ՔԴՕ 37-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել ՔՕ 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում: Առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը[18] կամ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց: Սույն հոդվածները կիրառվում են՝ առանց հաշվի առնելու մեղադրյալի տարիքը: Սակայն պետք է նշել, որ քրեական պատասխանատվությունից ազատումը վերաբերում է հանցագործությունների որոշակի տեսակին, օրինակ՝ ոչ մեծ ծանրության հանցագործություններ՝ ըստ 72-74-րդ հոդվածների, և միջին ծանրության հանցագործություններ՝ ըստ 72-րդ և 74-րդ հոդվածների:

Մյուս կողմից՝ վերոհիշյալ դրույթներում օգտագործված եզրերը, որոնք նախատեսում են անչափահաս հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն, ընդհանուր բնույթի են: ՔՕ-ում օգտագործված այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «իրադրության փոփոխում», «գործուն զղջում», ենթադրում են որոշակի հայեցողություն, մինչդեռ դատախազները հազվադեպ են առավել մեղմ մոտեցում դրսևորում առանց հստակ չափորոշիչների և հրահանգների առկայության:

Առանց հստակորեն ձևակերպված չափորոշիչների և հրահանգների՝ ոստիկանության և դատախազության համար շատ ավելի դյուրին է չդիմել որևէ այլընտրանքային միջոցի: Նմանապես, այն դեպքերում, երբ դատախազները չեն նախաձեռնում այլընտրանքների կիրառում, դատավորների համար նախատեսված հստակ ցուցումների բացակայության պարագայում դատավորները հակված են վարելու ստանդարտ դատավարություններ և կիրառել ընդհանուր պատժի քաղաքականություն՝ անտեսելով ամբաստանյալի տարիքը:

Երբ վերոհիշյալ պայմանները բավարարված են, դատախազը կամ դատավորը, կիրառելով ՔԴՕ-ի 37-րդ հոդվածը, կարող են կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական

18 Համաձայն ՔՕ 73-րդ հոդվածի՝ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը:

հետապնդումը: Այնուամենայնիվ, նրանցից ամենևին չի պահանջվում մեղադրյալի հանդեպ կիրառել դաստիարակչական կամ այլ միջոցներ: Անչափահաս մեղադրյալները պարզապես ազատվում են քրեական պատասխանատվությունից:

ՔՕ-ի 91-րդ հոդվածը պարունակում է անչափահասներին վերաբերող հատուկ դրույթ, ըստ որի դատարանը իր հայեցողությամբ կարող է առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

Այս «դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները»՝ նախազգուշացումը, ծնողական խնամակալությունը, պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը, վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը կամ անչափահասների հատուկ ուսում-նադաստիարակչական կամ «բժշկական-դաստիարակչական» հաստատությունում տեղավորելը պատժամիջոց չեն համարվում: Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները չեն կարող վեց ամիսը գերազանցել: Եթե անչափահասը չի ենթարկվում կիրառված միջոցներին, նշանակված միջոցը կարող է վերացվել և նրա նկատմամբ կարող է պատիժ նշանակվել:

Եթե անչափահասը պարբերաբար խուսափում է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներից, ապա տեղական ինքնակառավարման մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ նյութերն ուղարկվում են դատարան՝ նշանակված միջոցը վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Նոր հանցանք կատարելիս անչափահասը քրեական պատասխանատվության ենթակա չէ նախկին հանցագործության համար, եթե վերջինիս կապակցությամբ նրա նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց: ՔՕ-ում կա նաև այնպիսի դրույթ, ըստ որի կարող է նշանակվել նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ[19]:

Սակայն ի տարբերություն ՔԴՕ 37-րդ հոդվածի, ըստ որի անչափահասն ուղղակիորեն ազատվում է քրեական պատասխանատվությունից, 91-րդ հոդվածն ավելի հեռու է գնում, և 91-րդ հոդվածին համապատասխան՝ դատարաններին (բայց ոչ դատախազին կամ քննիչին) իրավունք է վերապահվում դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառել: Բացի այդ, 91-րդ հոդվածը կարող է կիրառվել այն դեպքերում, երբ մինչդատական վարույթն ավարտվել է, և քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացության հետ միասին ուղարկվել է դատարան վերջնական որոշում կայացնելու համար: Հետևաբար, այս դրույթը հազիվ թե համարվի քրեական պատասխանատվության փոխարինում այլընտրանքային միջոցներով՝ առանց դատական ընթացակարգերի դիմելու միջամտությունների համատեքստում, քանի որ քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինման գործընթացը՝ ըստ 91-րդ հոդվածի, կարելի է կիրառել միայն այն դեպքում, երբ դատական քննությունն արդեն սկսվել է, և ազատման լիազորությունները չեն վերապահվում դատախազներին կամ քննիչներին գործի մինչդատական փուլում: Այս միջոցն ավելի համապատասխանում է դատական գործընթացների շրջանակում միջամտությանը և որպես այդպիսին ավելի մանրամասն կքննարկվի հաջորդ գլխում:

Քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինման օրենսդրական հիմքերը չեն բավարարում բազմաթիվ պատճառներով.

1. ՀՀ օրենսդրությամբ հանցանք կատարող անչափահասը որակապես չի տարբերվում չափահաս հանցագործներից, այդպիսով գոյություն չունի անչափահասների արդարադատության այն համակարգը, որն այլ նպատակներ է հետապնդում, քան չափահասների հանցագործությունների բացահայտման և պատժամիջոցների համակարգը:
2. Ոչ պատժիչ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները հնարավոր է կիրառել միայն դատական քննության փուլում՝ հակասելով քրեական պատասխանատվության

19 ՔՕ, հոդված 64:

այլընտրանքային միջոցներով փոխարինման առաջնային նպատակներից մեկին՝ լուծել իրավախախտ անչափահասների գործերը՝ առանց դատական ընթացակարգի դիմելու:

3. ՀՀ օրենսդրության համատեքստում, տուժողի և հանցագործի միջև հաշտեցումը (եթե հաջողվում է այն իրականացնել) պետք է քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք ծառայի՝ առանց դիմելու այլընտրանքային միջոցներին: Հետևաբար, փաստորեն տուժողի և հանցագործի միջև հաշտեցումը ծառայում է քրեական պատասխանատվությունից ազատելու ֆորմալ պայման: Այնուամենայնիվ, մեղադրյալի ակնհայտ հանցավոր վարքագծի դեպքում միայն հաշտեցումն ինքնին չի վերացնում հանցագործության կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները:
4. Տուժողի և հանցագործի միջև հաշտեցմանը հաջորդող քրեական պատասխանատվությունից ազատումը կարող է կիրառվել և՛ չափահասների, և՛ անչափահասների նկատմամբ միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում: Ներկայումս գործող համակարգը հավասարեցնում է չափահասների և անչափահասների կարիքները և շահերը՝ առանց կարգավորման առանձնահատկությունների:
5. Ոստիկանությունից գործերը երեխաների աջակցման կենտրոններ ուղարկելը չունի իրավական հիմքեր քրեական դատավարության օրենսդրության մեջ: Թեև իրականում Հայաստանում գործում են վեց համայնքային արդարադատության կենտրոններ20, չկա օրենք, որը պարունակեր դրույթներ, թե ո՛ր դեպքերում է հնարավոր կիրառել քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով, ինչպես նաև ոստիկանության, դատախազների և/կամ այլ հաստատությունների՝ երեխային խտրականությունից պաշտպանելու համար որոշումներ կայացնելու լիազորությունների վերաբերյալ:
6. Քրեական դատավարության վաղ փուլերում կիրառվող միջոցների ցուցակը խիստ սահմանափակ է: Ի տարբերություն դրան՝ բազմաթիվ երկրներում ստեղծվել են բազմաթիվ համայնքային ծրագրեր, ինչպես, օրինակ՝ համայնքային ծառայություն, ինտենսիվ դաստիարակչական ծրագրեր, ընտանիքների հետ խորհրդակցություններ21 և վերականգնողական արդարադատության այլ եղանակներ, ներառյալ՝ վնասների վերականգնում և տուժողների փոխհատուցում:

Հետևաբար, ոստիկանությունը և արդարադատություն իրականացնող մարմինները չունեն հայեցողություն, ինչպես նաև չկան ընթացակարգեր և ծառայություններ, որոնք հնարավորություն կտան երեխաներին հեռու պահել պաշտոնական քրեական արդարադատության համակարգից: Թեպետ որոշ դեպքերում քրեական պատասխանատվությունը կարող է փոխարինվել այլընտրանքային միջոցներով, սակայն բացակայում են համակարգվածությունը և իրավական հիմքերը՝ օգնել երեխային խուսափելու քրեական օրենսդրությունը կրկին խախտելուց, ինչպես նաև պահանջվում են անվտանգության միջոցներ կոռուպցիան բացառելու համար:

---

20 Կենտրոնները ստեղծվել են PH International կազմակերպության կողմից՝ Հանցագործությունների կանխարգելման ազգային ծրագրին համապատասխան: Կենտրոններն ունեն երկու նպատակ՝ և՛ հանցագործությունների կանխարգելում, և՛ քրեական պատասխանատվության փոխարինում այլընտրանքային միջոցներով: Որոշ շահառուների տարիքը 14 տարի է կամ ավելի բարձր, ովքեր ուղեգրվել են ոստիկանության բացահայտած հանցանքների շրջանակներում: Ուղեգրումը կատարվում է նախքան գործը դատախազություն ուղարկելը: Ուղեգրումից հետո անչափահասը և ծնող(ներ)ը պետք է մասնակցության վերաբերյալ համաձայնություն ստորագրեն: Մասնակցության տևողությունը կախված է ձեռք բերված հաջողություններից, սովորաբար՝ երկուսից հինգ ամիս: Մատուցվող ծառայություններն ընդգրկում են տուժողի և հանցագործի միջև հաշտեցման գործընթացը, արհեստներ (հատկապես խեցեգործություն), համակարգչային կրթություն, վերականգնողական գործունեություն և ոչ պաշտոնական խորհրդատվություն: Տուժողի մասնակցության համաձայնությունը հաշտեցման գործընթացում չի հանդիսանում ուղեգրման նախապայման: Տուժողի մասնակցությունը հայցվում է ուղեգրումն իրականացնելուց հետո, իսկ ծառայությունները տրամադրվում են, եթե նույնիսկ տուժողը հրաժարվում է մասնակցելուց:

21 Ընտանիքների հետ խորհրդակցելը լայնորեն կիրառվում է ոստիկանության կողմից քրեական պատասխանատվությունը այլընտրանքային միջոցներով փոխարինելիս (police diversion) և ներառում է անչափահասի և նրա ընտանիքի համատեղ ջանքերով հանցավոր վարքագծի հիմքում ընկած խնդիրների վերհանումը և լուծումը:

3.2 ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Երբ դատական գործ է սկսվում, անչափահաս իրավախախտների արդարադատության համակարգը պետք է բավարար հնարավորություններ ստեղծի անչափահասների հետ աշխատելու համար՝ օգտագործելով սոցիալական և/կամ դաստիարակչական միջոցները, և խստորեն սահմանափակի ազատությունից զրկման կիրառումը, մասնավորապես՝ նախնական կալանքը՝ դրանք դիտարկելով որպես ծայրահեղ միջոց:

ԵԻԿ-ի 37(բ)-րդ հոդվածի համաձայն՝ կալանքը պետք է գործադրվի որպես ծայրահեղ միջոց և որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցով: Սա նշանակում է, որ պետական մարմինները պետք է ունենան պրոբացիայի լավ վերապատրաստված ծառայություն, որը հնարավորություն կտա առավելագույնս և արդյունավետ կերպով օգտագործել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են հսկողության հանձնում, պրոբացիա, համայնքային դիտարկում կամ ցերեկային կենտրոններ և վաղաժամ ազատելու հնարավորություն[22]:

Մյուս կողմից՝ համաձայն ԵԻԿ-ի 40(1)-րդ հոդվածի՝ վերաինտեգրումը պահանջում է, որ չի կարող ձեռնարկվել որևէ քայլ, որը կխոչընդոտի երեխայի լիակատար մասնակցությունը իր համայնքում, ինչպես, օրինակ՝ ստիգմատիզացիան, սոցիալական մեկուսացումը կամ երեխայի վերաբերյալ բացասական հրապարակայնությունը, նրա ենթադրյալ հանցանքը կամ քրեական անցյալը: Իրավախախտ երեխայի հետ պետք է վարվել այնպիսի եղանակով, ինչը պահանջվում է հասարակությունում նրա վերաինտեգրման համար, բոլոր գործողությունները պետք է օժանդակեն անչափահասին դառնալ հասարակության լիարժեք, ստեղծարար անդամ:

ՀՀ օրենսդրությունում պաշտոնապես առկա են այլընտրանքային միջոցներ: ՔԴՕ 134-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրյալի հանդեպ կարող են կիրառվել հետևյալ խափանման միջոցները. 1) կալանավորումը, 2) գրավը, 3) (գրավոր պարտավորություն) ստորագրություն՝ չհեռանալու մասին, 4) անձնական երաշխավորությունը, 5) կազմակերպության երաշխավորությունը, 6) հսկողության հանձնելը, 7) հրամանատարության հսկողության հանձնելը:

Ընդհանրապես, նախնական կալանավորումը կարող է կիրառվել միայն մեկ տարուց ավելի ազատազրկման պատժի հանցանքի համար, կամ եթե բավարար պատճառներ կան կասկածելու, որ մեղադրյալը կարող է թաքնվել արդարադատությունից կամ այլ հանցանք գործել: ՔԴՕ 442-րդ հոդվածը պարունակում է lex specialis անչափահասների համար, որը սահմանում է, որ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում:

Հակառակը, ըստ միջազգային չափանիշների՝ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցների կամ դատապարտվելուց հետո միջոցների կիրառման սահմանափակում չի թույլատրվում[23]: Մինչև մեկ տարի ազատազրկման պատժվող հանցագործությունների վերաբերյալ գործերով այլընտրանքային միջոցների կիրառումը տարբեր տեսանկյուններից խախտում է անչափահասների իրավունքները. 1) ոչ մի օրենք չպետք է խոչընդոտի անչափահասների կալանավորման տարբերակներ դիտարկելը, (2) հանցանքի վրա հիմնված վերլուծությունը համազոր է մեղադրյալի մեղավորության կանխավարկածին՝ ի հակադրություն ռիսկերի վրա հիմնված վերլուծության, որը քննում է հանցանք կատարողի կողմից արդարադատությունից խուսափելու կամ վկաներին ահաբեկելու հավանականությունը, և (3) 442-րդ հոդվածի շարադրանքը (որը սահմանում է, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառել

22 Թիվ 10 ընդհանուր մեկնաբանություն:

23 Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, հոդված 5, «Պացուրիան ընդդեմ Վրաստանի», 30779/04 (Sect. 2) (անգլ.) – (6.11.07):

թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում) մեկնաբանվում է, որ կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառումը ինքնաբերաբար տեղի է ունենում՝ ելնելով հանցանքի ծանրությունից:

Անչափահաս հանցագործների նկատմամբ կալանավորմանը՝ որպես խափանման միջոցի, լրացուցիչ այլընտրանքը ներառում է ազատ արձակում՝ ծնողների կամ խնամակալների հսկողությանը հանձնելով: Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի հսկողությունն իրականացվում է ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի կողմից, որտեղ պահվում է անչափահասը: Վերոհիշյալ անձինք պետք է ապահովեն անչափահասի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը[24]: Ծնողները, խնամակալները կամ հոգաբարձուներն իրավունք ունեն հրաժարվել անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ հսկողություն իրականացնելուց: Այնուամենայնիվ, այս դրույթը նույնպես խնդրահարույց է, քանի որ կալանավորումը՝ ի պատասխան ծնողների անուշադրության պատժում է անչափահասին ծնողի վարքագծի համար, այլ ոչ թե ընտրում խափանման պատշաճ տարբերակներ:

Քրեական օրենսգրքի 5-րդ բաժինը սահմանում է անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները[25]: ՔՕ 85-րդ և 86-րդ հոդվածներում նշվում են պատժի այն տեսակները, որոնք կարող են նշանակվել անչափահաս իրավախախտների նկատմամբ: Դրանք են՝ տուգանքը, հանրային աշխատանքները, կալանքը և որոշակի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև ընդգծում է քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառումը[26]:

Այս կարգավորումը բավականին նեղ է և անհամարժեք, որը պատշաճ կերպով հաշվի չի առնում պատանիների և երեխաների առանձնահատկությունները. անչափահասները դժվար թե ի վիճակի լինեն տուգանք մուծել, իսկ նրանց աշխատանքը կարող է հակասել Աշխատանքային օրենսգրքի պահանջներին, որի արդյունքում նվազեցվում են անչափահասների նկատմամբ այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունները՝ չափահասների համեմատությամբ:

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս ազատել անչափահասներին քրեական պատասխանատվությունից՝ կիրառելով դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

ՔՕ 91-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ[27]:

---

24 ՔԴՕ, հոդված 148:

25 ՔՕ 62-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարելու պահին հանցագործի անչափահաս լինելը մեղմացնող հանգամանք է համարվում:

26 Տուգանքը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: Տուգանքը նշանակվում է պատիժ նշանակելու պահին ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից հինգհարյուրապատիկի չափով (ՔՕ, հոդված 87):

Կալանքը տասնհինգ օրից երկու ամիս ժամկետով նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին լրացած անչափահասի նկատմամբ (ՔՕ, հոդված 88):

Ոչ մեծ ծանրության հանցագործության համար անչափահասը կարող է ազատազրկվել առավելագույնը մեկ տարի ժամկետով, միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, մինչև տասնվեց տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը յոթ տարի ժամկետով, տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը տասը տարի ժամկետով (ՔՕ, հոդված 89):

Անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկություններ, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը (ՔՕ, հոդված 90):

27 ՔԴՕ 443-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, դատավճիռ կայացնելիս, գալով այն եզրակացության, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, կարող է անչափահասին ազատել պատժից և նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները.

1. նախազգուշացում, որն անչափահասի արարքով պատճառած վնասի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված հանցանքների կրկնակի կատարման հետևանքների պարզաբանումն է անչափահասին:
2. ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով.
3. պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում կամ.
4. ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը վեց ամիս ժամկետով:

Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ[28]:

Անչափահասը կարող է նաև ազատվել քրեական պատասխանատվությունից հայցային վաղեմության ժամկետը լրանալու պատճառով:

Մյուս կողմից՝ ՔՕ 70-րդ հոդվածը սահմանում է պատիժը պայմանականորեն չկիրառելու ընդհանուր դրույթները.

Եթե դատարանը, հանրային աշխատանքների, ուղղիչ աշխատանքների, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցագործի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ մեկից հինգ տարի ժամկետով:

Ըստ ԵԻԿ-ի՝ երեխայի հանդեպ միշտ նրան ազատ արձակելու գաղափարը դիտարկելու, առավելագույն ցածր սահմանափակող միջոցներ կիրառելու, սահմանափակումները իբրև «ծայրահեղ» միջոց ընկալելու և դրանց համար որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոց նշանակելու իմաստն այն է, որ անչափահասի հանդեպ միշտ պետք է նախատեսել առանց կալա-

---

ՔՕ 93-րդ հոդվածի համաձայն՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է պատժից ազատվել, եթե դատարանը գտնի, որ պատժի նպատակներին կարելի է հասնել նրան անչափահասների հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով: Հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելը նշանակվում է առավելագույնը երեք տարի ժամկետով: Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասում նշված հաստատություններում գտնվելը կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե դատարանը ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատության ղեկավարի միջնորդությամբ գտնի, որ անչափահասը տվյալ միջոցը հետագա կրելու կարիքը չունի:

Կարող են նաև կիրառվել այլընտրանքային այլ միջոցներ: Օրինակ՝ ըստ ՔՕ 94-րդ հոդվածի՝ անչափահաս տարիքում հանցանք կատարած և ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը.

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը կամ.

3) առանձնապես ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը:

28 ՔՕ, հոդված 91:

նավորման պատժից ազատման հնարավորությունը, որը կարող է նշանակվել յուրաքանչյուր անչափահասին անհատական քննություն անցկացնելուց հետո:

Այնուհանդերձ, մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ իրականում կալանավորումը իբրև խափանման միջոց և պատժատեսակ լայնորեն կիրառվում է՝ հակասելով միջազգային չափանիշներին, և չեն կիրառվում այլընտրանքային, նվազ միջամտող միջոցներ: Չնայած այլընտրանքներին՝ անչափահասի հանդեպ կալանավորումը կամ ազատազրկումը որպես «ծայրահեղ» միջոց և որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցով չի նշանակվում:

Անչափահասների արդարադատությանը վերաբերող բոլոր ընդհանուր սկզբունքները ներառված են Քրեական դատավարության և Քրեական օրենսգրքերում և տեսականորեն կրկնում են միջազգային չափանիշները, բայց գործնականում չեն կիրառվում, որի հետևանքով երեխաների ազատության իրավունքի ավելի քիչ սահմանափակման հայեցողական հնարավորությունները լայնորեն չեն կիրառվում՝ հատուկ հրահանգների, ուղեցույցների և վերապատրաստման դասընթացների բացակայության պատճառով:

Մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ մոնիթորինգի ենթարկված գործերի 1/4 (25%) դեպքերում որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը: Այդ գործերի 6%-ում գրավը նշանակվել է որպես այլընտրանքային միջոց: Խափանման միջոցների կիրառումը ներկայացված է 5-րդ գծապատկերում:



Գծապատկեր 5. Խափանման միջոցների կիրառումը

Ստորև ներկայացված աղյուսակում տրվում է անչափահասների և չափահասների մասնակցությամբ հանցանքներում ներգրավված անչափահասների և չափահասների հանդեպ կիրառվող խափանման միջոցների համեմատությունը:

Նշանակված խափանման միջոցը	Ամբաստանյալի տարիքը		Ընդամենը
	անչափահաս	չափահաս	
Կալանավորում	24,5%	52,2%	33,3%
Գրավ	6,1%	0%	4,2%
Ստորագրություն չհեռանալու մասին	8,2%	47,8%	20,8%
Անձնական երաշխիքներ	2,0%	0%	1,4%
Հսկողության տակ վերցնել	59,2%	0%	40,3%

Աղյուսակ 2. Խափանման միջոցի տեսակը

Մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ անչափահաս մեղադրյալների նկատմամբ լայնորեն կիրառվող պատիժը ազատազրկումն է: Դատարանը գործերի 90%-ում նշանակել է ազատազրկում, մինչդեռ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառվել են միայն 2% դեպքերում: ՔՕ 70-րդ հոդվածի համաձայն՝ անչափահաս մեղադրյալների 90%-ից 47%-ը ազատվել է պայմանական[29]: Անչափահասների 14%-ը ազատվել է համաներմամբ:



Գծապատկեր 6. Պատժի քաղաքականություն

29 Համաձայն ՔՕ 70-րդ հոդվածի՝ եթե դատարանը, ազատազրկման ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Դիտորդները բացահայտել են, որ անչափահասների կալանավորման և ազատազրկման ժամկետները շատ երկար են և խիստ:

Կալանավորման ժամկետը	Ամբաստանյալի տարիքը		Ընդամենը
	անչափահաս	չափահաս	
Հայտնի չէ	-	3	3
Դատապարտյալ	1	0	1
3 ամիս	1	1	2
6 – 7 ամիս	3	2	5
8 – 9 ամիս	5	4	9
10 – 11 ամիս	2	2	4
Ընդամենը	12	12	24

Աղյուսակ 3. Կալանավորման՝ որպես խափանման միջոցի տևողությունը

Մոնիթորինգի արդյունքները պարզ ցույց են տալիս, որ դատախազները հակված էին ազատազրկման ձևով պատիժ պահանջելու, մինչդեռ դատավորները հիմնականում բավարարում էին նրանց միջնորդությունները՝ առանց հաշվի առնելու անչափահասների խոցելիությունը և ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառմամբ նրանց ուղղելու անհրաժեշտությունը:

Սա խախտում է ընդունված միջազգային չափանիշները և մոտեցումները:

Թեև մոնիթորինգի ծրագիրն ուղղակիորեն չէր ուսումնասիրում կալանավորման՝ որպես խափանման միջոցի ընտրության վերաբերյալ դատարանի որոշումների հիմնավորվածությունը, ծրագրի իրականացման ընթացքում ստացված տեղեկությունները ի հայտ են բերում առանց իրավական և փաստական հիմնավորումների կալանավորման կիրառման դեպքեր:

Մոնիթորինգի մասին հաշվետվությունները բացահայտել են ուշագրավ օրինաչափություն խափանման միջոցի ընտրության և գործի ելքի (մեղավոր է/անմեղ է), ինչպես նաև վերջնական պատժի միջև:

Դատարանի վճիռները	Անչափահաս ամբաստանյալների հանդեպ կիրառված խափանման միջոցները					
	Կալանավորում	Գրավ	Ստորագրություն՝ չհեռանալու մասին	Անձնական երաշխավորություն	Հսկողության հանձնել	Ընդամենը
Տուգանք	0	0	1	0	1	2
Որոշակի ժամկետով ազատազրկում	10	1	0	0	3	14
Որոշակի ժամկետով ազատազրկում. պատիժը պայմանականորեն չկիրառել	0	2	2	1	18	23
Որոշակի ժամկետով ազատազրկում. համաներում	1	0	1	0	5	7
Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ	0	0	0	0	1	1
Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ	0	0	0	0	1	1
Ընդամենը	11	3	4	1	29	48

Աղյուսակ 4. Դատավճիռների քաղաքականությունը՝ կախված կիրառված խափանման միջոցից[30]

Առաջարկություններ

- *Ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխանող երեխայակենտրոն, անչափահասների վերականգնողական արդարադատության զարգացած համակարգ:*
- *Նախատեսել այլընտրանքային համայնքային միջոցներ՝ արդարադատության պաշտոնական ընթացակարգերի փոխարեն (ներառյալ՝ մեդիացիա և քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինում՝ հստակեցնելով այս առումով ոստիկանության, քննիչների, դատախազների և դատարանների դերը):*
- *Ստեղծել իրավական և դատավարական նոր ընթացակարգեր՝ ուղղված անչափահասներին կառուցողական ինտեգրմանը հասարակությանը, այլ ոչ թե հանցագործությունների բացահայտմանը և պատժիչ քաղաքականությանը:*
- *Կրճատել կալանավորման՝ որպես խափանման միջոցի, ինչպես նաև ազատազրկման ձևով նշանակված պատժի չափից ավելի օգտագործումը և տևողությունը՝ քննարկելով նաև նոր այլընտրանքային միջոցների ստեղծումը:*
- *Կրճատել անչափահասների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումների տևողությունը՝ առավելագույնը մինչև 6 ամիս:*

30 Մեկ գործով դատական քննությունը զեկույցի պատրաստման ընթացքում չէր ավարտվել, և որպես ամբաստանյալ ներգրավված անչափահասը գտնվում էր կալանքի տակ:

ԳԼՈՒԽ 4. ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Նախորդ գլխում նշված սկզբունքների և իրավունքների լիակատար իրականացումը երաշխավորելու համար անհրաժեշտ է ստեղծել անչափահասների արդարադատության համապարփակ համակարգ և ապահովել դրա արդյունավետ գործառնությունը: Ինչպես սահմանված է ԵԻԿ-ի 40(3)-րդ հոդվածում, մասնակից պետությունները պետք է խթանեն քրեական օրենսդրությունը խախտած անչափահասների նկատմամբ կիրառելի հատուկ օրենքների, ընթացակարգերի, մարմինների և հաստատությունների ստեղծումը:

Անչափահասների արդարադատության համապարփակ համակարգը պահանջում է ոստիկանությունում, դատական համակարգում, դատախազությունում ստեղծել մասնագիտացված ստորաբաժանումներ, ինչպես նաև մասնագիտացված պաշտպաններ կամ այլ ներկայացուցիչներ, որոնք անչափահասներին իրավական կամ համապատասխան այլ աջակցություն են տրամադրում: «Պեկինյան կանոնների» 12-րդ կանոնը ուշադրությունը հրավիրում է անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման մեջ ներգրավված բոլոր իրավապահ մարմինների աշխատակիցների համար հատուկ վերապատրաստման դասընթացներ անցկացնելու անհրաժեշտության վրա: Այս տեսանկյունից, քանի որ ոստիկանությունը անչափահասների արդարադատության համակարգի շփումների առաջին կետն է, շատ կարևոր է, որ ոստիկանության աշխատակիցները լինեն իրազեկված և գործեն պատշաճ կերպով:

Երեխայի իրավունքների կոմիտեն առաջարկում է, որ այն դեպքերում, երբ գործնականում մասնագիտացված դատարանների ստեղծումն իրատեսական չէ, պայմանադիր կողմերը անչափահասների արդարադատության գործերը վարելու համար երաշխավորեն մասնագիտացված դատավորների և մագիստրատների նշանակումը: Բացի այդ, մասնագիտացված ծառայությունները, ինչպիսին են պրոբացիան, խորհրդատվությունը կամ հսկողությունը, պետք է մատուցվեն հատուկ հաստատությունների հետ զուգահեռ, որն ընդգրկում է, օրինակ՝ ցերեկային ուղղիչ կենտրոններ և, անհրաժեշտության դեպքում, համայնքում խնամք և բուժում անչափահաս ամբաստանյալների համար:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ երկրներ, ինչպիսիք են Ավստրիան, Կանադան, Խորվաթիան, Չեխիայի Հանրապետությունը, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Իտալիան, Նիդերլանդները, Սերբիան, Սլովենիան, Ղազախստանը (երկու քաղաք), Շվեյցարիան և այլն, ունեն անչափահասների համար նախատեսված հատուկ դատարաններ/կամ դատավորներ: Այլ երկրներում օրենքները լրացուցիչ պահանջներ են սահմանում անչափահասների գործերը վարող դատավորների համար: Օրինակ՝ փորձագիտական գիտելիքներ (Հունաստան), արդարադատության վերապատրաստման դասընթացներ (Ֆինլանդիա, Իտալիա), մասնագիտացում (Թուրքիա): Որոշ երկրներում (Ռումինիա, Կոսովո, Գերմանիա) գոյություն ունեն նաև անչափահասների գործերով մասնագիտացված դատախազներ և անչափահասների գործերով մասնագիտացված ոստիկանություն (Թուրքիա):

Բացի այդ, բազմաթիվ երկրներում սոցիալական ապահովության հաստատությունները ներգրավված են անչափահասների արդարադատությանն առնչվող գործընթացներում: Օրինակ՝ Թուրքիայում սոցիալական ոլորտի մասնագիտացված աշխատողները կցված են դատարաններին և պատասխանատու են անչափահասի սոցիալական պայմանների և անձնական կյանքի մասին տեղեկությունների հավաքման համար:

Անգլիայում և Ուելսում «անկախ փաստաբանները» պատրաստ են օգնություն ցույց տալ ազատությունից զրկված անչափահասներին, որոնք կարող են իրենց մտահոգությունները/բողոքները ներկայացնել տվյալ մասնագետներին: Բուլղարիայում, Էստոնիայում և Հյուսիսային Իռլանդիայում գործում են անչափահասների կոմիտեներ, որոնք կազմված են տարբեր գործակալությունների ներկայացուցիչներից և միշտ ընդգրկում են առնվազն մեկ սոցիալական

մասնագետ կամ սոցիալական մանկավարժ, որը քննում և լուծում է գործը պատանիների հետ խորհրդակցությունների միջոցով: Գերմանիայում գոյություն ունի Պատանիների սոցիալական ապահովության գրասենյակի հատուկ մասնաճյուղ, Անչափահասների գործերով դատարանի օժանդակություն, որն օգնում է դատախազին և դատարանին դատական քննության ժամանակ: Ի լրումն՝ անչափահասների դատական քննության ժամանակ պահանջվում է սոցիալական դատարանի օգնականի մասնակցությունը (Jugendgerichtshilfe), որը պետք է լինի համայնքի անչափահասների սոցիալական ապահովության վարչության աշխատակից: Վերջինս պետք է սոցիալական հաշվետվություն պատրաստի և անչափահասի անձնական կյանքի մասին փաստեր ներկայացնի, ինչպես նաև օգնի դատավորին գտնելու համապատասխան պատժամիջոցը:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ օրենսդրությունը չի պարունակում անչափահասների արդարադատության մասնագիտացված գործող օրենքներ կամ ընթացակարգեր, որոնցում համապարփակ մոտեցում կորդեգրվի անչափահասների գործերով արդարադատության նկատմամբ: Փոխարենը՝ Քրեական դատավարության և Քրեական օրենսգրքերի տարբեր հատվածներում ներառված են անչափահաս մեղադրյալների քրեական հետապնդման ենթարկելու և պատժի նշանակման առանձնահատկությունների վերաբերյալ առանձին գլուխներ և մի քանի մասնակի դրույթներ: Անչափահասների գործերը վարում են ընդհանուր իրավասության դատարանները: Այդուամենայնիվ, անչափահասների գործերն առավել փորձառու դատավորներին, մասնավորապես՝ դատարանի նախագահներին, նշանակելու վկայակոչվող ոչ ֆորմալ գործելաոճն իրականում հետևողականորոն չի իրականացվում: Ավելի ստույգ՝ մոնիթորինգի ենթարկված 37 գործերում ներգրավված էր 25 դատավոր, որոնցից միայն երկուսն էին դատարանի նախագահ:

Մոնիթորինգի ծրագրի արդյունքները չեն բացահայտել հատուկ վերապատրաստում անցած դատավորների, դատախազների և հանրային պաշտպանների միջև գործերը բաշխելու որևէ հետևողական մոտեցում, որի հիմքում ընկած կլիներ մասնագիտացումը անչափահասների գործերով: Հետևաբար, թեև պաշտոնապես ներկայացվում է, որ տեղի է ունենում դատավորների միջև գործերի բաշխման ոչ ֆորմալ մասնագիտացում, սակայն դա դիտարկման ընթացքում չի հաստատվել:

Դիտորդները տարբեր կազմակերպություններին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամին, Եվրոպական միությանը, Եվրոպայի խորհրդին, ԵԱՀԿ-ին, Վճռաբեկ դատարանին, Փաստաբանների պալատին և Ոստիկանությանը մի շարք հարցումներ է ուղղել: Այդ հարցումներից պարզվել է, որ կազմակերպված վերապատրաստման դասընթացները կանոնավոր չեն եղել, իրականացվել են խիստ սահմանափակ թվով մասնակիցների համար և ad hoc հիմունքներով:

Մասնավորապես, 2008 թ. հուլիսի 17-19-ին, 24-26-ին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը դատավորների, դատախազների և ոստիկանության աշխատակիցների համար կազմակերպել է երկօրյա դասընթացներ, որի ընթացքում մշակվել են առաջարկություններ՝ շեշտելով անչափահասների հետ մասնագետների և հատուկ մասնագիտացում ստացած ոստիկանության աշխատակցի օգնությամբ հարցազրույցներ անցկացնելու, անչափահասների գործերի քննությունը հատուկ մասնագիտացված դատավորներին հանձնելու, հարցազրույցներ անցկացնելու մեջ մասնագիտացած դատախազներ ունենալու անհրաժեշտությունը, որոնք գիտելիքներ ունեն անչափահասների հոգեբանական առանձնահատկությունների մասին:

Վճռաբեկ դատարանի տեղեկությունների համաձայն՝ դատական դպրոցը կազմակերպել է երկօրյա դասընթացներ 20 դատավորների համար (17 դատավորներն ընդհանուր իրավասության դատարանից էին, 3-ը՝ վերաքննիչ դատարանից): Ըստ Վճռաբեկ դատարանի տեղեկությունների՝ ընդհանուր իրավասության, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններն ունեն 220 դատավոր: Վճռաբեկ դատարանից նաև տեղեկացրել են, որ դատարանների նախագահների խորհրդի առաջիկա նիստի ժամանակ ցուցումներ կներկայացվեն, ըստ որի՝ անչափահասների գործերով զբաղվելու են միայն հատուկ վերապատրաստում անցած դատավորներ:

Ինչպես հայտնել են Փաստաբանների պալատից, անչափահասների արդարադատության թեմայով պալատը վերապատրաստման որևէ դասընթաց չի կազմակերպել: Մի քանի տարի առաջ

ԵԱՀԿ-ն կազմակերպել էր վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել էին մի շարք փաստաբաններ:

Մասնագիտական ունակությունների բացակայությունը խանգարում է անչափահասների գործերի արդարադատության որակին, որն արտահայտվում է տարբեր ձևերով: Մասնավորապես, դատավորները բավարար գիտելիքներ չունեն անչափահասների տարիքային հոգեբանության մասին, ինչը բացասաբար է անդրադառնում արդյունավետ դատական քննություն անցկացնելու վրա:

Մյուս կողմից՝ դիտարկվել են հարցաքննությունների ընթացքում խտրականության և կանխակալ վերաբերմունքի, իսկ երբեմն նաև՝ ընդդիմանալու և անտարբերության դեպքեր:

Շարունակում են տեղ գտնել բացասական այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են՝ ոչ պատշաճ մեկնաբանությունները, անչափահասների հետ խոսելու հմտությունների, դատական քննության ընթացքում կատարվող գործողությունները մատչելի բացատրելու կարողությունների բացակայություն, ինչպես նաև վերականգնողական արդարադատության նպատակների վերաբերյալ անիրազեկությունը, անչափահասների գործերի դատական քննությունը սովորական քրեական գործերի քննությունից չտարբերակելը:

Վերոհիշյալ բացասական կողմերի նկարագրությունը և հաճախականությունը ներկայացված են 8-րդ գլխում:

Առաջարկություններ

- *Մասնագիտացնել անչափահասների գործերը քննող դատավորներին, դատախազներին, քննիչներին, ոստիկանության աշխատակիցներին և հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբաններին:*
- *Օրենքով արգելել անչափահասների գործերը վարել այն դատավորներին, դատախազներին, քննիչներին, հանրային պաշտպաններին, ովքեր չեն անցել անչափահասների արդարադատության հատուկ դասընթացներ:*
- *Աջակցել Փաստաբանների պալատին՝ մասնավոր փաստաբանների համար անչափահասների արդարադատության հատուկ դասընթացներ կազմակերպելու գործում:*
- *Երաշխավորել երեխայի իրավունքների և լավագույն փորձի վերաբերյալ թեմաների պաշտոնական ներմուծումը մասնագետների կրթության և աշխատանքի վայրում անցկացվող վերապատրաստման դասընթացների ծրագրերում, ապահովել կրկնվող, կայուն և հետևողական դասընթացներ:*

ԳԼՈՒԽ 5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը յուրաքանչյուր անձին երաշխավորում է իր գործի հրապարակային քննության իրավունք՝ սահմանափակումներ դնելով միայն հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվամիջոցների մասնակցության վրա[31]:

Քրեական դատավարության օրենսգիրքը նույնպես երաշխավորում է դատական քննության հրապարակայնությունը, այս սկզբունքը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ օրենքով նախատեսված դեպքերում և եղանակով՝ անձնական և ընտանեկան կյանքին, անձի պատվին և արժանապատվությանն առնչվող հանցագործությունների վերաբերյալ գործերով, անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտության դեպքում[32]:

Մոնիթորինգի արդյունքները ի ցույց են դնում հրապարակային դատաքննություն վարելու համարձակ փորձերը, որը վճռորոշ է արդարադատության զարգացող համակարգերի համար: Քանի դեռ Հայաստանը չունի անչափահասների արդարադատության այնպիսի համակարգ, որտեղ «քրեական գործերի բացահայտման» և պատժի նպատակները ստորադասվեն վերականգնողական արդարադատությանը, անչափահասների գործերի դռնփակ դատական քննություն անցկացնելը հակասելու է անչափահասի շահերին:

ՔԴՕ 16-րդ հոդվածը պաշտպանում է անչափահասի անձնական կյանքը լիովին հարգելու իրավունքը դատական քննության բոլոր փուլերի ընթացքում, այսինքն՝ սկսած իրավապահ մարմինների հետ առաջին շփումներից մինչև իրավասու մարմնի կողմից վերջնական որոշում կայացնելը կամ վերահսկողությունից, ազատազրկումից, կալանավորումից ազատելը:

Այդ դրույթի հիմնական նպատակն է խուսափել վաղաժամ հրապարակայնության կամ անչափահասին իր հասակակիցներից և ընդհանրապես հասարակությունից մեկուսացնելու կամ պիտակավորելու հետևանքով առաջացող վնասներից:

Ուստի չպետք է հրապարակվի որևէ տեղեկատվություն, որը կարող է բացահայտել անչափահաս մեղադրյալի ինքնությունը, քանի որ այն կարող է ունենալ ստիգմատիզացիայի ազդեցություն, ինչպես նաև նշանակություն ունենալ կրթության մատչելիության, աշխատանքի, բնակարանի իրավունքի իրականացման հնարավորությունների կամ անչափահասի անվտանգության համար:

Անձնական կյանքի իրավունքը պահանջում է, որ բոլոր մասնագետները, որոնք ապահովում են դատարանի կամ այլ իրավասու մարմնի կողմից նշանակված միջոցների կիրառումը, իրենց շփումներում գաղտնի պահեն այն ամբողջ տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել անչափահասին: Անչափահաս մեղադրյալի մասին տեղեկատվությունը պետք է գաղտնի և փակ պահվի երրորդ անձանց համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք անմիջականորեն ներգրավված են նախնական կամ դատական քննության փուլում, այդ թվում դատավճիռ կայացնելու:

Հաշվի առնելով ստիգմատիզացիան և կանխակալ մոտեցումը բացառելու հանգամանքը՝ անչափահաս մեղադրյալների մասին տեղեկությունը չպետք է օգտագործվի նույն մեղադրյալի մասնակցությամբ հետագա դատական քննություններում[33]:

---

31 ՀՀ Սահմանադրություն, հոդված 19:

32 ՔԴՕ, հոդված 16:

33 «Պեկինյան կանոններ», կանոն 21.1 և 21.2:

Սույն չափանիշների լույսի ներքո գնահատելով ՀՀ օրենսդրությունը և իրականացման փորձը՝ ակնհայտ է դառնում, որ անչափահաս մեղադրյալների անձնական կյանքի իրավունքը լրջորեն խախտված է: Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ անչափահաս մեղադրյալների անունները հրապարակվել են, և նրանց անանունությունը չի պահպանվել դատավարական փաստաթղթերում: Դիտորդները նույնիսկ նկատել են, որ դատավարությունը տեսագրվել է հեռուստատեսությամբ ցուցադրելու համար՝ «Դատական ժամ» շոու-ծրագրի շրջանակներում: Այդ փաստով և պաշտպանի համառ առարկությունների շնորհիվ հանվել էր միայն անչափահաս մեղադրյալի հարցաքննությանը վերաբերող տեսագրության մասը:

Այս առումով հիմնական մտահոգությունը դեռևս ոստիկանության և հանրային հեռուստատեսության «02» պաշտոնական հեռուստահաղորդման հեռարձակումն է, որի ընթացքում պարբերաբար ներկայացվում են ձերբակալված անձինք, այդ թվում նաև՝ անչափահասներ՝ առանց ձայնի կամ դեմքի աղավաղման: Անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտմամբ հանրությանը ներկայացվում է հանցագործության դեպքի վերաբերյալ պաշտոնական վարկածը: Բացի այդ, մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ թերթերին և լրատվամիջոցներին չի արգելվում հրապարակել հանցանք կատարելու մեջ մեղադրված անչափահասներին. ներկայացվում են նրանց անունները, քրեական գործի տվյալները, որի պատճառով կարող է խորտակվել անչափահասի ապագա կյանքը՝ մինչև չափահաս տարիքին հասնելը:

Առաջարկություններ

- *Գաղտնիության պահպանման պարտականություն դնել այն բոլոր անձանց վրա (դատավորների, ոստիկանության աշխատակիցների, քննիչների, պաշտպանների, վկաների, դատապարտյալների և այլն), ովքեր ներգրավված են անչափահաս մեղադրյալի մասնակցությամբ գործերին:*
- *Մամուլին և լրատվամիջոցներին արգելել հեռարձակելու, հրապարակելու անչափահասի անունը, լուսանկարը կամ որևէ այլ տեղեկություն, որոնք կարող են բացահայտել երեխայի ինքնությունը:*
- *Գաղտնի պահել երեխայի անունը դատարանի որոշման մեջ կամ այլ փաստաթղթերում, որոնք հրապարակվում են:*
- *Մինչև 18 տարեկանը կատարած հանցանքի առնչությամբ դատվածության վերաբերյալ բոլոր գրանցումները վերացնել:*
- *Մամուլի և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար անչափահասների իրավունքների թեմայով դասընթացներ կազմակերպել:*

ԳԼՈՒԽ 6. ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ

Անչափահաս իրավախախտների իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքը անմեղության կանխավարկածն է: Այն անչափահասը, որը ենթադրվում է կամ մեղադրվում է քրեական օրենսդրությունը խախտելու մեջ, պետք է օգտվի չփարատված կասկածներն իր օգտին մեկնաբանվելու իրավունքից, և նա կարող է մեղավոր ճանաչվել միայն այն դեպքում, երբ մեղադրանքները հաստատվել են ողջամիտ կասկածից դուրս՝ դատավորի որոշմամբ:

Փաստ է, որ սխալներ լինում են: Անչափահասները ներքաշվում են այնպիսի արարքների մեջ, որ երբեք չէին մտադրվել կատարելու, նրանք կարող են ազդեցության տակ ընկնել և խոստովանել այնպիսի արարքներ, որոնք չեն կատարել, վկաները շփոթում են այն անձանց, որոնք մեղադրվում են հանցագործության մեջ:

Սխալ դատապարտումների դեմ ամբաստանյալի պաշտպանության գործիքն անմեղության կանխավարկածն է: Թեև անմեղության կանխավարկածը վերաբերում է բոլորին, անչափահասի սխալ մեղադրանքի հետևանքները սարսափելի են և վտանգավոր: Այս և այլ պատճառներից ելնելով՝ խստագույնս կարևոր է, որ արդարադատության իրականացման գործընթացում ներգրավված անձինք ելնեն այն ընկալումից, որ անչափահասները որևէ հանցանք չեն կատարել, կամ նրանց նկատմամբ առավել խիստ մեղադրանք է առաջադրվել: Նաև խիստ կարևոր է, որ ոստիկանության աշխատակիցները, դատախազները և դատավորները գնահատեն ոչ միայն այն օրենքները, որոնք իրավունքներ են տալիս արդարադատություն իրականացնող մարմիններին, այլ նաև այն իրավունքները, որոնք սահմանափակում են այդ մարմինների իրավասությունները՝ հօգուտ հանցագործություններում մեղադրվող անչափահասների, ներառյալ՝ իրական անմեղության կանխավարկածը:

Երեխան իրավունք ունի, որ իր հետ վարվեն համաձայն անմեղության կանխավարկածի, և պետական իշխանության մարմինների կամ այլ ներգրավված անձանց պարտականությունն է զերծ մնալ քննության արդյունքը կանխորոշելուց: Ըստ ԵԻԿ-ի՝ պետական մարմինները պետք է տեղեկատվություն տրամադրեն երեխայի զարգացման պայմանների մասին, որպեսզի իրականում երաշխավորվի անմեղության կանխավարկածի պահպանումը: Երեխայի զարգացման պայմանների և հանգամանքների մասին տեղեկատվությունը կարևոր է յուրաքանչյուր ամբաստանյալի անձի անհատական վերլուծության, ինչպես նաև պատժի նշանակման համար, եթե անչափահասը մեղավոր է: Դատավարության և նրա հետևանքների ըմբռնման բացակայությունը, հասուն չլինելը, վախը, ցուցադրական պաշտպանական խիզախությունը կամ այլ գործոններ կարող են պատճառ դառնալ անչափահասի վարքագծի այնպիսի դրսևորման, որն անհարիր է հասուն մարդուն և կարող է թյուր ըմբռնվել արդարադատություն իրականացնող անձանց կողմից: Սակայն իրավասու մարմինները չպետք է ենթադրեն, որ անչափահասը մեղավոր է՝ հիմնվելով ցուցաբերած վարքագծի վրա, որը նրանց համար անհասկանալի է, եթե, իհարկե, չկան մեղավորության անհերքելի ապացույցներ:

ՀՀ օրենսդրությունը վերահաստատում է անմեղության կանխավարկածի երաշխավորումը, արգելում ապացուցման բեռը դնել պաշտպանության կողմի վրա և պահանջում է ցանկացած հավանական կասկած մեկնաբանել հօգուտ մեղադրյալի:

Դիտորդները գնահատել են դատարանների վերաբերմունքը ամբաստանյալների նկատմամբ, ավելի ստույգ՝արդյոք դատարանները ցուցաբերո՞ւմ են ամբաստանյալների և նրանց հանցանքի հանդեպ որոշակի կանխակալ վերաբերմունք և/կամ կողմնակալ մոտեցում:

Մոնիթորինգի խումբը պարզել է, որ երբեմն դատարանը ցուցաբերում էր կանխակալ վերաբերմունք անչափահաս ամբաստանյալների հանդեպ, նույնիսկ դատավորները ճնշում էին գործադրում նրանց վրա՝ ստիպելու ընդունել հանցանքը:

Դիտորդները դիտարկել են բազմաթիվ դատական նիստեր, որոնց ընթացքում դատավորները մեկնաբանություններ էին կատարում՝ ակնարկելով ամբաստանյալի կատարած հանցանքը՝

նախքան փաստերի վրա հիմնված որևէ վերջնական որոշում կայացնելը: Նման մեկնաբանությունները հաճախ ուղեկցվում էին դատավորների մեղադրական, նույնիսկ ակնհայտ թշնամական վերաբերմունքով: Նման մեկնաբանությունները և վերաբերմունքը հակասում են անչափահասների արդար դատաքննության իրավունքին, ինչպես նաև խարխլում են հասարակության վստահությունը արդարադատության մարմինների արդարացիության և անմեղության կանխավարկածի կիրառման հանդեպ:

Օրինակ

Մի դեպքում դատավորը բարկացավ և սկսեց գոռալ անչափահաս ամբաստանյալի վրա՝ ասելով. «Ուրիշ տղաների հետ չէիր կռվում... բա ինչի՞ նրանց չմորթեցիր»:

Օրինակ

Ամբաստանյալները և օրինական ներկայացուցիչը ուշացել էին դատական նիստին, և դատավորը սկսեց գոռալ, որ նրանք արհամարհում են դատարանը. «Երկու օր առաջ ձեր նման գողերի կալանքի միջնորդություն եմ բավարարել: Ինչի՞ պիտի չբավարարեի: Գող են, թող կալանքի տակ լինեն, ուշանալու խնդիր էլ չի լինի: Կալանավայրից կտանեն-կբերեն»:

Օրինակ

Երկու մեղադրյալ եղբայրների (չափահաս և անչափահաս) մասնակցությամբ գործի քննության ժամանակ դատավորը, դիմելով ամբաստանյալներից մեծին, ասաց. «Ես զղջում եմ, որ այն երիտասարդը, որը ծառայել է բանակում և լավ զինվոր է եղել, դարձել է ավազակ: Փաստերը վկայում են, որ ձեր հայրը բավարար ուշադրություն չի դարձրել իր որդիներին: Ձեր որդիները մի քանի ամիս ազատազրկման մեջ են, և դուք [հայրը] այդպես հանգիստ եք և չեք հատուցում տուժողներին հասցված վնասները»:

Օրինակ

Մեկ այլ դեպքում ամբաստանյալը պատասխանում էր տուժողի հոր հարցերին, դատավորը բարձր ձայնով ասել է. «Սա հո ազատ թեմայով շարադրություն չի, օրը մի բան ես ասում, սա ձեր ոճրագործության վերարտադրությունն է»:

Միջազգային և ազգային չափորոշիչները երաշխիքներ են նախատեսում ինքնախոստովանական ցուցմունքների կորզումը բացառելու դեմ: Այս իրավունքը լիակատար իրականացնելու համար ՀՀ օրենսդրությունը պահանջում է դատավորից բացատրել ամբաստանյալին իր, կնոջ կամ մերձավոր ազգականների դեմ ցուցմունք չտալու, մեղքը չընդունելու համար պատասխանատվություն չկրելու և լուռ մնալու իրավունքները: Դիտորդներն արձանագրել են դեպքեր, երբ դատարանը պատշաճ ձևով չի իրականացրել ամբաստանյալի որոշ իրավունքները բացատրելու իր պարտականությունը, որոնք կազմում են անմեղության կանխավարկածի բաղկացուցիչ մասը և զգալի դեր են խաղում արդար դատավարություն անցկացնելու համար:

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ դատավորները մեծ մասամբ չեն կատարում այս կարևոր պարտականությունը: Ստորև ներկայացված գծապատկերները ներկայացնում են տվյալ խնդրի քանակական արտահայտությունը:



Գծապատկեր 7. Մեղադրյալին՝ ցուցմունք չտալու և նախաքննական ցուցմունքներով կաշկանդված չլինելու իրավունքները բացատրելը



Գծապատկեր 8. Արդյոք ամբաստանյալներին բացատրվե՞լ էր, որ նրանք պարտավոր չեն պատասխանել հարցերին, և հարցերին պատասխանելուց նրանց հրաժարվելը չի կարող օգտագործվել նրանց դեմ

Առաջարկություններ

- *Դատավորները պետք է ձեռնպահ մնան տեսակետներ արտահայտելուց կամ մեկնաբանություններ կատարելուց, որը վերաբերում է ամբաստանյալի հանցանքի հանդեպ իրենց դիրքորոշմանը:*
- *Պետք է անցկացվեն դատավորների վերապատրաստման դասընթացներ անմեղության կանխավարկածի և դրա իրացման արդյունքում սխալների նվազեցման թեմայով:*
- *Դատավորներին, դատախազներին և փաստաբաններին պետք է ցուցումներ տրվեն անչափահասների հետ կապված դատավարությունները դիտարկել իբրև արդյունքների ուսումնասիրություն, որը կարող է օգնել անչափահասին կրթություն ստանալ, ձեռք բերել արհեստ կամ անչափահասի զարգացմանը նպաստող զբաղմունք:*
- *Դատավորի կողմից անմեղության կանխավարկածի պահանջի խախտումը պետք է օրինական հիմք հանդիսանա՝ (1) դատավորի պարտադիր ինքնաբացարկման, (2) եթե այդ դատավորը հրաժարվում է ինքնաբացարկումից, դատավճիռը չեղյալ համարելու, (3) դատավորների վրա կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու համար:*
- *Երաշխավորել դատավորների՝ քրեադատավարական օրենսդրության պահանջներին հետևելը և անչափահաս ամբաստանյալների իրավունքները պատշաճ բացատրելը:*

ԳԼՈՒԽ 7. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԱՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Անմեղության կանխավարկածի հիմնարար սկզբունքը չպահպանելու հետ մեկտեղ մոնիթորինգի խումբը բացահայտել է նաև դատավորների անկողմնակալության և մասնագիտական պահվածքին վերաբերող լուրջ մտահոգություն առաջացնող խնդիրներ:

Այս գլխում ուսումնասիրվում են դատարանի մեղադրական հակվածությունները կամ կողմնակալ արտահայտությունները, որոնք կարող են վնասել հասարակության կողմից դատական իշխանության՝ որպես արդարացի, անաչառ և արժանապատիվ համակարգի ընկալմանը, ինչպես նաև խարխլել արդարադատության համակարգի և նրա գործունեության արդյունքների հանդեպ վստահությունը:

Քրեական դատավարության օրենսգիրքը հատկապես պահանջում է, որ դատարանները լինեն արդարացի և անկողմնակալ: Արդարադատության անկողմնակալության և դատավորների մասնագիտական պահվածքին առնչվող խնդիրներին է անդրադառնում ՀՀ դատական օրենսգիրքը, որի «Դատավորի վարքագծի կանոնները» գլխում համախմբված են դրույթները:

Դատական օրենսգիրքը պարունակում է դատավորի նկատմամբ «ձգտել ապահովել դատարանի անկողմնակալությունը և անկախությունը» ընդհանուր պահանջը, ինչպես նաև նախատեսում է վերը նշված անկողմնակալության բաղկացուցիչ տարրերը: Մասնավորապես, Դատավորի վարքագծի կանոններն արգելում են դատավորներին թույլ չտալ, որ իր վրա ներազդեն թաքնված շահերը, հասարակական դժգոհությունը կամ քննադատված լինելու վախը:

Մասնավորապես, դատավորից պահանջվում է «համբերատար, արժանապատիվ և կիրթ վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնե» և երաշխավորել, որ նման վերաբերմունք կցուցաբերի նաև դատարանի աշխատակազմը: Բացի անաչառ լինելու ընդհանուր պահանջից, Դատավորի վարքագծի կանոնները նաև արգելք են պարունակում կողմնակալության կամ խտրական վերաբերմունքի բանավոր կամ ոչ բանավոր դրսևորման, կամ վերը նշված վերաբերմունքի այլ ձևերի հանդեպ:

Այս կանոնները պահպանելը հատկապես կարևոր է անչափահաս ամբաստանյալների գործերում, քանի որ անչափահասների կարծիքը արդարադատության, օրենքների արդարացի և վստահելի լինելու վերաբերյալ այն հասարակությունում, որտեղ նրանք ապրելու են որպես չափահասներ, դատական մարմինների աշխատակիցներից է կախված: Կողմնակալ դատավորը կամ արատավոր դատական վարույթը կարող է հասարակությունը և այլ անձանց իրավունքները արհամարհող ցինիկ անձնավորության ձևավորման պատճառ դառնալ: Անչափահասի կողմից դատավարության որպես արդարացի ընթացակարգի ընկալումը նպաստում է նրա այնպիսի վարքագծային մոդելի ձևավորմանը, որին միտված է արդարադատության իրականացումը:

ՄԱԿ-ի Դատական իշխանության անկախության հիմնական սկզբունքները հստակորեն հաստատում են դատական անկողմնակալության սկզբունքները, մինչդեռ ՄԱԿ-ի Դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները ներկայացնում են դրա բաղկացուցիչ մասերը, ներառյալ՝ դատական գործառույթների անաչառ և անկողմնակալ իրականացման պահանջը, դատավարության արդյունքների վրա ազդեցություն ունեցող հայտարարություններ անելու արգելքը և դատավորի ինքնաբացարկ կատարելու պահանջը: Բանգալորյան սկզբունքները, ի թիվս այլոց, առաջարկում են, որ դատավորն իրականացնի իր պարտականությունները առանց արտոնյալ վերաբերմունք, կողմնակալություն կամ կանխակալություն ցուցաբերելու: Դատավորը պետք է երաշխավորի, որ իր պահվածքը և՛ դատարանում, և՛ դատարանից դուրս պահպանելու և զարգացնելու է հասարակության, պրակտիկ իրավաբանների և դատավարությունում ներգրավված կողմերի վստահությունը դատավորի և դատական մարմինների արդարացիության նկատմամբ:

Միջազգային չափորոշիչները շեշտում են, որ արդարադատությունը պետք է գոյություն ունենա և՛ որպես անվիճելի փաստ, և՛ որպես ողջամիտ ընկալում: Բանգալորի Դատավորների վարքագծի սկզբունքները հստակորեն սահմանում են, որ արդարադատությունը չպետք է միայն իրականացվի, այլ պետք է դրա իրականացումը տեսանելի լինի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան հաստատում և հիմնավորում է դատական անկողմնակալության չափորոշիչները, ներառյալ՝ անկողմնակալության ցուցադրման պահանջը, ինչպես այն ողջամտորեն ընկալվում է դիտորդի կողմից: Կողմնակալության ցուցադրումը կարող է դժգոհություն և անարդարության զգացմունք առաջացնել՝ խարխլելով վստահությունը և հավատը արդարադատության համակարգի հանդեպ:

Դիտորդները գնահատել են դիտարկված դատավարությունների ընթացքում դատավորների մասնագիտական վարքագիծը, և նրանք դատավորների ոչ պրոֆեսիոնալ վարքագծի բազմաթիվ դեպքեր են արձանագրել: Մոնիթորինգի խումբը բացահայտել է, որ մի շարք դեպքերում դատավորներն այնպես էին վարում դատական նիստերը, որը նրանց անկողմնակալության վերաբերյալ լուրջ կասկածներ էր առաջացնում: Պատահում էին նաև ակնհայտ դեպքեր, երբ դատավորները դատաքննության մասնակիցներին և դատարանի դահլիճում ներկա անձանց վերաբերվում էին առանց անհրաժեշտ հարգանքի՝ հակասելով իրենց մասնագիտական վարքագծի կանոններին:

Մոնիթորինգի ենթարկված գործերի 12%-ում գրանցվել են դատավորների ոչ վայել հայտարարություններ կամ գործողություններ: Դրանք անտարբեր, աննրբանկատ կամ ակնհայտ կոպիտ մեկնաբանություններ էին՝ ուղղված դատավարության մասնակիցներին և հանրության ներկայացուցիչներին և կամ դատարանի դահլիճում ներկա գտնվող անձանց:

Նկատվել են նաև ամբաստանյալների, տուժողների, վկաների կամ դատավարության նիստի մյուս մասնակիցների նկատմամբ դատավորների կողմից հոգեբանական և այլ կարգի ճնշումների բազմաթիվ դեպքեր: Դատավորների հուզական անկայունությունը, ինքնատիրապետման սահմանափակ ունակությունը, իսկ որոշ դեպքերում՝ ագրեսիայի դրսևորումը բացահայտել են հոգեբանական ճնշման կամ նույնիսկ հոգեբանական չարաշահման դեպքեր:



Գծապատկեր 9. Դատական քննության ընթացքում գործադրված ճնշումներ

Ընդ որում, դատական քննության ընթացքում մասնակիցների նկատմամբ ճնշումների 10,4%-ը կատարվել է դատավորի կողմից:

Օրինակ

Տուժողի օրինական ներկայացուցչի (հոր) նկատմամբ ջղային, բարձր և մեղադրական տոնով. «Ձեր ազնիվ որդին սուտ ցուցմունք է տվել, բոլոր տեսակի ախմախ բաներ է գրել, 5-6 թերթ սուտ ցուցմունք է տվել, ո՞նց կբացատրեք» (սա տեղի ունեցավ տուժողի հոր հարցաքննության ընթացքում): «Այն, որ ձեր որդին այսօր տուժողի ներկայացուցիչ է ճանաչվել, ձեզ հանկարծ յոթերորդ երկնքում չզգաք, հեսա ձեր որդուն ենք հարցաքննելու», այս արտահայտությունը դատավորը արեց, երբ տուժողի օրինական ներկայացուցիչը հարց էր տալիս ամբաստանյալի օրինական ներկայացուցչին:

Օրինակ

Տուժողի օրինական ներկայացուցչի՝ հոր նկատմամբ, երբ վերջինս հարցեր էր ուղղում ամբաստանյալին, այսպիսի արտահայտություն թույլ տվեց. «...Դու էնքան բացթողում ունես էս կյանքում, քեզ թվում է՝ քո գլխին կարկուտ չի խփել, այ էսենց ցոգոլ ես արտադրել» (նկատի ունենալով որդուն):

Օրինակ

Անչափահաս տուժողի նախաքննական ցուցմունքները կարդալուց հետո դատավորը հաստատեց, որ դրանք հակասում են դատարանում տված ցուցմունքներին: Տուժողը բացատրեց, որ վախեցել է, դրա համար էլ սուտ ցուցմունք է տվել: Լսելով դա՝ դատավորը կոպիտ կերպով խորհուրդ տվեց. «Վե՛րջ տուր խառնակիչ լինելուն, մի քիչ տղամա՛րդ եղիր, վե՛րջ տուր»:

Օրինակ

Դատավորը հասկացրեց, որ պայմանական հոդվածով կդատապարտի ամբաստանյալին, եթե միայն նրա պաշտպանը տեղեկանք բերի զին-կոմիսարիատից, որ հաջորդ մի քանի օրվա ընթացքում ամբաստանյալը անպայման կգնա ՀՀ զինված ուժերում ծառայելու:

Օրինակ

Դատավորը վկաներից մեկին ասաց, որ հանկարծ չգնա գլուխ գովա, որ եկավ դատարանին հեքիաթներ պատմեց, դատարանն էլ հավատաց:

Օրինակ

Երբ ամբաստանյալը փորձեց վկային ինչ-որ բան ասել, դատավորն այնպես գոռաց ամբաստանյալի վրա, որ բոլորը վախեցան: Ամբաստանյալը հանդգնեց ասել դատավորին, որ իր վրա չգոռա, սակայն դատավորը հունից դուրս եկավ և նորից գոռալով ասաց, որ դատարանին ցուցումներ չտան, թե ինչ անի, դատավորն է ցուցումներ տալիս:

Օրինակ

Դատավորն ամեն կերպ ճնշում էր վկային՝ ասելով, որ նա փորձում է հանցագործին արդարացնել, և իրեն լուրջ քրեական պատասխանատվություն է սպասում դրա համար: Դատավորը բղավում էր վկայի վրա, մի քանի անգամ սպառնաց նրան քրեական պատասխանատվության ենթարկել:

Ի լրումն՝ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական նիստերն ուշացումով սկսելը սովորական երևույթ է, այդ փաստն ինքնին կարող է որակվել որպես ճնշում: Արդարադատության իրականացման ցանկացած փուլ անչափահասների համար հոգեբանական ճնշում և լարվածություն է ստեղծում, որը նրանց ստիպում է լարել ամբողջ ներքին ուժերը: «Ճակատագրական» սպասելիքները անորոշության և հուսահատության զգացումներ են առաջացնում, որը կարող է խարխլել ոչ միայն անչափահասի, այլև նրա օրինական ներկայացուցիչների հոգեբանական կայունությունը[34]: Տվյալ համատեքստում այն փաստը, որ դատարանի նիստերը գրեթե միշտ (ըստ դիտարկումների՝ 98,1% դեպքերում) ժամանակից ուշ են սկսվում, կարող է դիտարկվել իբրև հոգեբանական ճնշում:

Առաջարկություններ

- *Խուսափել ցանկացած արտահայտությունից կամ վարքագծից, որը կարող է արտահայտել դատավորի կողմնակալությունը:*
- *Բարձրացնել դատավորների ինքնատիրապետման, զգացմունքների կառավարման, նյարդահոգեկան կայունության մակարդակը:*
- *Խուսափել անչափահաս ամբաստանյալների, տուժողների, վկաների կամ դատական նիստի այլ մասնակիցների նկատմամբ հոգեբանական կամ այլ կարգի ճնշում գործադրելուց:*
- *Ապահովել դատական քննությունը ժամանակին սկսելը, առանց որևէ չարդարացված ուշացումների:*
- *Այն դատավորները, որոնք կողմնակալություն են ցուցաբերում և խախտում իրենց մասնագիտական վարքագծի պահանջները, պետք է ենթարկվեն կարգապահական պատասխանատվության:*
- *Դատավորների դեմ բողոքները պետք է պատշաճ ձևով քննվեն, իսկ այն դատավորները, որոնց վարքագիծը չի համապատասխանում Դատական օրենսգրքին և Դատավորի վարքագծի կանոններին, պետք է ենթարկվեն կարգապահական պատասխանատվության:*

34 Աղուզումցյան Ռ., Գասպարյան Ա., Մելքոնյան Վ., Իրավաբանական հոգեբանություն/ուսումնական ձեռնարկ, Եր., «Ասողիկ», 2003: Արզումանյան Ս., Գրին է, Իրավաբանական հոգեբանություն, Եր., «Զանգակ-97», 2004: Васильев В.Л., Юридическая психология, М., 2005. Волков В.Н., Юридическая психология, М., 2002. Еникеев М. И., Юридическая психология, М., 2002. Cameron C.A. Theory of fatigue. Man under stress // proc. 9th annual cond. Univ. Adelaide, 1974.

ԳԼՈՒԽ 8. ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՏՉԵԼԻ ԼԵԶՎՈՎ

Միջազգային չափորոշիչներին համաձայն՝ դատական քննությունը պետք է կազմակերպել անչափահասներին հարմարեցված պայմաններում և նրանց մատչելի լեզվով: Բոլոր դատական գործընթացներում անչափահասներին պետք է վերաբերվել՝ հարգելով նրանց տարիքը, հատուկ կարիքները, նրանց հասունության և ըմբռնման մակարդակը՝ ի նկատի ունենալով հաղորդակցման ցանկացած հավանական դժվարություններ: Անչափահասների դատական գործերը պետք է վարել առանց նրանց ահաբեկելու և անչափահասին հարմարեցված պայմաններում:

Երեխայակենտրոն արդարադատության համակարգի դեպքում անչափահաս մեղադրյալը քրեական գործի վարույթի ամբողջ ընթացքում պետք է ներկայացված լինի փաստաբանի կողմից, և դատավարությանը պետք է մասնակցեն նրա օրինական ներկայացուցիչները: Մինչև դատական քննություն սկսելը անչափահասներին պետք է ծանոթացնել դատարանի շենքին և մյուս հարմարություններին, ներգրավված աշխատակիցների դերին և պաշտոնին, դատավորները և մյուս մասնագետները անչափահասների հետ հարաբերություններում պետք է հարգանք և նրբանկատություն ցուցաբերեն, անչափահասների մասնակցությամբ դատական նիստերը պետք է հարմարեցված լինեն անչափահասի ընկալման արագությանը և նրա ուշադրության տևողությանը:

Բացի այդ, անչափահասների մասնակցությունը խթանելու, նրա ողջ իմացական հնարավորությունները համախմբելու և նրանց հուզական կայունությունը պահպանելու համար դատական նիստերի ժամանակ ընդհատումները և ուշադրության շեղումները պետք է նվազագույնը լինեն:

Հենց սկզբից անչափահասի և դատավորի՝ որպես իրավունքների պաշտպանության և արդարադատության իրականացման իրավասու մարմնի միջև նախնական զրույցը հույժ կարևոր է: Ըստ ՄԱԿ-ի «Պեկինյան կանոնների» 10(3)-րդ կետի՝ անչափահասի և իրավապահ մարմինների միջև հարաբերություններն իրականացվում են այնպես, որ հարգվի անչափահասի իրավական կարգավիճակը, նպաստի անչափահասի բարեկեցությանը և խուսափի նրան վնաս պատճառելուց՝ խստագույնս հաշվի առնելով գործի հանգամանքները:

Վերոհիշյալ գործոնների լույսի ներքո դիտորդները գնահատել են դատավարությունների համապատասխանությունը երեխայակենտրոն արդարադատության համակարգին: Անցկացված մոնիթորինգի արդյունքները բացահայտեցին անչափահաս ամբաստանյալներին հարմարեցված արդարադատության իրականացման լուրջ խախտումներ, որը ներկայացվում է ստորև:

Դատական նիստերը հաճախ տևել են հինգ ժամից ավելի, որը թուլացնում է անչափահասի ընդունակությունը հոգեբանական կապ ստեղծելու համար և լիովին հասկանալու իր կատարած հանցանքի և դատավճռի/պատժի միջև կապը: Սա նաև վտանգավոր է այն իմաստով, որ անչափահասն ի վիճակի չէ հետևելու դատական նիստի ընթացքին կամ մասնակցելու իր պաշտպանությանը, քանի որ դեռահասների ուշադրությունը կենտրոնացնելու տևողությունը ավելի կարճ է, քան չափահասներինը:

Դատավորների և անչափահաս ամբաստանյալների միջև նախնական կապ չի հաստատվում, որը զգալիորեն խանգարում է դատավորին հասկանալու անչափահաս ամբաստանյալին, ինչպես նաև նվազեցնում է անչափահասին պատշաճ հարգանքով վերաբերվելու ունակությունը: Այս բոլոր խնդիրները խոչընդոտում են անչափահասների գործերում արդարադատության իրականացումը:

Չնայած դատավորների խոսքը և մեղադրանքի ու դատավճռի հրապարակումը հաճախ համապատասխանում են օրենսդրության պահանջներին, սակայն դրանց կատարումը և

հոգեբանական ազդեցությունը հաճախ անտեսվում են: Այս գործոնը կարող է զգալիորեն վնասել ամբաստանյալի (հետագայում՝ հնարավոր դատապարտյալի) ունակությունը՝ հասկանալ իրեն մեղսագրվող հանցանքի, դրա օրինական, սոցիալ-հոգեբանական և բարոյական գնահատումը և դատարանի վերջնական որոշման բովանդակության միջև կապը: Որպեսզի անձի ուղղումը և փոփոխությունը պատշաճ ձևով իրականացվեն, պահանջվում է կատարված հանցանքի էության (վերը նշված եղանակով) համակողմանի ընկալումը:

Դատավորները հաճախ թերանում են հաշվի առնել անչափահաս անձի ընկալման հնարավորությունները, խոսքի զարգացածության աստիճանը, հոգեվիճակը և մի շարք այլ հոգեբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկություններ, որը հանգեցնում է դատական գործընթացն անիմաստ և կանխակալ լինելու ընկալմանը:

Դատավորները հաճախ ի վիճակի չեն լինում կառավարել դատական քննությունը կամ չեզոքացնել ամբաստանյալի, տուժողի, վկայի կամ այլ մասնակիցների ագրեսիվ վարքագիծը: Որոշ դեպքերում դատավորները նույնիսկ նպաստում են դատավարության մասնակիցների լարվածության, անհանգստության և ագրեսիվության բարձրացմանը:

Վարքագծի շեղումների, տարիքային հոգեբանության և հանցագործի վարքագծի հոգեբանական պայմանավորվածության հիմնական գիտելիքների բացակայության պարագայում դատավորները հաճախ ի վիճակի չեն լինում կառավարել դատական քննության հիմնական մասնակիցների հոգեբանական հուզական վիճակը և վարքագիծը:

Հաճախ դատավորները չեն ունենում ինքնատիրապետման, սթրեսի հանդեպ դիմացկունության և խոսքի ազդեցությանը դիմակայելու հոգեբանական հատկանիշներ:

8.1 ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՆԱԽՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Մինչև դատական քննությունը սկսելը դատավորներն անչափահասների հետ չեն անցկացնում ոչ պաշտոնական զրույցներ և չեն ծանոթացնում դատարանի շենքին և այլ հարմարություններին, ինչպես նաև դատական գործընթացում ներգրավված աշխատակիցների դերին և պաշտոնին:

Դատավորի մասնագիտական գործունեությունը մարդկային գործունեության ամենաբարդ ձևերից մեկն է, որը պահանջում է հոգեբանական և ֆիզիկական ուժերի գերլարում, կշռադատելու և վերլուծելու գերազանց ունակություններ: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում դատավորը պետք է ձևավորի ամբաստանյալի վերաբերյալ լիարժեք բնութագիր, որն արտացոլում է նրա անձը՝ ողջ սոցիալական միջավայրի հետ հարաբերությամբ: Նշված բնութագրի մեջ հստակ պետք է արտացոլված լինեն տվյալ ամբաստանյալի անձի զարգացումը, սոցիալականացման և սոցիալական զարգացման հետագա կանխատեսումները, ինչպես նաև պետք է հստակ տեսանելի լինեն տվյալ անձնային առանձնահատկություններով դեռահասի հետագա վերասոցիալականացման վրա ազդող հնարավոր մեթոդներն ու միջոցները: Այս ամենի արդյունքում արդար դատավճռի կայացումը պետք է լինի ամբաստանյալի և հասարակության միջև առկա կոնֆլիկտի լուծման առաջին քայլը:

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ ամբաստանյալի և դատավորի միջև ներդաշնակ հարաբերությունների հաստատման դեպքերը իրականում բացակայում են: Միայն դիտարկված դատական նիստերի 10,2%-ի ժամանակ (նիստը բացելուց առաջ կամ հետո) դատավորները ունեցել են ընդհանուր նախնական զրույց անչափահասների հետ:

Նախնական զրույցը հոգեբանական և սոցիալ-հոգեբանական մեծ ազդեցություն կարող է

ունենալ անչափահասի կողմից դատավարության գործընթացը պատշաճ ձևով ընկալելու, դատաքննության ընթացքում համարժեք վարքի և հույզերի դրսևորման և դրանց կառավարման համար[35]:

Շփումների ընթացքում դատավորը պետք է ծանոթանա ամբաստանյալի ընտանեկան պայմաններին, դրա հետ կապված դրական և բացասական գործոններին, իրավախախտում կատարելուն նպաստող սոցիալական և հոգեբանական պայմաններին[36]:

Անչափահասը պետք է գիտակցի, որ դատարանը և պետությունը չարացած ու դաժան վերաբերմունք չունեն իր հանդեպ: Պետք է հասկանա ու գիտակցի, որ նրանից վրեժ չեն լուծում, որ դատարանը միայն պատժիչ գործառույթ չի իրականացնում, և վերջինիս դերը շատ ավելի դաստիարակչական է ու կանխարգելիչ: Այս համատեքստում չափազանց կարևորվում է նաև անչափահասի կողմից իր արարքի լիարժեք գիտակցման հանգամանքը: Մասնավորապես, որ իր կատարած արարքի՝ հետաքննության և դատական քննության տեսքով իրավական վերաբերմունքն ու հետևանքները լոկ հարկադրանքի ձևեր են: Իսկ իր արարքն ունի առավել սոցիալական ու սոցիալ-հոգեբանական, արժեքային ու բարոյական հետևանքներ, կարող է ունենալ առավել ծանր հետևանքներ պետության և հասարակության, իր ընտանիքի, բակի, շրջապատի, հարևանների ու իր մյուս հասակակիցների վրա:

Այս առումով, ստացված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ամբաստանյալների 25%-ը միակողմանի ծնողազուրկ է (ոչ լրիվ ընտանիքներից է): Մոտ 50%-ը դպրոց չի հաճախում կամ հաճախում է հատուկ դպրոց: Կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է նաև, որ ուսումնասիրվող անչափահասների մոտ 88%-ը մեղադրվում է առաջին անգամ, ինչը մեծապես ազդում է լարվածության, տագնապի զգացում ունենալու, նյարդահոգեկան անկայունության առավել սրվելու վրա:

Առաջնային նման շփման հաստատումն է ապահովում դատարանի իրավահոգեբանական, հոգեբանաքրեաբանական այն նպատակները, որոնք դրված են արդարադատության իրականացման հիմքում:



Գծապատկեր 10. Անչափահաս ամբաստանյալների հետ նախնական զրույցը[37]

35 Տե՛ս վերը նշված ծնթ. 34, Արզումանյան Ս., Գրին է:

36 Арзуманян С. Дж., Психолого-криминологическая теория становления личности правонарушителя (генезис криминогенных установок и их раняя профилактика), Ер., 2000.

37 Այս գծապատկերը վերաբերում է միայն այն ամբաստանյալներին, որոնց 18 տարին դատաքննության ժամանակ դեռ չէր լրացել:

8.2 ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ

Իրավախախտ անչափահասի ձևավորման և զարգացման սոցիալ-հոգեբանական կարևորագույն գործոններից մեկը ուսման նկատմամբ բացասական վերաբերմունքն է, ինչը նրանց հակադրում է դպրոցին, դասարանին, հասակակիցներին և ողջ կրթական գործընթացին: Դատավորի խոսքը ավելի հասանելի և հասկանալի կլինի, եթե այս առանձնահատկությունները հաշվի առնվեն[38]: Սակայն ուսումնասիրությունները վկայում են, որ մոտ 53% հաճախականությամբ դատավորները խրթին լեզվով են ներկայացնում մեղադրանքը, և ամբաստանյալները դժվարություն են ունենում լիարժեք պատկերացում կազմել իրենց առաջադրված մեղադրանքի վերաբերյալ:

Այդ նպատակով խիստ կարևոր է, որ ամբողջ դատաքննությունը և դատարանի վերջնական որոշումը լինեն հասկանալի և հստակ:

Այս առումով չափազանց կարևորվում է նաև վերջնական դատավճռի՝ հասկանալի, ընկալելի լինելու հանգամանքը: Ուսումնասիրությունները վկայում են, որ հաճախ դատավորների կողմից վերջնական դատավճիռը ոչ միայն լիարժեք չի ներկայացվում, այլև կարդացված դատավճիռը ներկայացվում է նույնիսկ չափահաս անձանց համար խրթին լեզվով: Այս հանգամանքը կարող է խոչընդոտել ինչպես ողջ դատավարության ընթացքում ամբաստանյալի ուշադրության կենտրոնացվածությունը, իր հետ կատարվածը լիարժեք գիտակցելը, այնպես էլ հետագայում իր արարքի և դատավճռի միջև տրամաբանական և հոգեբանական կապը գիտակցելը[39]:



Գծապատկեր 11. Արդյոք դատավորը բացատրե՞լ է մեղադրանքը հստակ և հասկանալի ձևով

8.3 ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐԻ ՀՈԳԵՎԻՃԱԿԸ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ՄԹՆՈԼՈՐՏԸ

38 Տե՛ս ծնթ. 34:

39 Տե՛ս վերը նշված ծնթ. 34, Վոլկով Վ.Ն.:

Դիտորդները նաև պետք է գնահատեին անչափահաս ամբաստանյալների հոգեվիճակը: Ամբաստանյալի հոգեվիճակը սովորաբար գնահատվում է՝ ելնելով դատական քննության ընթացքում նրա դրսևորած ապրումներից և վարքագծից: Դրանք այն ապրումներն են, որոնք առաջանում են դատավորի, պաշտպանի, դատախազի կամ ազգականների ներկայությունից, ինչպես նաև նրանց վերաբերմունքից և ընդհանրապես ամբաստանյալի՝ ողջ դատավարությանը մասնակից լինելուց[40]:

Սույն մոնիթորինգի շրջանակներում ամբաստանյալներին այս կամ այն կերպ բնորոշ հոգեվիճակները դասակարգվել են բևեռացվածությամբ, մասնավորապես՝ հանգիստ-հուզական, անտարբեր-ագրեսիվ, հարգալից-անհարգալից, համարժեք-ոչ համարժեք, լիովին տիրապետում էր իրեն-ամենևին չէր տիրապետում: Նշված հոգեվիճակների բևեռայնացումը հնարավորություն է տալիս հոգեվիճակների դրսևորման վերաբերյալ առավել տարբերակված և օբյեկտիվ պատկեր ստանալ:

Դատաքննության ընթացքում հոգեբանական ասպեկտները գնահատելու և դիտորդների սուբյեկտիվության հավանականությունը նվազեցնելու համար մոնիթորինգ անցկացնողներին տրամադրվել են որոշակի ստանդարտներ՝ կոնկրետ պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար:

Դատարանում անչափահասի վարքագծի պատշաճ լինելու գնահատման համար դիտորդները դիտարկում էին, թե արդյոք անչափահասն ի վիճակի՞ էր զերծ մնալ ներկա գտնվող ազգականների զգայական պոռթկումներին կամ լացին արձագանքելուց, ի վիճակի՞ էր ընդունել իր հանցանքը և կյանքի նոր հեռանկարները: Դրան կարող են նպաստել դատավճիռը լիովին հասկանալը, խուճապի և ագրեսիայի չմատնվելը:

Դիտորդները որպես անհարիր վարքագիծ գրանցել են դատավորի կամ դատարանում ներկա մյուս անձանց հասցեին վիրավորական արտահայտությունները, ապակողմնորոշումը, ագրեսիվ, թշնամական կամ ընդդիմադրող վարքագիծը, թյուր ըմբռնումը, արտահայտվելու ունակությունը, ուշացած զարգացման նշանները, ինչպես նաև այլ առանձնահատկություններ:

Տվյալ իրավիճակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատաքննության ավելի քան 60% ժամանակահատվածում ամբաստանյալները հանգիստ էին (այսինքն՝ նրանք գիտակցում էին իրենց կատարած հանցանքը և հնարավոր պատիժը և դատավճիռը, դրսևորում էին ոչ հուզական վարքագիծ, հանգիստ էին և կանխատեսելի): Ամբաստանյալներն ի վիճակի էին լիովին կառավարել իրենց հոգեվիճակը մոտ 80% ժամանակահատվածում:

Դատական նիստի ամբողջ ընթացքում՝ մոտավորապես 70% ժամանակահատվածում, անչափահասների հոգեվիճակը համարժեք էր, այսինքն՝ ամբաստանյալները չէին լալիս կամ գոռում, չէին տրվում ներկա գտնվող ազգականների հույզերին և դատավճռին անհամաձայնության դեպքում հայտարարություն էին անում պաշտպանի միջոցով, իսկ նրա բացակայությամբ՝ խոսում էին միայն դատավորից թույլտվություն ստանալուց հետո:

Մոնիթորինգը նաև ցույց տվեց, որ ազգականների ներկայությունը հիմնականում չէր ազդում ամբաստանյալների վարքագծի վրա. մոնիթորինգը չբացահայտեց որևէ դեպք, երբ ազգականների ներկայությունը բացասաբար է ազդել ամբաստանյալների վրա: Մոնիթորինգի ենթարկված բոլոր դատական նիստերի 31,1%-ի ընդհանուր մթնոլորտը գնահատվել է հանգիստ, իսկ 17%-ինը՝ լարված:

Առաջին հայացքից դատաքննությունների մեծ մասն անցել է հանգիստ մթնոլորտում, որի ընթացքում ամբաստանյալների հոգեվիճակը բնութագրվում է առավել հուզական կայունությամբ և կանխատեսելիությամբ: Սակայն առավել խորքային քրեաբանահոգեբանական վերլուծությունները վկայում են, որ այդ թվացյալ հանգիստ և կանխատեսելի հոգեվիճակների հիմքում կարող է գերակշռել անտարբերության զգացողությունը և անտաբեր հոգեվիճակը դատարանի, պատժի,

40 Абрамова Г.С., Возрастная психология. М., 2000.

Տե՛ս վերը նշված ծնթ. 36, Արզումանյան Ս.Ձ.

պատժաչափի և ընդհանրապես արդարադատության կայացման ամբողջ գործընթացի նկատմամբ:

Այդ պնդման վկայությունն է նաև այն հանգամանքը, որ դատական նիստերի ընթացքում ամբաստանյալները մոտ 70%-ով անտարբեր էին, որը թեև մոնիթորինգի շրջանակներում դիտարկվում է որպես ագրեսիվության հակառակ բևեռ, այնուամենայնիվ արտահայտում է վերաբերմունք դատավարության ամբողջ գործընթացի նկատմամբ:

Ասվածն ավելի անհանգստացնող է դառնում, եթե հաշվի առնենք, որ միջազգային փորձը և գիտական աղբյուրները վկայում են, որ նման վարքագիծ առավել հաճախ կարող են դրսևորել երկու և ավելի դատվածություն ունեցող անձինք[41]: Մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ անչափահասների մեծ մասը (88%) մեղադրվում էր առաջին անգամ: Նշված անտարբեր վերաբերմունքը, համեմատաբար հանգիստ և կանխատեսելի հոգեվիճակները և ըստ էության լարված դատական նիստերի նվազ թվաքանակը կարող են պայմանավորված լինել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով:



Գծապատկեր 12. Անչափահաս ամբաստանյալների հոգեվիճակը դատական քննության ընթացքում

8.4 ԴԱՏԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ԴՐԴՈՒՄ ԿԱՄ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԱԳԾԻ ՉԵՋՈՔԱՑՈՒՄ ԿԱՄ ԿԱՆԽՈՒՄ

Հաճախ անչափահասին ագրեսիվության կարող են դրդել խիստ անարդար մոտեցումը, սուտը, գոռգոռոցները, լացը, ներկա գտնվող մոր կամ հոր բարկությունը[42]:

Դատավորի մասնագիտական պարտքն է ոչ միայն մասնակիցներին կարգի հրավիրել, այլև հարցերը վերախմբագրել ու վերաշարադրել այնպես, որ լարվածություն չառաջացնի: Հաճախ անհրաժեշտ է լինում բաց թողնել հարցը և դրան կրկին անդրադառնալ ավելի ուշ[43]: Որպես կանոն՝ ագրեսիվության են դրդում բոլոր փակ հարցերը, որոնց պետք է պատասխանել «այո» կամ «ոչ» («մեղավո՞ր ես» կամ «մեղքդ ընդունո՞ւմ ես»): Շատ կարևոր է նաև հնչերանգը, զուտ մարդկային

41 Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е., Психология преступления и наказания, М., 2000. Долгова А.И., Криминология, М., 2001. Пирожков В.Ф., Криминальная психология, М., 2001.

42 Бандура А., Подростковая агрессия, М., 2000. Фельдштейн Д. И., Психология взросления, М., 2001.

43 Афанасьева О.В., Пищелко А.В., Этика и психология профессиональной деятельности юриста, М., 2001.

մեղադրելը, պարսավելը («բա դու մա՞րդ ես», կամ «բա դու տղամա՞րդ ես», կամ «քո ծնողներն են մեղավոր» և այլն):

Դատական հոգեբանության պրակտիկայում ագրեսիվության արտահայտություններից են ակնհայտ անհարգանքի կամ վիրավորանքի, դիտողությունների կամ սուր քննադատական արտահայտությունները, որոնք կարող են օգտագործվել անչափահաս ամբաստանյալի, դատական նիստի այլ մասնակիցների, դատավորի կամ այլ պետական ծառայողների նկատմամբ: Այս նպատակով խիստ կարևոր է զրուցել անչափահաս ամբաստանյալի հետ մինչև դատական նիստը սկսվելը՝ բացահայտելու անչափահաս ամբաստանյալի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները և գնահատելու դատաքննության լարված և սթրեսային պայմաններին հոգեբանորեն նրա պատրաստ լինելը[44]: Բացի այդ, դատավորի համար անհրաժեշտ է հոգեբանորեն պատրաստ լինել անչափահասի հետ զրույց անցկացնել, լավ տիրապետել խոսակցական և ինքնատիրապետման հմտություններին[45]:

Դատավորը դատական նիստերի 16%-ում չեզոքացրեց ագրեսիվությունը և 2,9%-ում ագրեսիվության դրդեց: Որոշ դեպքերում, օրինակ՝ դատավորն ինքն էր ագրեսիվ տրամադրված պաշտպանի բացակայության պատճառով կամ իր մեղադրական պահվածքով և նյարդային գոռգոռոցներով ագրեսիվ մթնոլորտ էր ստեղծում նիստերի դահլիճում:

Մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ դատավորները հաճախ ցուցաբերում են ոչ պատշաճ, անհարգալից, նաև վիրավորական վարքագիծ ամբաստանյալների, նրանց օրինական ներկայացուցիչների, տուժողների, վկաների և այլ մասնակիցների նկատմամբ:

Օրինակ

Դատավորն իմանալով, որ ամբաստանյալներից մեկը ներկայացել է տուժողին Դաժանիկ մականունով, դատական նիստի ընթացքում շարունակ ամբաստանյալին դիմում էր այդ մականունով:

Օրինակ

Նիստին ներկա բոլոր մասնակիցներին հորդորելով անջատել բջջային հեռախոսները՝ հենց դատավորը չի պահպանել այս կարգը, և դատավճռի հրապարակման պահին հնչել է նրա հեռախոսազանգը:

Օրինակ

Ամբաստանյալի օրինական ներկայացուցչի (մոր) նկատմամբ՝ դաստիարակչական տոնով. «Զբաղվեի՛ք ձեր երեխայով, բերել եք-հասցրել եք էն վիճակի... տանեիք-բուժեի՛ք, ուրիշի տունը չքանդվեր, հենց ձեր տունը չքանդվեր...», ինչպես նաև զգուշացնելու տոնով՝ «... բա՞ն ունեք ասելու՝ ասե՛ք, հետո դատարանից դուրս բաներ չխոսեք...»:

Օրինակ

Տուժողին՝ վերջինիս հարցաքննության ժամանակ սպառնալու, վախեցնելու տոնով. «...քո բոլոր գրածները ես դահլիճի առաջ հրապարակելու եմ, իմացի~, հա...», «...լսի՛, տղա ջան, լսի՛ է... կարո՞ղ ա գիտես ստեղ քրդի փափախը դրած լսում ենք քեզ...», «... դու դատավորին ցուցում չտաս, քո տեղով- քաշով...», իսկ վերջում՝ «... դու իմ կոչին չլսեցիր, չմաքրվեցիր, քեզ վնասեցիր, քո հոգուց տիղմը

44 Чуфаровский Ю.В., Юридическая психология, М., 2003, տե՛ս վերը նշված ծնթ. 36, Աղուզումցյան Ռ., Գասպարյան Ա., Մելքոնյան Վ. և Васильев В.Л.:

45 Տե՛ս վերը նշված ծնթ. 34, Արզումանյան Ս., Գրին Է., և ծնթ. 44, Աֆանասևա Օ.Վ., Պիշչելկո Ա.Վ.:

չհանեցիր, ամբողջ կյանքում կմնա դա»:

Օրինակ

Տուժողի նախաքննական ցուցմունքները կարդալուց հետո, երբ որոշ ցուցմունքներ հակասում էին դատարանում տված ցուցմունքներին, և տուժողը բացատրում էր, որ վախեցած էր, դրա համար էլ սուտ ցուցմունք էր տվել, դատավորը, դիմելով նրան, բարձր ձայնով, ասաց. «Վե՛ր ջոջ տուր խառնակիչ լինելուն, մի քիչ տղամա՛ռդ եղիր, վե՛ր ջոջ տուր»:

8.5 ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀՈՒԶԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Դատավարության ընթացքը, լինելով լարված իրավիճակ, նիստի բոլոր անդամներից պահանջում է հոգեհուզական, մտածական լարված աշխատանք: Այստեղ շատ կարևորվում է դատավորի նյարդահոգեկան կայունությունը, լարված, սթրեսային իրավիճակներում սթրեսակայունության, սթրեսադիմացկունության ապահովումը, արագ կողմնորոշումը և այլն: Մասնավորապես, այս առանձնահատկությունները կարևորվում են ոչ միայն որպես դատավորի գործունեությանն ու պաշտոնին ներկայացվող անձնային կարևոր որակներ: Այս առանձնահատկությունները պետք է նպաստեն, որ դատավորը կարողանա ապահովել նույն սթրեսակայունությունն ու լարված իրավիճակներում գործելու ունակությունը նաև նիստի մյուս մասնակիցների մոտ (այդ թվում՝ ամբաստանյալներ, տուժող, վկա, օրինական ներկայացուցիչներ, փաստաբան, դատախազ, ինչպես նաև ներկա գտնվող այլ անձինք)[46]:

Դատավարության ընթացքում մասնակիցների հոգեվիճակների ու դրանց դրսևորման որոշ ձևերի վերլուծությունները վկայում են, որ հաճախ գերակշռում են լացը, գոռգոռոցը, հայհոյանքը, վիրավորանքն ու ոչ պատշաճ վերաբերմունքը: Ընդ որում, ինչպես վկայում են տվյալները՝ առավել հաճախ հուզական և վարքային ակտիվություն դատական նիստերի դահլիճում ցուցաբերում են ամբաստանյալները՝ (26,6%), առավել հաճախ խոսքը գոռգոռոցի մասին է՝ 8,9%: Գոռգոռոցը՝ որպես այդպիսին, առկա էր դիտարկված նիստերի 25,8%-ի ընթացքում: Ընդ որում, շատ հաճախ են գոռգոռում նաև դատավորներն ու դատախազները, համապատասխանաբար՝ 8,1% և 4,8%: Դեպքերի 13,7%-ում տրվել են ուղղորդող հարցեր, ընդ որում՝ 7,2%-ը դատախազի կողմից, 4,8%-ը՝ դատավորի, և միայն 1,6%-ը՝ պաշտպանի:

Նման դրսևորումների քրեաբանահոգեբանական վերլուծությունը վկայում է, որ

- ամբաստանյալների հետ դատավորների կողմից չեն իրականացվել հոգեբանական նախապատրաստական աշխատանքներ՝ ուղղված արտաքին աշխարհից եկող սթրեսորներին (տուժողի խոսք, վկաների ցուցմունքներ, դատախազի մեղադրական ճառ և այլն) դիմակայելուն.
- դատավորի կողմից չեն բացահայտվել անչափահասների այն հոգեբանական առանձնահատկությունները, որոնք կարող էին խոչընդոտել նյարդահոգեկան անկայունության, լարվածության և ագրեսիվության դրսևորումներ.
- թույլ է դրսևորվում լարված իրավիճակներում դատավորների, դատախազների և փաստաբանների կողմից արդյունավետ գործելու ունակությունը:
- թույլ են դրսևորվում պաշտոնատար անձանց սթրեսակայունությունը, կառավարման ունակությունները, ինքնատիրապետումը և սթրեսային իրավիճակներում արագ որոշում կայացնելու ունակությունները:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է դատարանի դահլիճում տիրող հուզական և

46 Տե՛ս վերը նշված ծնթ. 44, Աֆանասևա Օ.Վ., Պիշչելկո Ա.Վ., ծնթ. 34, Վասիլև Վ.Լ. և Քեմերոն Ք.Ա.:

վարքագծային մթնոլորտը:

	Վնասվածք	Դաստիարակ	Պաշտպան	Ամբաստանյալ	Տուժող	Վկա	Ծնողներ/խնամակալներ	Այլ անձինք	Ընդամենը
Լաց	-	-	-	4	2	-	4	1	11
Գոռգոռոց	10	6	1	11	3	-	-	1	32
Հայհոյանք	-	-	-	6	-	-	-	-	6
Վիրավորանքներ	-	-	-	6	2	-	-	1	9
Ոչ պատշաճ ֆիզիկական վարքագիծ	-	-	-	6	-	-	-	1	7
Բռնություն	-	-	-	-	-	-	-	-	0
Սադրանք	-	-	-	-	1	-	-	-	1
Ուղղորդող հարցեր	6	9	2	-	-	-	-	-	17
Ընդամենը	16	15	3	33	8	0	4	4	83

Աղյուսակ 5. Դահլիճում տիրող զգացմունքային և վարքագծային մթնոլորտը

8.6 ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԻՐ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՀԱՐԳԱԼԻՑ ՈՒ ՆՐԲԱԶԳԱՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՐԺԱՆԱՆԱԼ

Անչափահասի (տուժողի, վկայի, ամբաստանյալի) հարցաքննությունը կարևորագույն գործողություններից (փուլերից) մեկն է քրեական գործերով դատավարության ընթացքում:

Ի տարբերություն նախնական քննության փուլի, երբ հավաքվում են գործի վերաբերյալ տեղեկությունները, վերլուծվում և ամփոփվում են բավական երկար ժամանակահատվածում, և քննիչը հիմնավոր ուսումնասիրություն կատարելուց հետո հնարավորություն ունի տարբերակել գործի էական կամ ոչ էական հանգամանքները, դատավորի ժամանակը չափազանց սահմանափակ է: Գործի էական հանգամանքների, փաստերի վերաբերյալ դատավորը միջնորդավորված տեղեկատվություն է ստանում գործի նյութերի, փաստաբանի, դատախազի ելույթների և ամբաստանյալների ու դատաքննության այլ մասնակիցների հարցաքննություններից:

Այս փուլում խիստ առաջնային է դատավորի, փաստաբանի և դատախազի կողմից անձի տարիքային-հոգեբանական առանձնահատկությունների կարևորումը:

Մասնավորապես, առաջնային են անչափահասի նկատմամբ օբյեկտիվ և առանց խտրականության մոտեցումը՝ անկախ նրա սոցիալական պատկանելությունից, խոսքի հղկվածությունից, ինչպես նաև մեղսագրվող արարքի բովանդակությունից:

Հաջորդ հանգամանքը, որ անհրաժեշտ է կարևորել, անչափահասի աշխարհայացքն է,

արժեքներն ու դիրքորոշումները, որոնք դրսևորվում են նրա խոսքի միջոցով: Այս առումով հաճախ է պատահում, որ հարցին պատասխանելիս անչափահասն իր ուշադրությունը կենտրոնացնում է երկրորդական հանգամանքների վրա (միտումնավոր կամ առանց գիտակցելու, որ դրանք երկրորդական են): Անհրաժեշտ է, որ հարցաքննությունն ընթանա անչափահասի ընկալման արագությանը համընթաց:

Անչափահասին պետք է հնարավորություն ընձեռվի արտահայտվել այնպես, ինչպես ինքը «հարմար է գտնում», բացի այն հայտարարություններից, որոնք պաշտպանի կողմից ամբաստանյալի շահերի դեմ են դիտարկվում[47]:

Այս առումով ուսումնասիրությունները վկայում են, որ ոչ միշտ են դատավորները դրսևորում անհրաժեշտ համբերատարություն անչափահաս ամբաստանյալների խոսքի նկատմամբ: Խոսքը, ինչպես նաև մտավոր ունակությունները, հոգեհուզական ոլորտի զարգացումը, հոգեկանի զարգացումը տարիքային և անձնային-հոգեբանական այն առանձնահատկություններն են, որոնք հաշվի չառնելը խոչընդոտում է դատավարության ընթացքում անչափահասի ակտիվ ներգրավվածությունը:

Անչափահասների տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են ընկալման, ուշադրության կենտրոնացման, հիշողության, մտածելակերպի և հոգեբանական զարգացվածության մեջ, հաճախ անտեսվում են:

Ստորև ներկայացված գծապատկերները քանակական տեղեկություններ են տրամադրում այն հարցերի վերաբերյալ, թե արդյոք հարցաքննության ժամանակ անչափահասներին հնարավորություն տրվե՞լ է իրենց մտքերն արտահայտել մինչև հարցեր տալը, և արդյոք նրանք հնարավորություն ունեցե՞լ են ամբողջ դատաքննության ընթացքում իրենց մտքերն արտահայտել առանց դատավորի կամ դատախազի միջամտության:



Գծապատկեր 13. Արդյոք ամբաստանյալներին հնարավորություն ընձեռվե՞լ է դատարանում հարցաքննության ժամանակ արտահայտել իրենց մտքերը

47 Տե՛ս վերը նշված ծնթ. 36, Արզումանյան Ս.Ձ., վերը նշված ծնթ. 34, Ենիկեև Մ.Ի., և վերը նշված ծնթ. 44՝ Չուֆարովսկի Յու.Վ.:



Գծապատկեր 14. Արդյոք ամբաստանյալներին հնարավորություն տրվե՞լ է ամբողջ դատական քննության ընթացքում իրենց մտքերն արտահայտել առանց որևէ միջամտության

8.7 ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՈՒՂԵԿՑՈՒՄԸ (ԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ, ԾՆՈՂՆԵՐ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐ)

Անչափահասին ընդհանուր հոգեբանական և հուզական օգնություն ցուցաբերելու համար ծնողները կամ օրինական ներկայացուցիչները նույնպես պետք է ներկա լինեն դատական քննությանը[48]: Ծնողները պետք է անչափահասի ձերբակալման մասին հնարավորինս վաղ տեղեկացվեն՝ ծնողական օգնություն ցույց տալու համար:

Այն դեպքերում, երբ անչափահասները մեղադրվում են հանցագործության մեջ, ներպետական օրենսդրությունը պահանջում է պաշտպանի[49] պարտադիր մասնակցություն, ինչպես նաև անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությանը մասնակցում է անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը[50]:

Անչափահասների հարցաքննության և դատավարության ընթացքում մանկավարժների կամ սոցիալական աշխատողների ներգրավվածությունը պահանջող դրույթ գոյություն չունի:

Մինչդեռ, մինչև 16 տարեկան անչափահաս վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ, այդ հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը[51]:

Մոնիթորինգը նաև վկայում է, որ անչափահասների արդարադատության նույնիսկ այս սահմանափակ ընթացակարգային հատուկ երաշխիքները գործնականում չեն իրականացվում:

Հետազոտությունը բացահայտում է նաև հանցանք կատարելու պահին անչափահաս, սակայն դատական քննության ընթացքում չափահաս դարձած ամբաստանյալների օրինական ներկայացուցիչների մասնակցության ոչ միասնական պրակտիկա: Դիտարկված 8 դատական

48 Տե՛ս ՄԱԿ-ի Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), կանոն 15:

49 ՀՀ ՔԴՕ, հոդված 69, մաս 1 (6):

50 ՀՀ ՔԴՕ, հոդված 441:

51 ՀՀ ՔԴՕ, հոդված 207:

գործերի դեպքում անչափահաս-չափահաս ամբաստանյալներին ուղեկցում էին նրանց օրինական ներկայացուցիչները, մինչդեռ երկու դեպքերում դատական քննությունն անցկացվեց առանց օրինական ներկայացուցիչների: Այսպիսով, այս երկու դեպքերում անչափահաս-չափահաս ամբաստանյալները զրկված էին այդ կարևոր երաշխիքից և դատական քննության ժամանակ ներկայացված չէին օրինական ներկայացուցչի կողմից:



Գծապատկեր 15. Օրինական ներկայացուցիչների ներգրավվածությունը դատական քննության ժամանակ

8.8 ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼԻ ՏԱՐԻՔԻՆ, ՄՏԱՎՈՐ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ մոտավորապես 40-45% դեպքերում դատավորներն ի վիճակի չեն լինում հաշվի առնել ամբաստանյալների տարիքի և զարգացածության բնորոշ առանձնահատկությունները՝ կապված նրանց տարիքի, խոսքի զարգացածության և ընկալումների հետ:

Տարիքին համապատասխան հոգեբանական առանձնահատկություններն այն են, որ 12-ից մինչև 17-18 տարեկանը անձը սովորաբար ինքնանույնացման դժվարին վիճակում է գտնվում, որը հաճախ զուգորդվում է ագրեսիվությամբ, կոնֆլիկտների հանդեպ հակումով և բարձր զգացմունքայնությամբ: Այս հատկանիշների հետ հաշվի նստելու համար դատավորը պետք է լինի խոհեմ, ըմբռնող և ընկալունակ, ձեռնպահ մնա ամբաստանյալի նկատմամբ որևէ արտահայտություններից կամ ագրեսիվ գործողություններից, խուսափի կոպիտ արտահայտություններ կամ ոչ տեղին դիտողություններ թույլ տալուց: 40% դեպքերում դատարանները թերացել են հաշվի առնել այս գործոնները: Մոնիթորինգի տվյալները ցույց են տալիս, որ անչափահաս ամբաստանյալների նկատմամբ դատավորների վերաբերմունքը (հարցաքննությունը ներառյալ) հաճախ նույնն է, ինչ չափահաս ամբաստանյալների հանդեպ: Որոշ դեպքերում դատավորները նույնիսկ ակնհայտորեն անտեսում էին ամբաստանյալներին:

Մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ հաճախ դատավորները նիստի ընթացքում արտահայտվում են շատ արագ և խիստ իրավական ձևակերպումներով, ինչը դժվար հասկանալի

է նույնիսկ ներկա գտնվող օրինական ներկայացուցիչների համար: Որոշ դեպքերում դատավորի մտքերը և դատական նիստի ընթացքում տեղի ունեցող երևույթներն անհասկանալի և անմատչելի են հատկապես անբաստանյալների համար:

Սա ընկալման տեմպն է, որն արտահայտվում է տրված հարցերին կամ խոսքին ադեկվատ պատասխանելու մեջ: Դատավորի խոսքը, հարցերը պետք է համապատասխանեն անչափահասի խոսքի ընկալման և դրան արձագանքելու տեմպին: Անչափահասի ընկալման արագությունն ու ինտենսիվությունը դատարանները հաշվի չեն առել մոտ 44,0% հաճախականությամբ:

Մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ դատավճռն ընթերցվում է բավական արագ և հաճախ բառերի ու ամբողջական նախադասությունների դժվարըմբռնելի (անհասկանալի) արտաբերությամբ: Դատավճռի ընթերցման տեմպն ու դատավորի խոսքի (արտասանության) առանձնահատկությունները դատավճռի որոշ մանրամասներ, ակնհայտորեն, դժվար ըմբռնելի են դարձնում ոչ միայն անչափահասների, այլև նրանց օրինական ներկայացուցիչների համար:

Խոսքի զարգացածություն - սա նույնպես մտավոր ունակությունների նման հաճախ արտահայտված է լինում դատահոգեբանական փորձաքննության եզրակացություններում: Ուշադրություն է դարձվում անչափահասի բառապաշարին, խոսքի տրամաբանվածությանը, հարստությանը, հասկանալիությանը, ադեկվատ պատասխաններին: Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ, կրթական գործընթացից դուրս մնալով, անչափահաս իրավախախտների մոտ, բացի խոսքի թերզարգացման խնդիրներից, բառապաշարը խիստ աղքատիկ է և միևնույն ժամանակ՝ հաճախակի ժարգոնային բառապաշարի օգտագործումը: Այս երևույթը նույնպես պետք է ադեկվատ ընկալվի դատավորների կողմից և ծաղրի, ջղայնության կամ այլ բացասական վերաբերմունքի չարժանանա: Ուսումնասիրությունները վկայում են, որ դատարանի կողմից մոտ 45% հաճախականությամբ հաշվի չի առնվում ամբաստանյալի խոսքի զարգացման և առանձնահատկությունների գործոնը: Հաճախ ամբաստանյալին նրա իրավունքները և պարտականությունները պարզաբանելիս դատավորն ուղղակի կարդում է թղթի վրայից, առանց անչափահասի համար ավելի հասկանալի բառերով բացատրելու:

Ֆիզիոլոգիական վիճակը - անչափահասի առողջական վիճակը, ինքնազգացողությունը (հատկապես հաշվի առնելով նրա տեղափոխումը կալանավորվածներին պահելու վայրից), նյարդահոգեկան կայունությունը, ընկճվածությունը, հոգեֆիզիոլոգիական առումով՝ նաև ուշադրության կենտրոնացումն ու կայունությունը: Այս հանգամանքները դատավորների կողմից հաշվի չեն առնվել մոտ 47% դեպքերի հաճախականությամբ: Որոշ դեպքերում դատավորը հաշվի չի առել, որ ամբաստանյալն անհավասարակշիռ է (նա իրեն շատ տարօրինակ է պահել), և նրանից նորմալ վարքագիծ էր պահանջում:

Վերը նշված հանգամանքներին զուգահեռ՝ անչափահաս ամբաստանյալների, վկաների և տուժողների հարցաքննությունների ժամանակ բացակայում են հոգեբան մասնագետները կամ մանկավարժները: Մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ դիտարկված դատական գործերից և ոչ մեկում փորձագետներ կամ մասնագետներ ներգրավված չեն եղել:

Հազվագյուտ դեպքերում փորձագետ կամ մասնագետ մասնակցել է անչափահաս վկաների հարցաքննությանը: Այս հանգամանքն էլ ավելի է բարդացնում դատավորների կողմից անչափահասների տարիքային և անձնային այլ առանձնահատկությունները հաշվի առնելու գործընթացները: Միևնույն ժամանակ՝ բարդանում է նաև անչափահասների կողմից դատավարության գործընթացին ակտիվ ներգրավվածության, տրված հարցերն ընկալելու և ադեկվատ պատասխաններ տալու, ինչպես նաև ընդհանրապես հոգեբանական ապահովության ու պաշտպանվածության հոգեվիճակների առաջացումը[52]:

52 Антонян Ю. М., Юстицкий В. В., Несовершеннолетние преступники с акцентуациями характера, М., 1993: Տե՛ս վերը նշված ծնթ. 40, Աբրամովա Գ.Ս., և վերը նշված ծնթ. 34, Քեմերոն Ք.Ա.:



Գծապատկեր 16. Արդյոք գործի դատաքննության ժամանակ դատավորը հաշվի առե՞լ է անչափահասի տարիքը, մտավոր ունակությունները, ընկալման արագությունը, խոսքի զարգացածությունը և ֆիզիկական վիճակը

Օրինակ

Ամբաստանյալի իրավունքներն ու պարտականությունները բացատրելիս դատավորը հաշվի չառավ վերջինիս անչափահաս լինելը, քանի որ իրավունքները բացատրեց ամբողջությամբ՝ նշելով նաև պաշտպանից հրաժարվելու իրավունքի մասին (մինչդեռ անչափահաս ամբաստանյալներն իրավունք չունեն ընդհանրապես հրաժարվել պաշտպանությունից): Դատավորը զգուշացրեց նաև կեղծ ցուցմունք տալու դեպքում քրեական պատասխանատվության մասին, մինչդեռ անչափահաս ամբաստանյալի պարագայում այս պարտականությունը չի բացատրվում:

Օրինակ

Դատավորն ուղղակի հարցնում էր ամբաստանյալին, թե վերջինս ինքնաբացարկի միջնորդություն ունի, առանց բացատրելու, թե ինչ է ինքնաբացարկի միջնորդությունը, և որ դեպքերում կարող է կողմն այդպիսի միջնորդություն անել:

8.9 ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ դատական նիստերը հաճախ տևում են երկուսից հինգ ու կես ժամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավարության գործընթացն արդեն իսկ լարված և սթրեսածին գործոն է անչափահասի համար, հինգ ու կես ժամ տևողությամբ դատական նիստը կարող է առավելագույնի հասցնել անչափահասի նյարդահոգեկան անկայունությունը, տագնապայնությունը, անհանգիստ հոգեվիճակը, ինչը հաճախ կարող է դրսևորվել ընդհուպ ագրեսիվ վարքային դրսևորումներով:

Դատավորները պետք է ամեն ինչ անեն, որ դատական նիստերն ընթանան այն օպտիմալ կարճ ժամանակահատվածում, որը կնպաստի անչափահաս ամբաստանյալի կողմից նիստի ողջ ընթացքի հասկացմանը և հոգեբանական պատրաստականությանը՝ լսելու իր նկատմամբ կայացված դատավճիռը:

Առաջարկություններ

- *Բոլոր անչափահասների հետ կապված դատաքննության գործընթացներում (ներառյալ անչափահաս-չափահասներին) ապահովել օրինական ներկայացուցչի մասնակցությունը:*
- *Դատական քննությունները վարել անչափահասներին հարմարեցված պայմաններում՝ նրանց նկատմամբ կոպիտ վերաբերմունք չցուցաբերելով և տրավմայի չենթարկելով:*
- *Կիրառել անչափահասների համար հատուկ վերաբերմունք պահանջող ընթացակարգեր, ներառյալ անչափահասների կարիքներին հարմարեցված դատարանային պայմաններ:*
- *Դատավարության ընթացքում պատշաճ ձևով վերաբերվել անչափահասի տարիքին, մտավոր ունակություններին, ֆիզիկական վիճակին և էմոցիոնալ կայունությանը:*
- *Մշակել և տրամադրել հոգեբանասոցիալական օգնություն անչափահաս իրավախախտներին՝ ապահովելով հոգեբանասոցիալական աջակցությունը, որը կօգնի պաշտպաններին անհատական հաճախորդի կարիքներին համապատասխան այլընտրանքներ մշակել, որը նա հավանաբար ի վիճակի կլինի իրականացնելու՝ պահպանելով գաղտնիության սկզբունքը, որը կիրառվում և ընդունվում է պաշտպանի կողմից՝ պաշտպան-հաճախորդ փոխհարաբերություններում: Այն դեպքերում, երբ պաշտպանության կողմը հայտարարում է անչափահասի կողմից իր մեղքի ընդունումը, վերջինս պետք է օժանդակի դատարանին կալանքի փոխարեն այլընտրանքային միջոցներ գտնել:*
- *Անչափահաս իրավախախտի հետ իրականացնել նախնական զրույց՝ ստեղծելով առաջնային կոնտակտ, որի ժամանակ դատավորը պետք է մանրամասնորեն հաշվի առնի անչափահաս իրավախախտի քրեաբանահոգեբանական առանձնահատկությունները, որոնց մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում ընտանիքը, բարենպաստ և անբարենպաստ գործոնները, ուսման առաջադիմությունն ու վերաբերմունքը կրթությանը, աշխատանքին, հասարակական նորմերին ու ընդունված արժեքներին, ինչպես նաև տարիքային-հոգեբանական այն առանձնահատկությունները, որոնք մեծապես ազդում են հակահասարակական վարքի ձևավորման վրա:*
- *Հաշվի առնելով ամբաստանյալների կրթական մակարդակի և հոգեբանահուզական վիճակի կարևորությունը՝ մեղադրանքը ներկայացնել հնարավորինս պարզ լեզվով, որը հասկանալի կլինի անչափահասներին:*
- *Դատարանի որոշումը ներկայացնել այնպես, որը հնարավորինս հասկանալի լինի ամբաստանյալին՝ հաշվի առնելով անչափահասի կողմից դատավարության արդյունքները հասկանալու և նրան մեղավոր ճանաչելու դեպքում՝ հանցանքի պատճառների, պայմանների և հետևանքների վերացման համար առաջարկված միջոցները ըմբռնելու ունակության կարևորությունը:*
- *Մեծ ուշադրություն դարձնել անչափահասի տարիքային առանձնահատկություններին և ներկա մտավոր և էմոցիոնալ վիճակին և նախնական զրույցի ընթացքում հնարավորինս երկար զրուցել անչափահասի հետ:*
- *Հարցաքննությունը վարել անկաշկանդ և վստահելի մթնոլորտում՝ անչափահասին ուղղելով հստակ, հասկանալի և որոշակի հարցեր:*
- *Ուշադրություն դարձնել անչափահասի սոցիալական շրջապատին, արժեքներին և կրթությանը, որոնք գործի քննությունից հետո անչափահասի՝ հասարակությանը հարմարվելու և վերաինտեգրվելու ամենակարևոր գործոններն են:*
- *Անչափահաս ամբաստանյալի, վկայի կամ տուժողի հարցաքննության ժամանակ խստագույնս հաշվի առնել նրանց առկա հոգեվիճակը, տարիքային առանձնահատկությունները, խոսքի*

և ընկալման արագությունը, տեմպը: Հարցերը ձևակերպել նրանց բառապաշարին և խոսքի զարգացածությանը համահունչ, պատասխաններն ակնկալել՝ հաշվի առնելով նրանց խոսքի և ընկալման տեմպը:

- *Հնարավորինս տեսանելի դարձնել անչափահասի նկատմամբ վերաբերմունքը, որը պետք է հստակ տարանջատվի չափահաս ամբաստանյալների նկատմամբ վերաբերմունքից, հատկապես՝ ձայնի հնչերանգով, խոսքի կառուցվածքով, դիմելաձևով: Անհրաժեշտ է լինել ապրումակցող, նրբանկատ, միևնույն ժամանակ՝ օրենսդրության խիստ պահանջները հստակ կիրառելու առումով:*
- *Հնարավորինս ապահովել անչափահասների ակտիվ ներգրավվածությունը դատավարության ընթացքին: Մասնավորապես՝ խոսքում օգտագործելով իրավական տերմիններ, միևնույն ժամանակ ապահովել, որ անչափահասը հասկանա իր իրավունքները և պարտականությունները, իրեն տրված հարցերը և շուրջը կատարվող իրողությունները:*
- *Անհրաժեշտության դեպքում (խոսքի խանգարում, հաղորդակցման դժվարություն, բարձր ագրեսիվություն, նյարդահոգեկան անկայունություն և այլն) դատավարության ընթացքում ապահովել նեղ մասնագետների ներկայությունը (արատաբան, լոգոպեդ, կլինիկական հոգեբան և այլք):*
- *Հաշվի առնելով անձի հոգեվիճակը և դատավարության ազդեցությունը անչափահասի վրա՝ բացառել որևէ անհարգալից, վիրավորական կամ արհամարհական վերաբերմունք դատաքննության բոլոր մասնակիցների, մասնավորապես՝ ամբաստանյալի, վկայի, տուժողի և նրանց օրինական ներկայացուցիչների նկատմամբ:*
- *Բարձրացնել դատավորների ինքնատիրապետման, զգացողությունների կառավարման, նյարդահոգեկան կայունության մակարդակը: Դատարանում պահպանել հարմար, նվազ սթրեսային և էմոցիոնալ տեսակետից հանգիստ մթնոլորտ: Նիստերի տևողությունը հնարավորության սահմաններում պետք է կրճատել յուրաքանչյուրը մինչև 1 ժամ՝ անչափահասի կենտրոնացվածությունը պահպանելու ժամկետը:*

ԳԼՈՒԽ 9. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային իրավունքում ամրագրված արդարացիության սկզբունքը պահանջում է, որ մեղադրյալը իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունք ունենա:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (UDHR), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ICCPR) և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (ECHR) սահմանում են, որ հանցագործության մեջ մեղադրվող անձն անձամբ կամ փաստաբանի միջոցով պաշտպանելու իրավունք ունի: Պետությունը պետք է արդյունավետ և ոչ խտրական ընթացակարգեր և մեխանիզմներ ստեղծի փաստաբանի ծառայություններից օգտվելու արդյունավետ և հավասար հնարավորություններ ապահովելու համար, ինչպես նաև բավարար ֆինանսավորում և այլ ռեսուրսներ սոցիալապես անապահով խավերի համար իրավաբանական ծառայություններ տրամադրելու համար:

Պետությունը պարտավոր է ամբաստանյալին որակյալ և արդյունավետ ներկայացուցչություն ապահովել: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ECtHR) նշում է, որ թեև պետությունը չի կարող պատասխանատու լինել իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով նշանակված պաշտպանի թերացումների համար, այնուամենայնիվ իրավասու ներպետական մարմինները, ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6(3)(գ) հոդվածի, պարտավոր են միջամտել այն դեպքերում, երբ իրավաբանական օգնություն տրամադրող պաշտպանն ակնհայտորեն թերանում է տրամադրել արդյունավետ ներկայացուցչությունը կամ պաշտպանության որակի առնչությամբ պաշտպանի թերացումները բարձրացվել են պետության առջև:

ՀՀ օրենսդրությունը նույնպես ամրագրում է յուրաքանչյուր անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, ինչպես նաև իր կողմից ընտրված պաշտպանի միջոցով ներկայացվելը՝ սկսած այն պահից, երբ անձը ձերբակալվում է, նրա նկատմամբ կիրառվում է խափանման միջոց կամ մեղադրանք է առաջադրվում: Քրեական դատավարության օրենսգիրքը ստորև մանրամասնում է այս իրավունքը և սահմանում, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել կասկածյալի և մեղադրյալի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը քրեական վարույթի ընթացքում: Յուրաքանչյուր կասկածյալ կամ մեղադրյալ իրավունք ունի պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին կամ մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը, ինչպես նաև համապատասխան դեպքերում գործին մասնակից դարձնել կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցչին:

Ավելին, ըստ ՀՀ ՔԴՕ 69-րդ հոդվածի՝ պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ մեղադրյալն անչափահաս է: Մինչդատական և դատական քննության բոլոր փուլերում անչափահասին պետք է օժանդակի պաշտպանը:

Անչափահասների շահերը ներկայացնող պաշտպանները, ելնելով երեխայի շահերից, պետք է հատուկ վերապատրաստման դասընթացներ անցնեն[53]: Սովորաբար այդ պաշտպանները պետք է շարունակական վերապատրաստման դասընթացների մասնակցեն և գիտելիքներ ձեռք բերեն անչափահասների իրավունքների և դրանց առնչվող հարցերի, դեռահասների զարգացման, հուզական բորբոքվածության թուլացման վերաբերյալ, պետք է կարողանան հաղորդակցվել անչափահասների հետ նրանց ընկալմանը համապատասխան: Բացի այդ, պաշտպանները հաճախ հակում ունեն «գործերի վարումը» դիտարկել իրենց պատասխանատվության ներքո, մինչդեռ անչափահասի պաշտպանությունը միայն այն դեպքերում է արդյունավետ, երբ պաշտ-

53 «Պեկինյան կանոններ», կանոն 22:

պանը հաշվի է առնում ոչ միայն անչափահասի քրեական գործի վարույթի ընթացքը, այլև գնահատում է վարույթի ելքի նշանակությունը նրա ապագայի վրա: Սա պաշտպանի գործունեության միանգամայն առանձնահատուկ ասպեկտ է, որը տարբերվում է ստանդարտ քրեական պաշտպանությունից:

Քննության հենց սկզբնական փուլից պաշտպանի մասնակցությունը բոլոր քրեական գործերով մեղադրյալների համար կարևոր երաշխիք է, սակայն այն հատկապես կարևոր է անչափահասների գործերում, երբ անչափահասը օրենքները և իրավական մարտավարությունը հասկանալու կամ իր ապագայի վրա ազդեցություն ունեցող որոշումներ ընդունելու համար չունի կենսափորձ, կրթվածություն և հասունություն: Բացի այդ, ըստ համաշխարհային վիճակագրական տվյալների՝ գործի քննության ամենավաղ շրջանում են տեղի ունենում խախտումների մեծ մասը՝ ուժի կիրառում, ահաբեկում, կեղծիքներ, անչափահաս մեղադրյալների արժանապատվության ոտնահարում կամ այլ անօրինական միջոցներ, որոնք նվազեցնում են փաստերի հավաստիությունը և ամբողջ քրեական վարույթի արդարացիության հանդեպ հավատը:

Անչափահասին անհրաժեշտ է պաշտպանի օգնությունը օրենքը հասկանալու, փաստերը հմուտ կերպով պարզելու, քննության ընթացքում կատարված գործողությունների օրինականությունը գնահատելու, պաշտպանությունը ճիշտ կազմակերպելու և ներկայացնելու համար: Անչափահասին անհրաժեշտ է ճիշտ ուղղություն ցույց տալ:

Մոնիթորինգի ընթացքում դիտորդները դիտարկել են, որ բոլոր անչափահաս ամբաստանյալները ներկայացված էին պաշտպանների միջոցով: Դիտարկված 37 դեպքերում դիտորդները հայտնել են, որ 53% դեպքերում ամբաստանյալներին ներկայացնում էին մասնավոր պաշտպանները, 47% դեպքերում՝ հանրային պաշտպանները:



Գծապատկեր 17. Պայմանագրի հիման վրա հրավիրված և պետության կողմից նշանակված պաշտպանների թվաքանակի հարաբերակցությունը



Գծապատկեր 18. Պաշտպանների մասնակցությունը

Եղել են նաև գործող պաշտպանի՝ այլ պաշտպանով փոխարինման դեպքեր: «Ուղղահայաց ներկայացուցչությունը», ակնհայտորեն բարենպաստ է ամբաստանյալների համար, հատկապես՝ անչափահասների, որոնք ներկայացուցչության շարունակականության ավելի կարիք ունեն:



Գծապատկեր 19. Փոխվե՞լ է արդյոք պաշտպանը

Թեև գործի նախնական քննության փուլում փաստաբան ունենալը մոնիթորինգի շրջանակներից դուրս էր, հարցազրույցների ժամանակ փաստաբանի մերժման կամ ձերբակալված անչափահասներին փաստաբան չտրամադրելու մասին տեղեկությունները հայտնի էին դարձել դատական քննության արդյունքներով կամ հաղորդվել էին պաշտպանների կողմից հարցազրույցների ընթացքում: Մոնիթորինգը բացահայտել է նաև անչափահասների գործերում իրավաբանական ներկայացուցչության որակի և փաստաբանների դերի հետ կապված խնդիրները: Շատ դեպքերում դիտորդները պաշտպանների վարքագիծն ընդհանուր առմամբ պասիվ են գնահատել: Պարզվել է, որ որոշ պաշտպաններ անգամ տեղյակ չէին իրենց հաճախորդներին առաջադրված մեղադրանքներին և գործի հանգամանքներին: Նրանք ոչ միշտ էին հանդես գալիս ապացույցներ ներկայացնելու, նոր վկաներ հարցաքննելու միջնորդություններով: Այս խնդիրներն

արտահայտում են իրավաբանական ներկայացուցչության ընդհանուր որակի բարելավման կարիքը, հատկապես հանրային պաշտպանի գրասենյակի տրամադրած իրավաբանական օգնության դեպքում:

Հանրային պաշտպանի գրասենյակը գործում է Փաստաբանների պալատում: Հանրային պաշտպանները վարձատրվում են պետական բյուջեից:

Վարույթն իրականացնող մարմնի (ոստիկանության/դատարանի/դատախազության) կայացրած որոշման հիման վրա քրեական գործերով տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն: Հանրային պաշտպանին նշանակում է գրասենյակի ղեկավարը: Հանրային պաշտպանի գրասենյակն ունի 36 հանրային պաշտպան: Նրանցից 17-ը գործում են Երևանում, 19-ը՝ մարզերում: Մարզերում աշխատելու համար ներգրավվում են նաև ժամավճարով աշխատող պաշտպաններ:

Որպես կանոն՝ պաշտպանները հանդես են բերել զուտ իրավաբանական գիտելիքներ, սակայն չեն տիրապետել հոգեբանասոցիալական որակների, որոնք անհրաժեշտ են իրենց հաճախորդների հետ հաղորդակցվելու համար: Պաշտպանները չեն մասնակցում անչափահասների զարգացման, էմոցիոնալ վիճակը հանդարտացնելու, պատանեկան ըմբոստությանն արձագանքելու, հախուռն գործողություններին, ցուցադրական խիզախությանը կամ անչափահասներին բնորոշ վարքագծային հատկանիշներին վերաբերող վերապատրաստման դասընթացների:

Այս տեսանկյունից պաշտպանների համար խիստ կարևոր է ներգրավել հոգեբաններ՝ օգնելով հավաքել պատասխանատվությունը մեղմացնող ապացույցներ, ընտանեկան կոնֆլիկտները բացահայտող փաստեր, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ գործի վերաբերյալ ճիշտ որոշում կայացնելիս՝ հեշտացնելով հաճախորդի հետ հարաբերությունները, տեղեկացնելով անչափահասին իր գործի մասին, ինչպես նաև օգնելով վերջինիս ճիշտ հետևություններ կատարել և գործի լուծումից հետո նորմալ կյանք վարել:

Օրինակ

Պաշտպանը տեղեկացրեց դիտորդներին, որ ինքը ներգրավված չէր գործի նախնական քննության փուլում: Մեղադրյալն էլ հայտնեց, որ նախկին պաշտպանը չի օգնել իրեն այդ փուլում: Քննիչը միայն մեկ անգամ ներկայացրել է ինչ–որ մեկին՝ իբրև պաշտպանի, սակայն այդ անձնավորությունը ոչ մի անգամ չի հանդիպել մեղադրյալի հետ և որևէ աջակցություն չի ցուցաբերել:

Օրինակ

Պաշտպանը ներգրավվել էր գործի քննությանը մեղադրանք առաջադրելուց հետո: Մինչև նրա ներգրավումը՝ մեղադրյալին հարցաքննել էին պաշտպանի բացակայությամբ, սակայն ներկա էին գտնվել օրինական ներկայացուցիչը և մանկավարժը: Պաշտպանի հետ առաջին հանդիպման ժամանակ անչափահասը տեղեկացրել է, որ իր նկատմամբ ուժ են գործադրել և ահաբեկել՝ բողոքելով, որ քննիչը նրա գլխին ուժգին հարվածել էր: Անչափահասն այդ ընթացքում պահվել է փաստացի անազատության մեջ և նրան ազատ են արձակել միայն պաշտպանի ներգրավվելուց հետո:

Օրինակ

Անչափահաս Ա-ն, առանց իր օրինական ներկայացուցչի ուղեկցության, գիշերվա ժամը 11-ին բերման է ենթարկվել ոստիկանություն, որտեղ նրան ծեծի էին ենթարկել: Նրան հարցաքննել էին վկայի կարգավիճակում և ստացել ինքնախոստովանական ցուցմունքներ, որից հետո նրան տրվել էր կասկածյալի կարգավիճակ: Պաշտպանը գործին ներգրավվել էր միայն 4 օր անց:

Օրինակ

Պաշտպանի հետ 10.03.10-ին տեղի ունեցած հարցազրույցի ժամանակ նա տեղեկացրեց (դիտորդին), որ ինքը ներգրավվել է նախնական քննության փուլում, և որ «մինչդատական վարույթն անցկացվել էր անթերի և արդարացի ձևով»: Նա նաև տեղեկացրեց դիտորդին, որ դատարանում անցկացվում է գործով նշանակված երկրորդ նիստը: Մինչդեռ այդ նույն օրը դատական նիստերի քարտուղարը դիտորդներին հայտնեց, որ արդեն տեղի է ունենում գործով նշանակված հինգերորդ նիստը: Նախորդ նիստերի ժամանակ ամբաստանյալի օրինական ներկայացուցիչը նույնիսկ ցանկություն էր հայտնել պաշտպանին փոխելու, սակայն հետո հետ էր կանգնել մտադրությունից և շարունակել էր օգտվել նույն պաշտպանի ծառայություններից:

Առաջարկություններ

- *Հանրային պաշտպանի գրասենյակի պաշտպաններից և մասնավոր փաստաբաններից ձևավորել անչափահասների գործերով մասնագիտացված խումբ:*
- *Բարելավել փաստաբանների կողմից տրամադրվող իրավաբանական ծառայությունների որակը՝ վերապատրաստման դասընթացների և, անհրաժեշտության դեպքում, այլ միջոցառումների օգնությամբ:*
- *Պաշտպանի կողմից տրամադրվող ծառայությունները պետք է համալրվեն նաև հոգեբանա-սոցիալական աջակցությամբ: Բուհական ուսումնառության ծրագրի փոփոխությունը ևս կարող է օգտակար լինել վերոհիշյալ խնդրի լուծման համար:*
- *Անչափահասների գործերով մասնագիտացված պաշտպանների գործունեության հիմնական կիզակետը պետք է լինի իր հաճախորդի ապագան և նրա այն խնդիրների լուծումը, որոնք կարող էին ենթադրյալ հակահիրավական վարքագծի պատճառ հանդիսանալ, այլ ոչ թե գործերի շուտափույթ վարումը: Պաշտպանի համար պետք է առաջնահերթ լինի այնպիսի գործողությունների ծրագրումը, որը կապահովի գործի ելքի՝ ազատությունից զրկելու հետ չկապված լուծումներ: Օգտվելով պաշտպան–հաճախորդ փոխադարձ վստահելի հարաբերություններից՝ պաշտպանները պետք է մշակեն հաճախորդի կարիքներին համապատասխանեցված անհատականացված լուծումներ, որոնց միջոցով կնվազեցվի քրեական արդարադատության համակարգի հետ հետագա շփումների հավանականությունը:*

ԳԼՈՒԽ 10. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է, որ առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում մեղադրյալը կամ ամբաստանյալը իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու[54]: Սա սովորաբար հանգեցնում է ամբաստանյալի որոշ կարևոր դատավարական իրավունքներից հրաժարվելուն և ավելի մեղմ պատիժ ստանալուն: Մեղսագրվող այն հանցագործություններով, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը, թույլատրվում է ամբաստանյալի պահանջով արագացված դատական քննության կարգ կիրառել:

Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում[55]: Ամեն դեպքում, որպեսզի մեղադրյալի միջնորդության հիման վրա դատարանը կիրառի դատական քննության արագացված կարգ, պետք է բավարարված լինեն հետևյալ պայմանները. ա) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, բ) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և գ) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի պաշտպան:

Դատարանն արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարում: Սակայն ուսումնասիրում է ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

Դատարանն արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը[56]: Եթե առավել խիստ պատժի երկու երրորդը, համաձայն օրենքի, փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժը: Վերջնական դատավճիռը կարող է բողոքարկվել ըստ սույն օրենսգրքով նախատեսված իրավունքի և կարգի, այն բացառությամբ, որ ապացույցների վերաբերյալ հարցերը չեն կարող հիմք ծառայել վերաքննիչ դատարանի կողմից դատավճիռը բեկանելու համար:

Մոնիթորինգի ենթարկված 37 դատական քննություններից 23-ն անցկացվել էին արագացված կարգով: Արագացված կարգով քննություններով դատավճիռներ էին կայացվել 32 ամբաստանյալների նկատմամբ, որոնցից 16-ն ազատվել են պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով, 6-ը՝ համաներմամբ, և միայն 7-ի (18,7%) նկատմամբ է փաստացիորեն կիրառվել ազատազրկումը: Մինչդեռ ընդհանուր կարգով դատական քննության արդյունքում 16 անչափահաս մեղադրյալներից 7-ը (43,7%) փաստացիորեն կրել են ազատազրկում պատժատեսակը:

54 ՀՀ ՔԴՕ, հոդված 375.1:

55 Նույն տեղում:

56 ՀՀ ՔԴՕ, հոդված 375.3:

Ի՞նչ դատավճիռներ է կայացրել դատարանը	Քննության կարգը		Ընդամենը
	քննություն ընդհանուր կարգով	քննություն հապավումով կարգով	
Տուգանք	0	2	2
Որոշակի ժամկետով ազատազրկում	7	7	14
Որոշակի ժամկետով ազատազրկում. պատիժը պայմանականորեն չկիրառել	7	16	23
Որոշակի ժամկետով ազատազրկում. համաներում	1	6	7
Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ	0	1	1
Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ	1	0	1
Ընդամենը	16	32	48

Աղյուսակ 6. Դատավճիռ կայացնելու քաղաքականություն՝ կախված դատական քննության կարգից[57]



Գծապատկեր 20. Դատական քննության ընդհանուր կարգ

57 Զեկույցի պատրաստման ընթացքում մեկ դատական գործը դեռ վարույթում էր, այդ պատճառով դատավճիռների թիվը 48 է:



Գծապատկեր 21. Դատական քննության արագացված կարգ

Ինչպես արդեն նշվեց, դատարանն ունի արագացված դատական քննության կարգ կիրառելու ընթացակարգեր: Մասնավորապես, օրենքը պահանջում է, որ դատախազը ներկայացնի մեղադրական եզրակացությունը, մինչդեռ դատավորները պետք է համոզվեն, որ ամբաստանյալը հասկանում է առաջադրված մեղադրանքը, համաձայն է մեղադրանքի հետ և գիտակցում է իր արագացված կարգ անցկացնելու հետևանքները:

Դիտորդներն արձանագրել են, որ մի շարք դեպքերում մեղադրողի ներկայացված մեղադրանքները անչափահասների համար պարզ ու հասկանալի չէին: Դատավորները հարցեր չէին տալիս՝ համոզվելու համար արդյոք մեղադրյալները իրականում հասկացե՞լ են մեղադրանքները, թե՞ ոչ:

Ընդհանուր առմամբ, թվում է, թե դատարանները արագացված դատական քննության կարգ կիրառելու պայմանները ստուգելու իրենց պարտականությունն ընկալում են որպես ձևական պահանջ: Դատավորները հաճախ օրենքով նախատեսված հաջորդականությամբ արագ հարցադրումներ են կատարում ամբաստանյալներին՝ արդյոք պա՞րզ է մեղադրանքը, համաձա՞յն է առաջադրված մեղադրանքի հետ, պնդո՞ւմ է դատական քննությունն արագացված կարգով կիրառելու միջնորդությունը, կամավո՞ր է այն ներկայացրել, խորհրդակցե՞լ է իր պաշտպանի հետ մինչև միջնորդությունը ներկայացնելը և հասկանո՞ւմ է արագացված դատական քննության հետևանքները:

Ամբաստանյալի օրինական ներկայացուցչի կարճ «այո» բառը համարվում է բավարար՝ արագացված դատական քննության որոշում կայացնելու համար: Կասկածներ կային այն մասին, թե արդյոք բոլոր ամբաստանյալները պատշաճ ձևով տեղեկացվե՞լ են և լիովին պատկերացնո՞ւմ են արագացված դատական քննության կարգ կիրառելու հետևանքները: Օրենսդրորեն առկա երաշխիքները՝ գիտակցաբար և կամավոր արագացված դատական քննության կարգ կիրառելու միջնորդություններ ներկայացնելը, պետք է առավել խստորեն և հետևողականորեն կիրառվեն անչափահասների գործերով:

Արագացված դատական քննության կարգ կիրառելու հարցը լուծելիս անչափահասին պետք է տրվի իր կարծիքը հայտնելու իրավունք: Արդար դատաքննության իրավունքը պահանջում է, որ անչափահասը, որին մեղադրանք է առաջադրվել, ի վիճակի լինի արդյունավետորեն մասնակցել

դատական քննությանը, և հետևաբար՝ լիովին հասկանա մեղադրանքի էությունը, հնարավոր հետևանքները և պատիժը:

«Պեկինյան կանոնները» հստակորեն սահմանում է, որ դատական քննությունը պետք է իրականացվի փոխըմբռնման մթնոլորտում, որպեսզի անչափահասը մասնակցելու և արտահայտվելու լիարժեք հնարավորություն ունենա:

Արագացված դատական քննության կարգի անցկացումը հակասում է ԵԻԿ-ի այս դրույթին, անչափահասի կողմից իր մեղքն ընդունելու դեպքում դատարանը, արագացված կարգ կիրառելով, չի իրականացնում գործի լիարժեք քննություն, որն ուղղակիորեն հակասում է «մարդու իրավունքները և բոլոր իրավական երաշխիքներն ամբողջությամբ պահպանելու» կոնվենցիայի պահանջին:

Այս առումով արագացված կարգով դատական քննությունների անցկացումը չափազանց խնդրահարույց է: Անչափահասներն ավելի հակված են առաջարկություններն ընդունելուն, գործողությունների հետևանքները գիտակցելու նրանց կարողությունները խիստ սահմանափակ են: Ուստի նրանք հատկապես հակված են ընդունելու այն լուծումները, որոնք կօգնեն գործը փակելուն, եթե նույնիսկ հետևանքները մեկ ամիս հետո ավելի կվատթարանան: Անչափահասներին երբեք չի կարելի պատժել (ուղղակի կամ անուղղակի ձևով) իրենց գործի լրիվ քննություն պահանջելու համար:

Ավելին՝ մեղքի ընդունման՝ որպես առանց բոլոր ապացույցների հետազոտման գործի արագ լուծման միակ գործիքի կիրառումը բարոյապես արդարացված չէ: Այլընտրանքային միջոցների կիրառումը չպետք է սահմանափակվի միայն այն պատճառով, որ երեխան պնդում է իր անմեղությունը և գործն ընդհանուր կարգով դատական քննությամբ իրականացնելու իր որոշումը: Ավելի հստակ ցուցումներ են անհրաժեշտ, որոնցով կարող են առաջնորդվել դատավորները արագացված կարգով գործեր քննելու համար, որոնք չեն դիտարկի մեղքի ընդունումը որպես ԵԻԿ-ով նախատեսված «քրեական գործերը որքան հնարավոր է արագ լուծելու» պահանջի իրականացման պայման:

Որոշ հայ հեղինակներ[58], որոնք ունեն խոր տեսական գիտելիքներ և փորձ քրեադատավարական ոլորտում, առաջարկում են, որ ՀՀ օրենսդրությամբ արգելվի անչափահասների քրեական գործերով արագացված դատական քննության կարգի կիրառումը:

Ներկայացված պատճառները հետևյալն են՝ թեև ՔԴՕ 45.1-րդ գլուխն ուղղակիորեն չի արգելում անչափահասների գործերով դատական քննության արագացված կարգի կիրառումը, 439-րդ հոդվածի 2-րդ մասը պարունակում է այս կազուսը լուծելու բանալին: Այդ դրույթի համաձայն՝ Քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոնները և 50-րդ գլխում սահմանված կանոնները կիրառելի են անչափահասների գործերով քրեական վարույթի ընթացքում: 439-րդ հոդվածը չի սահմանում արագացված դատական քննության կարգի, այսինքն՝ ընդհանուր կարգով դատական քննությունից տարբերվող դատական քննության կարգի կիրառման հնարավորությունը: Ուստի, քանի որ բացակայում է հստակ իրավական կարգավորում, անչափահասների գործերով արագացված կարգով դատական քննության անցկացումն իրավական հիմքերից զուրկ է:

Օրինակ

Դատական նիստի ժամանակ անչափահասն իրեն մեղավոր ճանաչեց: Օրինական ներկայացուցիչը՝ անչափահասի հայրը, դիմեց միջնորդությամբ՝ գործը վարել արագացված դատական քննության կարգով: Այն հարցին, թե արդյոք ամբաստանյալը խորհրդակցե՞լ է պաշտպանի հետ, պաշտպանն ասաց, որ նա խորհրդակցել է օրինական ներկայացուցչի հետ: Ապա դատավորը հարցրեց՝ արդյոք իրավական հետևանքները պա՞րզ են ամբաստանյալի համար, և կրկին

58 Ղամբարյան Ա., Պողոսյան Տ., Դատական քննության արագացված կարգը ՀՀ քրեական դատավարությունում, որը հասանելի է՝ http://www.ghambaryan.com/hratarak_file/82_Aragacvac%20karg%20Artur.pdf:

օրինական ներկայացուցիչը դրական պատասխան տվեց: Մեղադրյալի կարծիքը ոչ ոք չհարցրեց, և այն չլսվեց:

Բացի այդ, արագացված կարգով դատական քննության ժամանակ դիտարկվել է այնպիսի դեպք, երբ դատավորը պատիժ է նշանակել առանց խորհրդակցական սենյակ հեռանալու:

Օրինակ

Ա.Ա.-ի գործի քննության ժամանակ դատավորը բավարարեց դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին միջնորդությունը: Դատախազի և պաշտպանի ճառերից հետո դատավորը, առանց խորհրդակցական սենյակ հեռանալու, որոշում կայացրեց նշանակել երկու տարի ժամկետով ազատազրկում և կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը (պատիժը պայմանականորեն չկիրառել):

Առաջարկություններ

- *Անչափահասների գործերով արգելել դատական քննության արագացված կարգի կիրառումը:*
- *Դատավորները պետք է անվերապահորեն կիրառեն առկա իրավական երաշխիքներ՝ թույլատրելով անչափահասների կողմից արդար դատաքննության իրավունքի որոշ երաշխիքներից գիտակցաբար և կամավոր հրաժարումը:*
- *Անչափահասների գործերով դատական քննությունների արագացումը չպետք է պայմանավորվի մեղքի ընդունմամբ:*
- *Բոլոր դեպքերում անչափահասի՝ իր կարծիքը հայտնելու իրավունքը պետք է խստորեն պահպանվի:*

ԳԼՈՒԽ 11. ԼՈՒՐՋ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԱՅԼ ՀԻՄՔԵՐ

11.1 ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կանխարգելումը կարևոր է միջոց է, որը կարող է հիմնովին լուծել անչափահասների և դեռահասների սոցիալ-տնտեսական և հոգեբանասոցիալական այն խնդիրները, որոնք նպաստել են իրավախախտ վարքագծին[59]: Անչափահասների արդարադատության բարեփոխման ռազմավարությունում կանխարգելման դերը չի կարելի թերագնահատել, թեև այն հաճախ անտեսվում է քաղաքական տեսանկյունից ավելի իրատեսական «հանցագործության հանդեպ կոշտ» կարճաժամկետ քաղաքականության հաշվին: Կանխարգելման հաջողված փորձերը ներառում են հասարակության մեջ ոչ խտրական միջավայրի ստեղծումը, հիմնական ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովումը, որոնց միջոցով կարող են նվազեցվել մարգինալացումը, մեկուսացումը, շահագործումը և սոցիալական անարդարության այլ տարրեր:

Անչափահասների իրավախախտումների կանխարգելման ՄԱԿ-ի ղեկավարող սկզբունքներում նկարագրվում են և՛ ընդհանուր, «զարգացման» կանխարգելում՝ developmental prevention (որն անդրադառնում է այնպիսի սոցիալական խնդիրներ ծնող երևույթների, ինչպիսիք են աղքատությունը և անհավասարությունը), և՛ «արձագանքող» կանխարգելում՝ responsive prevention («ռիսկային» համարվող անչափահասներին ուղղված ծրագրեր): «Ռիադի ղեկավարող սկզբունքներն» խրախուսում են դրական «կանխարգելումը»՝ կարևորելով սոցիալ-տնտեսական աջակցությունը և կյանքի որակի բարձրացումը, քան հանցագործությունների կանխարգելման «բացասական» մոտեցումը: Այդ սկզբունքներում նկարագրվում են բոլոր սոցիալական ոլորտները, ինչպիսիք են ընտանիքը, դպրոցը, հասարակությունը, լրատվամիջոցները, սոցիալական քաղաքականությունը, օրենսդրությունը և անչափահասների արդարադատության մարմինները:

ՔԴՕ 440-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ անչափահասների հետ կապված դեպքերում պարտադիր է պարզել հետևյալ հանգամանքները՝ մեղադրյալի տարիքը, կյանքի և դաստիարակության պայմանները, առողջության և ընդհանուր զարգացման վիճակը:

ՔՕ 90-րդ հոդվածի համաձայն՝ անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկություններ, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը:

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ դատարանները պարբերաբար թերանում են հաշվի առնել երեխաների և անչափահասների առջև ծառացած սոցիալ-տնտեսական և հոգեբանական խնդիրները, որոնք նպաստում են հանցագործությունների կատարմանը: Դատական քննությունն արագացված կարգով անցկացնելիս դատավորները չեն անդրադառնում վերոհիշյալ խնդիրներին՝ սահմանափակվելով մեղմացուցիչ կամ ծանրացուցիչ հանգամանքների հետ կապված հարցերի ուսումնասիրությամբ:

Առանց սոցիալ-տնտեսական և հոգեբանական խնդիրների քննության անհնար է իրականացնել արդյունավետ կանխարգելիչ ծրագիր և անչափահասին սոցիալ-տնտեսական աջակցություն ցուցաբերել՝ ընտրելով համայնքային ներգործության և/կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

59 Անչափահասների արդարադատության միջգերատեսչական խումբ (IPJJ) www.juvenilejusticepanel.org/en/priorities.html:

Առաջարկություն

- *Անչափահասների հանցագործությունների կանխարգելման արդյունավետ ծրագրեր իրականացնելու համար պետք է բացահայտել և համարժեքորեն գնահատել անչափահասների սոցիալ-տնտեսական և հոգեբանական պայմանները:*

11.2 ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՆԵՐԻ ԱՆԲԱՎԱՐԱՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Անչափահասների պաշտպանության վերաբերյալ իրավական փաստաթղթերում ներկայացվում է անչափահաս տուժողներին և վկաներին հարմարեցված հատուկ դատական ընթացակարգերի կիրառման պահանջ: Այդ չափորոշիչները ճանաչում են անչափահաս տուժողների խոցելիությունը, նրանց պահանջներին հարմարեցված ընթացակարգերը, իրենց շահերին առնչվող դատական գործընթացների վերաբերյալ տեղեկացված լինելու և դրանցում ներկայացված լինելու, ինչպես նաև ճնշումներից և վատ վերաբերմունքից նրանց պաշտպանվածության անհրաժեշտությունը:

Մոնիթորինգի արդյունքներից պարզվել է, որ Հայաստանի արդարադատության համակարգը հաշվի չի առնում քրեական գործերով անչափահաս տուժողների և վկաների հատուկ խնդիրների և պահանջների առկայությունը: Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ անչափահաս տուժողների և վկաների պաշտպանությունն ապահովելու համար բավարար պաշտպանության միջոցներ չեն կիրառվում: Ոչ համարժեք ռիսկերի գնահատման հետևանքով պաշտպանության միջոցների չկիրառումը նույնիսկ հանգեցրել է մահվան դեպքերի: Մոնիթորինգի անցկացման ժամանակ գրանցվել է մեկ այդպիսի դժբախտ դեպք:

Օրինակ

> *2009 թ. սպանվել էր անչափահաս Բ-ն: Գործի հանգամանքների համաձայն՝ Գ-ն գնացել էր հիմնական տուժող Բ-ի տուն՝ իրենց ընդհանուր ընկերոջ՝ Ա-ի հետ և Ա-ի ներկայությամբ սպանություն էր գործել: Գ-ին մեղադրանք էր առաջադրվել սպանության և սպանության սպառնալիքի համար: Ա-ն նույնպես տուժող էր ճանաչվել, քանի որ սպանության սպառնալիքը նրա դեմ էր ուղղված եղել: 13 տարեկան անչափահաս Գ-ի մեղադրական դատավճիռը կայացնելուց հետո Ա-ն տեղափոխվել էր հիվանդանոց պարանոցի և մարմնի տարբեր մասերում դանակահարության հետքերով, որտեղ մահացել էր՝ առանց գիտակցության գալու: Նույն օրը ոստիկանություն էր ներկայացել մի տղամարդ և խոստովանել իր կողմից հանցանքի կատարումը: Պարզվել էր, որ նա անչափահաս Բ-ի՝ սպանության գործով տուժողի հայրն էր:*

Ներկայումս գործող պրակտիկան չի ապահովում անչափահաս տուժողների և վկաների բավարար պաշտպանությունը: Պարզվել է, որ իրականում չեն պահպանվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նույնիսկ այն նվազագույն ընթացակարգային երաշխիքները, ինչպիսիք են օրինական ներկայացուցիչների և մանկավարժների ներգրավումը, որոնք միտված են նախնական և դատական քննությունը անչափահասների համար նվազ տրավմատիկ դարձնելուն:

Օրինակ՝ 23,5% գործերում ներգրավված էին անչափահաս վկաներ: 11,8% դեպքերում, խախտելով բոլոր միջազգային և ազգային չափորոշիչները, մանկավարժները չէին մասնակցել անչափահասների հարցաքննություններին:

Մյուս կողմից՝ պետք է նշել, որ սովետական ժամանակաշրջանում ներմուծված մանկավարժի ներկայությունը միշտ չէ, որ բխում է անչափահասի շահերից: Ակնկալվում է, որ ուսուցիչներն

կարող են իրականացնել անչափահասի պաշտպանությունը, և տվյալ քրեական գործի քննության ընթացքում որևէ բան չի կարող բացասաբար ազդել հետագայում անչափահասի՝ դպրոցում գտնվելու վրա: Սա հավասարապես վերաբերում է և՛ մեղադրյալներին, և՛ վկաներին: Ուսուցիչները որպես այդպիսին չեն կարող իրավասու ներկայացուցիչ լինել՝ միայն կրթությամբ մանկավարժ լինելով: Ավելին՝ անչափահասի նկատմամբ առաջադրվող մեղադրանքների մասին ուսուցչին տեղեկացնելը կարող է խախտել անչափահասի անձնական կյանքի իրավունքը: Բացի այդ, անչափահասին որպես «զոհի» վերաբերվելը, եթե նույնիսկ մանկավարժը համակրում է անչափահասին, ինչպես նաև նրա կողմից անչափահասին կարեկցելը նույնպես կարող է խանգարել և հոգեբանորեն ճնշել:



Գծապատկեր 22. Մանկավարժի մասնակցությունը անչափահաս վկաների հարցաքննության ժամանակ



Գծապատկեր 23. Մանկավարժի մասնակցությունը մինչև 16 տարեկան տուժողների հարցաքննությանը դատարանում

Օրինակ

Դատական նիստը բացելուց հետո դատավորը սկսեց հարցաքննել ամբաստանյալին, թեև ամբաստանյալի հարցաքննության ընթացակարգն արդեն ավարտվել էր: Դատավորը փորձում էր պարզել, թե ինչու հանցանքի վայրում մատնահետքեր չեն հայտնաբերվել: Ամբաստանյալը պատասխանեց, որ և՛ ինքը, և՛ տուժողը ձեռնոցով էին: Ապա դատավորն իր հարցերը ուղղեց տուժողին, որը հերքեց, թե ինքը ձեռնոցով է եղել: Հարկ է նշել, որ այդ դատական նիստերի ժամանակ տուժողի 14 տարին դեռ չէր լրացել, և դատական նիստին մանկավարժը ներկա չէր: Երբ դատախազն առաջարկեց տուժողին լրացուցիչ հարցաքննել մանկավարժի ներկայությամբ, դատավորն ասաց, որ դրա կարիքն արդեն չկա:

Առաջարկություններ

- *Վերանայել գործող ներպետական օրենքները, ընթացակարգերը և գործելաոճը և համոզվել, որ անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության միջազգային չափորոշիչներն ամբողջությամբ պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ: Ընդունել անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության մասին հատուկ օրենք՝ հիմք ընդունելով Վկաների պաշտպանության տիպային օրենքը, որը պարունակում է տուժողի և վկայի արդյունավետ պաշտպանության նվազագույն անհրաժեշտ երաշխիքներ:*
- *Ապահովել անչափահաս տուժողների և վկաների իրավական, հոգեբանական և սոցիալական պաշտպանության շրջանակները:*
- *Խիստ պատժամիջոցներ կիրառել այն դեպքում, երբ անչափահասները հարցաքննվել են որպես վկա և հետագայում ճանաչվել են մեղադրյալ:*

11.3 ԱՆՉԱՓԱՀԱՍ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

ԵԻԿ-ի պահանջներով արգելվում է անչափահասին հարկադրել վկայություններ, ինքնախոստովանական ցուցմունքներ տալ կամ մեղքն ընդունել: Սա նախևառաջ նշանակում է, որ մեղքն ընդունելու կամ ինքնախոստովանական ցուցմունք կորզելու համար խոշտանգումները, դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը երեխայի իրավունքի կոպիտ խախտում է:

Երեխայի անձը լիարժեք ճանաչելու, ինչպես նաև նրա իրավական, հոգեբանական, սոցիալական, հուզական, ֆիզիկական և իմացական առանձնահատկությունները և քրեական հետապնդումից հետո նրա՝ լիակատար սոցիալականացմանն ուղղված պահանջները գնահատելու համար կարևոր է որդեգրել բազմաֆունկցիոնալ մոտեցում և խրախուսել տարբեր մասնագետների սերտ համագործակցությունը:

Պետք է ստեղծել գնահատման ընդհանուր շրջանակ երեխաների հետ կամ նրանց համար աշխատող մասնագետների (փաստաբան, հոգեբան, բժիշկ, ոստիկան, սոցիալական աշխատող և միջնորդ) համար, որոնք գործում են երեխաների ներգրավմամբ կամ երեխաների վրա ազդեցություն ունեցող ընթացակարգերի կամ միջամտությունների ընթացքում՝ տրամադրելով անհրաժեշտ աջակցություն որոշում կայացնող պաշտոնյաներին՝ աջակցելով նրանց յուրաքանչյուր գործով լավագույնս պաշտպանել երեխաների շահերը:

Հարցաքննության ժամանակ հարցաքննվող անչափահասին պետք է հասանելի լինի օրինական կամ այլ համապատասխան ներկայացուցիչը, անչափահասը պետք է կարողանա հար-

ցաքննության ընթացքում պահանջել իր ծնողների ներկայությունը: Դատարանը կամ արդարադատության այլ մարմին, երբ քննում է անչափահասի կողմից մեղքի ընդունման կամ ինքնախոստովանական ցուցմունքի հոժարակամ և արժանահավատ լինելը, պետք է հաշվի առնի անչափահասի տարիքը, ձերբակալման և կալանավորման, հարցաքննության տևողությունը, օրինական կամ այլ ներկայացուցչի, երեխայի ծնողների կամ այլ անկախ ներկայացուցիչների մասնակցությունը: Ոստիկանության աշխատակիցները և քննչական այլ մարմինները պետք է լավ մասնագիտացված լինեն, որպեսզի հարցաքննության ժամանակ չկիրառեն այնպիսի եղանակներ և պրակտիկա, որի հետևանքով ֆիզիկական կամ հոգեբանական ճնշումներով ձեռք են բերվում ոչ հավաստի ինքնախոստովանական ցուցմունքներ և վկայություններ:

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ դատական մարմինները չէին արձագանքում ոստիկանության աշխատողների՝ անչափահասների հանդեպ գործադրած ճնշումների կամ բռնությունների, ինչպես նաև անչափահաս կողմի շահերի պաշտպանության պատշաճ միջոցներ չձեռնարկելու մասինհայտարարություններին: Որոշ դեպքերում դատավորներն իրենք են ճնշում գործադրել տուժողների և ամբաստանյալների վրա՝ վտանգելով երեխայի և արդարադատության շահերը: Սա լուրջ մտահոգություն է առաջացնում Հայաստանում հրատապ պաշտպանության միջոցների կիրառման, ինչպես նաև անչափահաս տուժողների և մեղադրյալների ահաբեկման, վախի, ճնշման, հետապնդման անթույլատրելի և դատապարտելի դեպքերի քննության անցկացման վերաբերյալ:

Օրինակ

Մեղադրյալի նախնական քննության ժամանակ կատարած հայտարարությունները էականորեն հակասում էին դատավարության ընթացքում նրա հայտարարություններին: Մինչդատական հայտարարություններում մեղադրյալը ընդունում էր իր մեղքը, իսկ դատարանում հայտնեց, թե անմեղ է: Նա պնդում էր, որ իր ավելի վաղ կատարած հայտարարությունները կեղծ էին, քանի որ ոստիկանները և քննիչը դրանք ստացել էին ճնշման արդյունքում:

Պաշտպանը նույնպես տեղեկացրեց դատարանին, որ մեղադրյալը բերվել էր Դ. մարզից: Նա գիշերն անցկացրել էր Ֆ. քաղաքում, ոստիկանների ուղեկցությամբ և ապա մեկ օր պահվել Երևան քաղաքի Արաբկիրի ոստիկանության բաժնում: Մինչև գործին պաշտպանի ներգրավվելը, նա հարցաքննվել էր երեք անգամ, հիմնականում՝ գիշերները: Օրինական ներկայացուցիչը հրավիրվել էր, և նրան թույլատրել էին հանդիպել անչափահասի հետ միայն վերջինիս կողմից բացատրություն գրելուց և ստորագրելուց հետո: Ավելի ուշ, քննիչի որոշմամբ, այդ բացատրությունները ճանաչվել էին որպես վկայություն և կցվել գործին: Անչափահասին կարողացան ազատել միայն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունից հետո:

Օրինակ

Դատական նիստի ընդմիջման ժամանակ, երբ դատավորը հեռացել էր խորհրդակցական սենյակ վճիռ կայացնելու, և կողմերը լքում էին նիստերի դահլիճը, մեղադրողը պաշտպանին ասաց. «Էդ լակոտին չես տեսնում, մարդ ա դառել՝ դատավորին նկատողություն ա անում: Դրան պետք ա երկար ժամանակով կոխել ընդեղ, որ իմանա, խելքը գլուխը հավաքի, լակոտի մեկը»:

Առաջարկություններ

- *Կազմակերպել պարբերական հանդիպումներ արդարադատություն իրականացնող մասնակից կողմերի հետ (առանց մեղադրյալի ներկայության), որոնք ներգրավված են անչափահասի յուրաքանչյուր գործով՝ քննարկելու գործի լուծման մինչդատական տարբերակները, իսկ դատապարտյալների դեպքում՝ ազատազրկման այլընտրանքային պատիժներ կիրառելու տարբերակները:*
- *Դատավորները պետք է արձագանքեն ճնշումների, բռնությունների, վատ վերաբերմունքի մասին բոլոր հայտարարություններին և դրանք փոխանցեն պատկան մարմիններին՝ քննություն անցկացնելու համար:*
- *Ընդլայնել պաշտպանության միջոցների գործող ցուցակը՝ կարևորելով անչափահասներին ֆիզիկապես պաշտպանություն:*
- *Վերանայել պաշտպանության միջոցների կիրառման պրակտիկան և նախաձեռնել բոլոր կողմերի մասնակցությամբ քննարկում՝ այդ միջոցների կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար:*
- *Նվազեցնել հնարավոր բռնությունների դեպքերը՝ օգտագործելով, օրինակ՝ օժանդակությունը ցուցմունքի տրմանը կամ անչափահաս ամբաստանյալների հարցաքննության ժամանակ ներգրավել հոգեբան փորձագետներին:*
- *Դատարանի դահլիճում դատավորի, դատախազի կամ պաշտպանի հարցաքննությունները նույնպես պետք է անցկացվեն անչափահասին հարմարեցված պայմաններում և մասնագետների օժանդակությամբ:*
- *Մեղադրյալ անչափահասի հետագա բռնությունները կանխելու համար մշակել հոգեբանատցիալական միջոցառումների ծրագրեր (միայն այն դեպքերում, երբ անչափահասն ակնհայտորեն հոգեկան հիվանդություն ունի, դատարանը պետք է դիմի հոգեբույժի խորհրդատվությանը, եթե անչափահասն ի վիճակի չէ մասնակցելու դատական նիստին, կամ երբ պաշտպանությունն առաջարկում է դիմել հոգեբանական աջակցության):*
- *Կազմակերպել վերապատրաստման համապատասխան դասընթացներ, ընտրության ընթացակարգեր, ինչպես նաև անչափահասների հետ աշխատող տվյալ մասնագետների (կրթության, հոգեբանատցիալական և բժշկության ոլորտի մասնագետներ, իրավաբաններ և իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, այդ թվում՝ դատավորներ և ոստիկանության աշխատակիցներ) համար հասանելի դարձնել կրթական և տեղեկատվական ծրագրերը, որպեսզի մասնագիտական մեթոդները, մոտեցումները բարելավվեն՝ երեխաների նկատմամբ ավելի արդյունավետ և հոգատար վերաբերմունք ձևավորելու համար:*
- *Իրականացնել հարցաքննության մեթոդների մանրակրկիտ անկախ ուսումնասիրություն՝ համոզվելու համար, որ ցուցմունքները տրվել են հոժարակամ և չեն կորզվել բռնությամբ՝ օգտվելով անչափահասի խոցելիությունից:*

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- *Ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխանող երեխայակենտրոն, անչափահասների վերականգնողական արդարադատության զարգացած համակարգ:*
- *Նախատեսել այլընտրանքային համայնքային միջոցներ՝ արդարադատության պաշտոնական ընթացակարգերի փոխարեն (ներառյալ՝ մեդիացիա և քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինում՝ հստակեցնելով այս առումով ոստիկանության, քննիչների, դատախազների և դատարանների դերը):*
- *Ստեղծել իրավական և դատավարական նոր ընթացակարգեր՝ ուղղված անչափահասներին կառուցողական ինտեգրմանը հասարակությանը. այլ ոչ թե հանցագործությունների բացահայտմանը և պատժիչ քաղաքականությանը:*
- *Կրճատել կալանավորման՝ որպես խափանման միջոցի, ինչպես նաև ազատազրկման ձևով նշանակված պատժի չափից ավելի օգտագործումը և տևողությունը՝ քննարկելով նաև նոր այլընտրանքային միջոցների ստեղծումը:*
- *Կրճատել անչափահասների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումների տևողությունը՝ առավելագույնը մինչև 6 ամիս:*
- *Մասնագիտացնել անչափահասների գործերը քննող դատավորներին, դատախազներին, քննիչներին, ոստիկանության աշխատակիցներին և հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբաններին:*
- *Օրենքով արգելել անչափահասների գործերը վարել այն դատավորներին, դատախազներին, քննիչներին, հանրային պաշտպաններին, ովքեր չեն անցել անչափահասների արդարադատության հատուկ դասընթացներ:*
- *Աջակցել Փաստաբանների պալատին՝ մասնավոր փաստաբանների համար անչափահասների արդարադատության հատուկ դասընթացներ կազմակերպելու գործում:*
- *Երաշխավորել երեխայի իրավունքների և լավագույն փորձի վերաբերյալ թեմաների պաշտոնական ներմուծումը մասնագետների կրթության և աշխատանքի վայրում անցկացվող վերապատրաստման դասընթացների ծրագրերում, ապահովել կրկնվող, կայուն և հետևողական դասընթացներ:*
- *Գաղտնիության պահպանման պարտականություն դնել այն բոլոր անձանց վրա (դատավորների, ոստիկանության աշխատակիցների, քննիչների, պաշտպանների, վկաների, դատապարտյալների և այլն), ովքեր ներգրավված են անչափահաս մեղադրյալի մասնակցությամբ գործերում:*
- *Մամուլին և լրատվամիջոցներին արգելել հեռարձակելու, հրապարակելու անչափահասի անունը, լուսանկարը կամ որևէ այլ տեղեկություն, որոնք կարող են բացահայտել երեխայի ինքնությունը:*
- *Գաղտնի պահել երեխայի անունը դատարանի որոշման մեջ կամ այլ փաստաթղթերում, որոնք հրապարակվում են:*
- *Մինչև 18 տարեկանը կատարած հանցանքի առնչությամբ դատվածության վերաբերյալ բոլոր գրանցումները վերացնել:*
- *Մամուլի և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար անչափահասների իրավունքների թեմայով դասընթացներ կազմակերպել:*
- *Դատավորները պետք է ձեռնպահ մնան տեսակետներ արտահայտելուց կամ մեկնաբանություններ կատարելուց, որը վերաբերում է ամբաստանյալի հանցանքի հանդեպ իրենց դիրքորոշմանը:*
- *Պետք է անցկացվեն դատավորների վերապատրաստման դասընթացներ անմեղության կանխավարկածի և դրա իրացման արդյունքում սխալների նվազեցման թեմայով:*

- *Դատավորներին, դատախազներին և փաստաբաններին պետք է ցուցումներ տրվեն անչափահասների հետ կապված դատավարությունները դիտարկել իբրև արդյունքների ուսումնասիրություն, որը կարող է օգնել անչափահասին կրթություն ստանալ, ձեռք բերել արհեստ կամ անչափահասի զարգացմանը նպաստող զբաղմունք:*
- *Դատավորի կողմից անմեղության կանխավարկածի պահանջի խախտումը պետք է օրինական հիմք հանդիսանա՝ (1) դատավորի պարտադիր ինքնաբացարկման, (2) եթե այդ դատավորը հրաժարվում է ինքնաբացարկումից, դատավճիռը չեղյալ համարելու, (3) դատավորների վրա կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու համար:*
- *Երաշխավորել դատավորների՝ քրեադատավարական օրենսդրության պահանջներին հետևելը և անչափահաս ամբաստանյալների իրավունքները պատշաճ բացատրելը:*
- *Խուսափել ցանկացած արտահայտությունից կամ վարքագծից, որը կարող է արտահայտել դատավորի կողմնակալությունը:*
- *Բարձրացնել դատավորների ինքնատիրապետման, զգացմունքների կառավարման, նյարդահոգեկան կայունության մակարդակը:*
- *Խուսափել անչափահաս ամբաստանյալների, տուժողների, վկաների կամ դատական նիստի այլ մասնակիցների նկատմամբ հոգեբանական կամ այլ կարգի ճնշում գործադրելուց:*
- *Ապահովել դատական քննությունը ժամանակին սկսելը, առանց որևէ չարդարացված ուշացումների:*
- *Այն դատավորները, որոնք կողմնակալություն են ցուցաբերում և խախտում իրենց մասնագիտական վարքագծի պահանջները, պետք է ենթարկվեն կարգապահական պատասխանատվության:*
- *Դատավորների դեմ բողոքները պետք է պատշաճ ձևով քննվեն, իսկ այն դատավորները, որոնց վարքագիծը չի համապատասխանում Դատական օրենսգրքին և Դատավորի վարքագծի կանոններին, պետք է ենթարկվեն կարգապահական պատասխանատվություն:*
- *Բոլոր անչափահասների հետ կապված դատաքննության գործընթացներում (ներառյալ անչափահաս-չափահասներին) ապահովել օրինական ներկայացուցչի մասնակցությունը:*
- *Դատական քննությունները վարել անչափահասներին հարմարեցված պայմաններում՝ նրանց նկատմամբ կոպիտ վերաբերմունք չցուցաբերելով և տրավմայի չենթարկելով:*
- *Կիրառել անչափահասների համար հատուկ վերաբերմունք պահանջող ընթացակարգեր, ներառյալ անչափահասների կարիքներին հարմարեցված դատարանային պայմաններ:*
- *Դատավարության ընթացքում պատշաճ ձևով վերաբերվել անչափահասի տարիքին, մտավոր ունակություններին, ֆիզիկական վիճակին և էմոցիոնալ կայունությանը:*
- *Մշակել և տրամադրել հոգեբանասոցիալական օգնություն անչափահաս իրավախախտներին՝ ապահովելով հոգեբանասոցիալական աջակցությունը, որը կօգնի պաշտպաններին անհատական հաճախորդի կարիքներին համապատասխան այլընտրանքներ մշակել, որը նա հավանաբար ի վիճակի կլինի իրականացնելու՝ պահպանելով գաղտնիության սկզբունքը, որը կիրառվում և ընդունվում է պաշտպանի կողմից՝ պաշտպան-հաճախորդ փոխհարաբերություններում: Այն դեպքերում, երբ պաշտպանության կողմը հայտարարում է անչափահասի կողմից իր մեղքի ընդունումը, վերջինս պետք է օժանդակի դատարանին կալանքի փոխարեն այլընտրանքային միջոցներ գտնել:*
- *Անչափահաս իրավախախտի հետ իրականացնել նախնական զրույց՝ ստեղծելով առաջնային կոնտակտ, որի ժամանակ դատավորը պետք է մանրամասնորեն հաշվի առնի անչափահաս իրավախախտի քրեաբանահոգեբանական առանձնահատկությունները, որոնց մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում ընտանիքը, բարենպաստ և անբարենպաստ գործոնները, ուսման առաջադիմությունն ու վերաբերմունքը կրթությանը, աշխատանքին, հասարակական նորմերին ու ընդունված արժեքներին, ինչպես նաև տարիքային-հոգեբանական այն առանձնահատկություն-*

ները, որոնք մեծապես ազդում են հակահասարակական վարքի ձևավորման վրա:

- *Հաշվի առնելով ամբաստանյալների կրթական մակարդակի և հոգեբանահուզական վիճակի կարևորությունը՝ մեղադրանքը ներկայացնել հնարավորինս պարզ լեզվով, որը հասկանալի կլինի անչափահասներին:*
- *Դատարանի որոշումը ներկայացնել այնպես, որը հնարավորինս հասկանալի լինի ամբաստանյալի համար՝ հաշվի առնելով անչափահասի կողմից դատավարության արդյունքները հասկանալու և նրան մեղավոր ճանաչելու դեպքում՝ հանցանքի պատճառների, պայմանների և հետևանքների վերացման համար առաջարկված միջոցները ըմբռնելու ունակության կարևորությունը:*
- *Մեծ ուշադրություն դարձնել անչափահասի տարիքային առանձնահատկություններին և ներկա մտավոր և էմոցիոնալ վիճակին և նախնական զրույցի ընթացքում հնարավորինս երկար զրուցել անչափահասի հետ:*
- *Հարցաքննությունը վարել անկաշկանդ և վստահելի մթնոլորտում՝ անչափահասին ուղղելով հստակ, հասկանալի և որոշակի հարցեր:*
- *Ուշադրություն դարձնել անչափահասի սոցիալական շրջապատին, արժեքներին և կրթությանը, որոնք գործի քննությունից հետո անչափահասի՝ հասարակությանը հարմարվելու և վերաինտեգրվելու ամենակարևոր գործոններն են:*
- *Անչափահաս ամբաստանյալի, վկայի կամ տուժողի հարցաքննության ժամանակ խստագույնս հաշվի առնել նրանց առկա հոգեվիճակը, տարիքային առանձնահատկությունները, խոսքի և ընկալման արագությունը, տեմպը: Հարցերը ձևակերպել նրանց բառապաշարին և խոսքի զարգացածությանը համահունչ, պատասխաններն ակնկալել՝ հաշվի առնելով նրանց խոսքի և ընկալման տեմպը:*
- *Հնարավորինս տեսանելի դարձնել անչափահասի նկատմամբ վերաբերմունքը, որը պետք է հստակ տարանջատվի չափահաս ամբաստանյալների նկատմամբ վերաբերմունքից, հատկապես ձայնի հնչերանգով, խոսքի կառուցվածքով, դիմելաձևով: Անհրաժեշտ է լինել ապրումակցող, նրբանկատ, միևնույն ժամանակ՝ օրենսդրության խիստ պահանջները հստակ կիրառելու առումով:*
- *Հնարավորինս ապահովել անչափահասների ակտիվ ներգրավվածությունը դատավարության ընթացքին: Մասնավորապես՝ խոսքում օգտագործելով իրավական տերմիններ, միևնույն ժամանակ ապահովել, որ անչափահասը հասկանա իր իրավունքները և պարտականությունները, իրեն տրված հարցերը և շուրջը կատարվող իրողությունները:*
- *Անհրաժեշտության դեպքում (խոսքի խանգարում, հաղորդակցման դժվարություն, բարձր ագրեսիվություն, նյարդահոգեկան անկայունություն և այլն) դատավարության ընթացքում ապահովել նեղ մասնագետների ներկայությունը (արատաբան, լոգոպեդ, կլինիկական հոգեբան և այլք):*
- *Հաշվի առնելով անձի հոգեվիճակը և դատավարության ազդեցությունը անչափահասի վրա՝ բացառել որևէ անհարգալից, վիրավորական կամ արհամարհական վերաբերմունք դատաքննության բոլոր մասնակիցների, մասնավորապես՝ ամբաստանյալի, վկայի, տուժողի և նրանց օրինական ներկայացուցիչների նկատմամբ:*
- *Բարձրացնել դատավորների ինքնատիրապետման, զգացողությունների կառավարման, նյարդահոգեկան կայունության մակարդակը: Դատարանում պահպանել հարմար, նվազ սթրեսային և էմոցիոնալ տեսակետից հանգիստ մթնոլորտ: Նիստերի տևողությունը հնարավորության սահմաններում պետք է կրճատել յուրաքանչյուրը մինչև 1 ժամ՝ անչափահասի կենտրոնացվածությունը պահպանելու ժամկետը:*
- *Հանրային պաշտպանի գրասենյակի պաշտպաններից և մասնավոր փաստաբաններից ձևավորել անչափահասների գործերով մասնագիտացված խումբ:*

- *Բարելավել փաստաբանների կողմից տրամադրվող իրավաբանական ծառայությունների որակը՝ վերապատրաստման դասընթացների և, անհրաժեշտության դեպքում, այլ միջոցառումների օգնությամբ:*
- *Պաշտպանի կողմից տրամադրվող ծառայությունները պետք է համալրվեն նաև հոգեբանա-սոցիալական աջակցությամբ: Բուհական ուսումնառության ծրագրի փոփոխությունը ևս կարող է օգտակար լինել վերոհիշյալ խնդրի լուծման համար:*
- *Անչափահասների գործերով մասնագիտացված պաշտպանների գործունեության հիմնական կիզակետը պետք է լինի իր հաճախորդի ապագան և նրա այն խնդիրների լուծումը, որոնք կարող էին ենթադրյալ հակահիրավական վարքագծի պատճառ հանդիսանալ, այլ ոչ թե գործերի շուտափույթ վարումը: Պաշտպանի համար պետք է առաջնահերթ լինի այնպիսի գործողությունների ծրագրումը, որը կապահովի գործի ելքի՝ ազատությունից զրկելու հետ չկապված լուծումներ: Օգտվելով պաշտպան–հաճախորդ փոխադարձ վստահելի հարաբերություններից՝ պաշտպանները պետք է մշակեն հաճախորդի կարիքներին համապատասխանեցված անհատականացված լուծումներ, որոնց միջոցով կնվազեցվի քրեական արդարադատության համակարգի հետ հետագա շփումների հավանականությունը:*
- *Անչափահասների գործերով արգելել դատական քննության արագացված կարգի կիրառումը:*
- *Դատավորները պետք է անվերապահորեն կիրառեն առկա իրավական երաշխիքներ՝ թույլատրելով անչափահասների կողմից արդար դատաքննության իրավունքի որոշ երաշխիքներից գիտակցաբար և կամավոր հրաժարումը:*
- *Անչափահասների գործերով դատական քննությունների արագացումը չպետք է պայմանավորվի մեղքի ընդունմամբ:*
- *Բոլոր դեպքերում անչափահասի՝ իր կարծիքը հայտնելու իրավունքը պետք է խստորեն պահպանվի:*
- *Անչափահասների հանցագործությունների կանխարգելման արդյունավետ ծրագրեր իրականացնելու համար պետք է բացահայտել և համարժեքորեն գնահատել անչափահասների սոցիալ-տնտեսական և հոգեբանական պայմանները:*
- *Վերանայել գործող ներպետական օրենքները, ընթացակարգերը և գործելաոճը և համոզվել, որ անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության միջազգային չափորոշիչներն ամբողջությամբ պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ: Ընդունել անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության մասին հատուկ օրենք՝ հիմք ընդունելով Վկաների պաշտպանության տիպային օրենքը, որը պարունակում է տուժողի և վկայի արդյունավետ պաշտպանության նվազագույն անհրաժեշտ երաշխիքներ:*
- *Ապահովել անչափահաս տուժողների և վկաների իրավական, հոգեբանական և սոցիալական պաշտպանության շրջանակները:*
- *Խիստ պատժամիջոցներ կիրառել այն դեպքում, երբ անչափահասները հարցաքննվել են որպես վկա և հետագայում ճանաչվել են մեղադրյալ:*
- *Կազմակերպել պարբերական հանդիպումներ արդարադատություն իրականացնող մասնակից կողմերի հետ (առանց մեղադրյալի ներկայության), որոնք ներգրավված են անչափահասի յուրաքանչյուր գործով՝ քննարկելու գործի լուծման մինչդատական տարբերակները, իսկ դատապարտյալների դեպքում՝ ազատազրկման այլընտրանքային պատիժներ կիրառելու տարբերակները:*
- *Դատավորները պետք է արձագանքեն ճնշումների, բռնությունների, վատ վերաբերմունքի մասին բոլոր հայտարարություններին և դրանք փոխանցեն պատկան մարմիններին՝ քննություն անցկացնելու համար:*
- *Ընդլայնել պաշտպանության միջոցների գործող ցուցակը՝ կարևորելով անչափահասներին ֆիզիկապես պաշտպանություն:*

- *Վերանայել պաշտպանության միջոցների կիրառման պրակտիկան և նախաձեռնել բոլոր կողմերի մասնակցությամբ քննարկում՝ այդ միջոցների կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար:*
- *Նվազեցնել հնարավոր բռնությունների դեպքերը՝ օգտագործելով, օրինակ՝ օժանդակությունը ցուցմունքի տրմանը կամ անչափահաս ամբաստանյալների հարցաքննության ժամանակ ներգրավել հոգեբան փորձագետներին:*
- *Դատարանի դահլիճում դատավորի, դատախազի կամ պաշտպանի հարցաքննությունները նույնպես պետք է անցկացվեն անչափահասին հարմարեցված պայմաններում և մասնագետների օժանդակությամբ:*
- *Մեղադրյալ անչափահասի հետագա բռնությունները կանխելու համար մշակել հոգեբանասոցիալական միջոցառումների ծրագրեր (միայն այն դեպքերում, երբ անչափահասն ակնհայտորեն հոգեկան հիվանդություն ունի, դատարանը պետք է դիմի հոգեբույժի խորհրդատվությանը, եթե անչափահասն ի վիճակի չէ մասնակցելու դատական նիստին, կամ երբ պաշտպանությունն առաջարկում է դիմել հոգեբանական աջակցությանը):*
- *Կազմակերպել վերապատրաստման համապատասխան դասընթացներ, ընտրության ընթացակարգեր, ինչպես նաև անչափահասների հետ աշխատող տվյալ մասնագետների (կրթության, հոգեբանասոցիալական և բժշկության ոլորտի մասնագետներ, իրավաբաններ և իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, այդ թվում՝ դատավորներ և ոստիկանության աշխատակիցներ) համար հասանելի դարձնել կրթական և տեղեկատվական ծրագրերը, որպեսզի մասնագիտական մեթոդները, մոտեցումները բարելավվեն՝ երեխաների նկատմամբ ավելի արդյունավետ և հոգատար վերաբերմունք ձևավորելու համար:*
- *Իրականացնել հարցաքննության մեթոդների մանրակրկիտ անկախ ուսումնասիրություն՝ համոզվելու համար, որ ցուցմունքները տրվել են հոժարակամ և չեն կորզվել բռնությամբ՝ օգտվելով անչափահասի խոցելիությունից:*

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՓՈԽԱՐԻՆՄԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով

Իռլանդիա	Իռլանդական Գարդայի (ոստիկանության) քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով ծրագիր, կիրառում է ընտանիքի հետ խորհրդակցություններ (հանցավոր վարքագծի հիմքում ընկած խնդիրների բացահայտում), վերականգնողական արդարադատություն, հսկողություն (իրականացվում է հատուկ վերապատրաստված մասնագետների կողմից):
Բոսնիա-Հերցեգովինա	Օրենքներ, որոնցով առաջարկվում է առանց դատական քննություն անցկացնելու դաստիարակչական բնույթի միջոցների կիրառում:
Ֆինլանդիա	Կիրառվում է տուժողի և մեղադրյալի հաշտեցումը, որը կարող է քրեական հետապնդումից հրաժարվելու հիմք ծառայել:
Իտալիա	Մինչդատական վարույթ, դատարանի կողմից հաստատված պրոբացիայի ընթացքում պատշաճ վարքագծի դեպքում անձին կարող է ներում շնորհվել:
Բելգիա	Դատախազը կարող է որոշել կասեցնել դատական քննությունը, եթե անչափահասը համաձայնում է քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինմանը, ինչպես, օրինակ՝ վնասը փոխհատուցել, որպես կամավոր աշխատել: Դատախազները և դատավորները կարող են գործերն ուղարկել հաշտեցման կենտրոններ: Ուշադրությունը կենտրոնացվում է տուժողի և մեղադրյալի հաշտեցման, ինչպես նաև դաստիարակչական, հատուցողական և վերականգնողական միջոցների վրա: Ավելի քան 70% դեպքեր լուծվում են ոչ ֆորմալ և քրեական պատասխանատվությունը այլընտրանքային միջոցներով փոխարինելով:
Ֆրանսիա	Դատախազները կարող են նշանակել դատական քննության այլընտրանքային միջոցներ, այդ թվում՝ Maisons de Justice կամ արդարադատության համայնքային կենտրոններ, որտեղ վեճը արտադատական կարգով լուծելու համար առաջարկվում է տուժողի և մեղադրյալի հաշտեցում:
Ավստրալիա	Ոստիկանության նախազգուշական գործողությունների ընդլայնված կիրառում, ինչպես նաև այսպես կոչված ընտանեկան խմբակային խորհրդակցություններ, վերականգնողական արդարադատություն, երբ տուժողը, իրավախախտը և նրանց ընտանիքները հանդիպում են պրոֆեսիոնալ համակարգողի հետ:
Սերբիա	ՄԱԿՄՀ-ը վերջերս հայտնել է հաջողությամբ իրականացվող տուժողի և մեղադրյալի միջնորդության ծրագրի մասին:

Նիդերլանդներ	Մեղադրանքից հնարավոր է հրաժարվել, եթե մեղադրյալը տուժողին հատուցում վճարի կամ մասնակցի HALT (Het AL-Ternatief) ծրագրին: Անչափահաս մեղադրյալները կարող են մասնակցել HALT ծրագրին, եթե ինքնախոստովանություն են կատարել և նախկինում երկու անգամից ավելի չեն մասնակցել այս ծրագրին: Այն երիտասարդները, որոնք մասնակցում են այդ ծրագրերին, պետք է իրենց կողմից պատճառված վնասները հատուցեն, իսկ խորհրդատուներն աշխատում են երիտասարդների հետ՝ աջակցելով նրանց աշխատանքի տեղավորման, բնակության և կրթության խնդիրները լուծելու համար: Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո մեղադրանքները հանվում են, քրեական գործը՝ կարճվում: Դատախազը կարող է մեղադրանքից հրաժարվել նույնիսկ առանց դատավորի համաձայնության, եթե իրավախախտ անչափահասի կողմից բավարարվում են որոշ պայմաններ, այդ թվում, օրինակ՝ մինչև 40 ժամ հասարակական աշխատանքներ, մինչև 40 ժամ կրթական դասընթացներին մասնակցել (որտեղ ընգրկված են սեռական դաստիարակության, տուժողների մասին թեմաներ, սոցիալական հմտությունների դասընթացներ) կամ մինչև 6 ամիս անչափահասների պրոբացիա: Առաջին երեք տարբերակներն իրականացվում են Երեխաների պաշտպանության խորհրդի շրջանակներում այլընտրանքային պատժամիջոցների բյուրոյի կողմից:
Ալբանիա	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը վերջերս հայտնել է հաջողությամբ իրականացվող տուժողի և մեղադրյալի միջնորդության ծրագրի մասին:
Անգլիա/Ուելս	Ոստիկանության կողմից իրականացվող քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով. 1) ոչ մի հետագա գործողություններ, 2) ոչ պաշտոնական զգուշացում առանց որևէ գրանցումների, 3) նկատողություն առաջին անգամ հանցանք կատարողին, ինչպես նաև այն դեպքում, երբ ոչ ծանր հանցանք է կատարվել կամ 4) վերջնական նախազգուշացում և անչափահասի ուղեգրում Երիտասարդների հանցավորությամբ զբաղվող խումբ՝ հարկադիր վերականգնման կամ «դրական փոփոխությունների» ծրագրին համապատասխանությունը գնահատելու համար: Քրեական պատասխանատվությունը այլընտրանքային միջոցներով փոխարինման համակարգն այժմ ունի ավելի շատ սահմանափակումներ, քան Հանցագործության և իրավախախտման մասին 1998 թ. օրենքն ընդունելուց առաջ: Դատախազի կողմից նշանակվող քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով՝ դատախազն է ի վերջո որոշում, թե արդյոք գործը պետք է դատարա՞ն ուղարկել, թե՞ կարելի է չուղարկել՝ ելնելով հասարակության շահերից, սակայն այդ դեպքերը հազվադեպ են:
Հունաստան	Դատախազը կարող է պայմանականորեն կասեցնել գործը, իսկ անչափահասը պարտավորվում է ենթարկվել որոշակի դաստիարակչական միջոցների, այդ թվում՝ տուժողին հասցված վնասի փոխհատուցումը: Պայմանները կատարելուց հետո դատախազը կարճում է գործը:

Գերմանիա	Չի կիրառվում քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով, ինչպես Անգլիայում/Ուելսում, քրեական պատասխանատվության փոխարինման այլընտրանքային միջոցների բոլոր տեսակներն իրականացվում են միայն անչափահասների գործերով դատախազի կամ դատավորի մակարդակով: Օրենքը նախատեսում է անչափահաս կամ պատանի չափահաս մեղադրյալների (18-21 տարեկան) պատասխանատվությունից ազատում ոչ մեծ ծանրության հանցագործությունների կամ արդեն կիրառված սոցիալական/դաստիարակչական այլ միջամտությունների դեպքում: Հանցագործություններիների բնույթի առումով սահմանափակումներ չկան, նույնիսկ քրեական ծանր հանցագործությունների դեպքում քրեական պատասխանատվությունը որոշ հանգամանքներում կարող է փոխարինվել այլընտրանքային միջոցներով, օրինակ՝ կողոպուտի դեպքում, եթե իրավախախտը վերականգնում է վնասները կամ տուժողից այլ կերպ ներողություն է խնդրում: Այս գործելակերպը կիրառվում է նաև 18-21 տարեկան երիտասարդների նկատմամբ: Քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինումն ունի չորս մակարդակ՝ 1) քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով առանց որևէ պատժամիջոց կիրառելու՝ հիմնականում ոչ ծանր հանցանքների ժամանակ, 2) քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով այլ ինստիտուտների կողմից միջոցների կիրառմամբ (ծնողներ/դպրոց) կամ հաշտեցման զուգորդմամբ, և գործի կարճումը դաստիարակչական միջոցներ կիրառելուց հետո (հատուկ ուշադրություն է դարձվում հաշտեցմանը՝ որպես հատուկ դաստիարակչական միջոցի), 3) քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով միջամտության կիրառման զուգորդմամբ՝ դատախազն առաջարկում է, որ անչափահասների գործերով դատավորը մեղմ պատժամիջոց նշանակի, ինչպես, օրինակ՝ նախազգուշացում, հասարակական աշխատանքներ, վերապատրաստման դասընթացների մասնակցություն, որոշակի պարտավորությունների ստանձնում, օրինակ՝ փոխհատուցում/վնասների հատուցում, տուժողից ներողություն խնդրել կամ տուգանք վճարել: Երբ դա արվում է, դատախազը դատավորի հետ միասին գործը կարճում է կամ 4) մեղադրանք ներկայացնելուց և քննությունն արդեն սկսելուց հետո 1-3-րդ միջոցներից մեկի կիրառում:
Չեխիա	Առկա միջոցներից են. ա) գործի պայմանական կարճում՝ 6 ամսից մինչև 2 տարի պրոբացիա նշանակելով կամ բ) քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով և քրեական հետապնդումից հրաժարում: Այս միջոցները կարող են իրականացվել դատախազի, ինչպես նաև դատարանի կողմից, սակայն մինչ այժմ դատավորներն առանձնապես չեն ձգտում կիրառել նման միջոցներ, դատախազները նույնպես չեն դիմում այդ միջոցներին:
Սլովենիա	Գործերի մեծ մասը կարճվել է (2002 թ.գործերի մոտ 2/3-ը):

Ավստրիա	1) Միջամտության հետ զուգորդվող քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով, ներառյալ փոքր տուգանքներ և տուժողի/մեղադրյալի հաշտեցումը: 2) «Ապաքրեականացում»՝ 14-15 տարեկան ամբաստանյալներին տրվում են արտոնություններ միջին, ոչ ծանր հանցանքների համար, եթե չկան համոզիչ պատճառներ, որ դատարանը կիրառի անչափահասների վերաբերյալ քրեական օրենսդրությունը՝ ամբաստանյալի հետագա հանցագործությունները կանխելու համար:
Կանադա	Պատանիների և քրեական արդարադատության մասին օրենքը կարևորում է քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինման ծրագրերը և հաստատում է, որ նրանք պետք է «այնպիսին լինեն, որ սովորեցնեն անչափահասներին պատասխանատու լինել իրենց վարքագծի համար» (հոդված 4(գ)(դ): Եթե երիտասարդը կատարում է ծրագրի բոլոր պահանջները, բոլոր մեղադրանքները կարճվում են: Ոստիկանությունը և դատախազությունը լիազորված են կիրառել մասնավորապես հետևյալ միջոցները՝ i) ոչ մի հետագա գործողություն, ii) ոստիկանի կողմից ոչ պաշտոնական նախազգուշացում, iii) ոստիկանության կողմից պաշտոնական նախազգուշացում, iv) ոստիկանները ուղեգրում են գործերը համայնքային ծրագրեր կամ հաստատություններ կամ v) «Քրաուն» նախազգուշացում, տրվում է դատախազի կողմից, երբ ոստիկանությունը գործն ուղարկում է դատախազություն:
Նոր Զելանդիա	Ընտանիքի հետ խորհրդակցությունների անցկացում: Դրանք կազմակերպվում են հետևյալ վեց իրավիճակներում և յուրաքանչյուրի ժամանակ պետք է հետևյալ որոշումները կայացվեն. 1. «անչափահաս մեղադրյալի խնամքի և պաշտպանության խորհրդակցություն», որը վերաբերում է երիտասարդ մեղադրյալին, երբ իրավապահ մարմինների աշխատակցի կարծիքով՝ անչափահասը խնամքի և պաշտպանության կարիք ունի և որ համակարգողի հետ խորհրդակցելուց հետո և հասարակության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է ճանաչման խնդրանքով դիմել անչափահասի խնամքի և պաշտպանության ապահովմանը: Ընտանիքի հետ խորհրդակցության ժամանակ որոշվում է, թե արդյոք հանցանքը կատարվե՞լ է, և թե ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկել, այդ թվում՝ պե՞տք է երեխային ճանաչել որպես խնամքի և պաշտպանության կարիք ունեցող: 2. «Մինչև մեղադրանք առաջադրելը ընտանիքի հետ խորհրդակցության անցկացում», երբ պատանին կասկածվում է հանցանք կատարելու մեջ, նրան չեն ձերբակալում, չի կարող մեղադրանք առաջադրվել անչափահասների գործերով դատարանում, մինչև ոստիկանության և ընտանիքի հետ խորհրդակցության համակարգողի մասնակցությամբ խորհրդակցություն չի անցկացվում: Եթե խորհրդակցությունից հետո էլ ոստիկանությունը հակված է գործ հարուցել անչափահասի նկատմամբ, պետք է ընտանիքի հետ խորհրդակցություն հրավիրել: Ընտանիքի հետ խորհրդակցության ժամանակ կարող է որոշվել, թե արդյոք հանցանքն իրականում կատարվե՞լ է, և պե՞տք է արդյոք գործը դատարան ուղարկել:

3. «Կալանավորման վերաբերյալ խորհրդակցություն», երբ անչափահասը չի ընդունում հանցանքը, սակայն մինչև որոշում կայացնելը անչափահասների դատարանը կարգադրում է անչափահասին ուղարկել «Երեխայի, երիտասարդի և ընտանիքի ծառայություն» (որը սոցիալական զարգացման նախարարության ծառայություն է) կամ կալանքի տակ պահել ոստիկանությունում, այդ դեպքում պետք է կազմակերպել ընտանիքի հետ խորհրդակցություն:

Ընտանիքի հետ խորհրդակցության ժամանակ որոշվում է, թե արդյոք պե՞տք է շարունակել անչափահասին կալանքի տակ պահել, և որտե՞ղ է նա պահվելու, մինչև գործի վերաբերյալ որոշում կայացվի:

4. Երբ անչափահասն ընդունում է հանցանքը անչափահասների գործերով դատարանում, դատարանը պետք է կարգադրի ընտանիքի հետ խորհրդակցություն անցկացնել՝ «դատարանի պատվերով ընտանիքի հետ խորհրդակցություն»: Սա ընտանիքի հետ խորհրդակցությունների ամենատարածված տեսակն է:

Ընտանիքի հետ խորհրդակցության ժամանակ կարող է որոշվել, թե ի՞նչ գործողություններ և/կամ ի՞նչ պատժամիջոցներ պետք է կիրառվեն:

5. Երբ մեղադրանքը հաստատվում է անչափահասների դատարանում, և մինչ այդ հնարավորություն չի եղել անչափահաս մեղադրյալի վերաբերյալ պատշաճ որոշում կայացնել, պետք է ընտանիքի հետ խորհրդակցություն կազմակերպել:

Ընտանիքի հետ խորհրդակցության ժամանակ կարող է որոշվել, թե ի՞նչ գործողություններ և/կամ ինչ պատժամիջոցներ պետք է կիրառվեն:

6. Անչափահասների գործերով դատարանը կարող է կարգադրել ընտանիքի հետ խորհրդակցություն կազմակերպել դատական քննության ցանկացած փուլում, եթե դա համարվում է անհրաժեշտ կամ նպատակահարմար, այդ թվում՝ եթե դեպքն ակնհայտորեն ենթակա է քննության պաշտոնապես առաջադրված մեղադրանքի շրջանակներում, անկախ այն բանից, որ գործը գտնվում է անչափահասների գործերով դատարանի իրավասության ներքո:

Ընտանիքի հետ խորհրդակցելու խումբը բաղկացած է անչափահասներից, նրանց պաշտպանից, եթե նշանակված է, ընտանիքի անդամներից/ընտանիքի խումբ և յուրաքանչյուր հրավիրված անձից, տուժողներից և նրանց աջակցողներից կամ տուժողների ներկայացուցիչներից, ոստիկաններից, անչափահասների արդարադատության համակարգողից և այն դեպքերում, եթե «Երեխայի, երիտասարդի և ընտանիքի ծառայությունը» դեր է խաղացել անչափահասին պահելու, խնամակալության և հոգաբարձության համար, այդ կազմակերպության ներկայացուցիչը նույնպես պետք է մասնակցի խորհրդակցությանը:

Այլընտրանքային պատժամիջոցներ

Գերմանիա	Կիրառվում են այլընտրանքային պատժամիջոցներ, ներառյալ հաշտեցում: Առավել հաճախ կիրառվում են այլընտրանքային պատժամիջոցներ, թեև վերջին տարիներին այլընտրանքային պատժամիջոցների կիրառման տոկոսը նվազել է, դա պայմանավորված է քրեական պատասխանատվության՝ այլընտրանքային միջոցներով փոխարինման ընդլայնված կիրառմամբ: Պրոբացիան և պայմանական պատիժը լայնորեն կիրառվում են՝ նույնիսկ կրկնահանցագործության դեպքում: Անչափահասների գործերով դատավորները ղեկավարվում են ազատազրկումը որպես ծայրահեղ պատժամիջոց կիրառելու սկզբունքով և այն նշանակում են որքան հնարավոր է կարճ ժամկետով:
Իռլանդիա	Ըստ օրենքի՝ կիրառվում են ծնողների հսկողությանը հանձնելը, դաստիարակի հսկողությանը հանձնելը, բնակավայրի նկատմամբ հսկողությունը և կրթական դասընթացներին մասնակցությունը: Օրենքը սահմանում է, որ ազատազրկումը որպես պատժամիջոց չի կարող կիրառվել, և այն կիրառելի է միայն այն դեպքում, երբ գոյություն չունի այլ ողջամիտ այլընտրանք:
Բելգիա	ա) Դատարանները կարող են կարգադրել տեղավորել անչափահասներին սոցիալական ծառայության հսկողության տակ, որն ունի կրթության պայմաններ, կամ կարող են վստահելի անձի հետ ուղարկել խնամատար ընտանիքներ կամ դիտարկման և դաստիարակչական նպատակներով տեղավորել հսկողություն իրականացնող հաստատությունում: բ) Լայնորեն կիրառվում է հաշտեցման պրակտիկան: գ) Կիրառվում է ընտանեկան խորհրդակցությունը:
Բոսնիա-Հերցեգովինա	Վերականգնողական արդարադատության տարբերակ՝ հաշտեցման ընթացակարգի միջոցով, ներառյալ անձի ներողությունը, փոխհատուցումը և սոցիալական կամավոր աշխատանքների կատարումը:
Նիդերլանդներ	Վերականգնողական արդարադատությունը և բարեկեցության ապահովումը՝ սոցիալական ծառայությունների ներգրավմամբ:
Անգլիա/Ուելս	Անչափահասների վերականգնման կարգ՝ հնարավորություն է տալիս դատարաններին որոշում կայացնել՝ ընտրելով համայնքային միջոցների ամբողջական ցուցակից:
Ֆինլանդիա	Տուգանքներն ամենատարածված պատժամիջոցն են 15-17 տարեկան ամբաստանյալների դեպքում՝ կազմելով դատարանի որոշումների 74%-ը: Ազատազրկման շատ ցածր տոկոս (2006 թ. դատարանի բոլոր գործերի 0,8%-ը):

Հունաստան	Գործերի 75%-ում նշանակվում են դաստիարակչական բնույթի միջոցներ, դրանցից 50%-ը՝ նկատողություն: Ազատազրկումը երկրորդ ամենահաճախ կիրառվող պատժամիջոցն է և կազմում է բոլոր ազատազրկման որոշումների 20%-ը:
Սլովենիա	Ազատազրկումը խիստ հազվադեպ է կիրառվում (բոլոր գործերի 1%-ը), ավելի հաճախ կիրառվում է անչափահասներին հատուկ հաստատություն ուղարկելը (2006 թ. բոլոր գործերի 7%-ը): Բոլոր դատավճիռների 50%-ից ավելի դեպքերում նշանակվում է հսկողություն:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՄՐԱԳՐՎՈՂ ԱՌԱՋԱԴԵՄ ՓՈՐՁԸ

	Քրեական պատասխանատվության ոլորտում ցածր տարիքի անչափահասներ	Քրեական պատասխանատվության ոլորտում դրսևորվող հոգեբանական միջոցներով իրավունքների պահպանում	Ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցներ	Մոնիտորինգ և գնահատում	Մրցութային հիմունքներով կնքված պայմանագրերի ոլորտում	Ադրբեջանական գրասենյակի կողմից ամրագրվող հետագա իրավիճակները
ԱԼԲԱՆԻԱ	ՄԱԿՄՀ-ը, համագործակցելով Ալբանիայի հակամարտությունների լուծման հիմնադրամի (AFCR) և Նորվեգիայի հաշտեցման ծառայության հետ, աջակցություն է տրամադրել Տիրանայում 2006թ. մեկնարկած պիլոտային ծրագրին, որի շրջանակներում անչափահաս իրավախախտներին հաշտեցման հնարավորություն է առաջարկում, վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվում ոստիկանության աշխատակիցների, դատավորների և դատախազների համար, ինչպես նաև ծրագրի մեթոդների վերաբերյալ համաձայնագիր է կնքվել ոստիկանության հետ:					
ԱԴՐԲԵՋԱՆ	2007 թ. Բաքվի համայնքներից մեկում մեկնարկեց մի պիլոտային ծրագիր, որը 2008 թ. ընդգրկեց նաև այլ համայնքներ: Այդ ծրագիրը ծառայում է որպես քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինման միջոց անչափահասների համար՝ նրանց վերաբերյալ գործերն արդարադատության համակարգ չընդգրկելով, դատապարտված անչափահասների համար ծառայելով որպես այլընտրանքային միջոց և օժանդակելով այն անչափահասների վերաինտեգրման գործընթացին, որոնք չեն հասել քրեական պատասխանատվության տարիքին:				Իրավապահ մարմիններում երեխաների (մեղադրյալների, վկաների կամ տուժողների) իրավունքների ոտնահարումների հաճախակի դեպքերը նվազեցնելու համար ՄԱԿՄՀ-ը և իր գործընկերները ներքին գործերի նախարարության հետ համաձայնության են եկել մշակել անչափահասների արդարադատության կրթական ծրագիր և ընդգրկել ԵԻԿ–ի նյութերը ներքին գործերի նախարարության ոստիկանության ակադեմիայի շարունակական վերապատրաստման ծրագրում:	ՄԱԿՄՀ-ը և իր գործընկեր «Երեխաների իրավունքների միություն» ՀԿ-ն, սերտորեն համագործակցելով Բաքվում օմբուդսմանի և ԵԱՀԿ գրասենյակների հետ, 2007 թ. հիմնեցին երեխաների իրավունքների իրավաբանական խորհրդատվության գրասենյակ: Այս ծրագրի հիմնական նպատակն է խոցելի անչափահասներին և նրանց ընտանիքներին իրավաբանական խորհրդատվություն, օժանդակություն և իրավաբանական ներկայացուցչության անվճար աջակցություն տրամադրել:
ՎՐԱՍՏԱՆ						2007 թ. իրավաբանական աջակցության ծառայություն է ստեղծվել: Երկրում այժմ գործում է 12 գրասենյակ: Մինչև 18 տարեկան ցանկացած անձ կարող է դիմել անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար, որն ընդգրկում է ներկայացուցչություն ապահովելը քրեական գործերով բոլոր կալանավորվածներին, մեղադրյալներին և դատապարտյալներին մինչդատական և դատական քննության փուլերում:

ԿՈՍՈՎՈ	Կոսովոյի Terre des homes-ը մշակել է դաստիարակչական և աջակցության ծրագիր ռիսկային խմբիա անչափահասների համար, որոնց տվյալները տրամադրում են դպրոցները, սոցիալական աշխատանքի կենտրոնները և ոստիկանությունը: Այժմ արդեն 350 երեխա օգնություն է ստացել այդ ծրագրից: Սկսած 2007 թ.՝ այդ ծրագիրը «Կոսովոյի անչափահասների արդարադատության համակարգի աջակցություն» ծրագրի մասն է կազմել, որն աջակցություն է ստանում Վերակառուցման եվրոպական գործակալությունից (EAR) և իրականացվում ՄԱԿՄՀ-ի կողմից Terre des hommes միջոցով:					
	Կոսովոյի Terre des homes-ը ՄԱԿՄՀ-ի աջակցությամբ և Կոսովոյում ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարման առաքելության (UNMK) ղեկավարության համաձայնությամբ նախաձեռնել է Համայնքային ծառայությունների մասին կարգերի մշակումը (2002-2004 թթ. 116 գործ է քննվել), որը կիրառվել է Կոսովոյի Անչափահասների արդարադատության քրեական օրենսգրքի հետ միաժամանակ և Կոսովոյում պրոբացիոն ծառայությունների հիմնմանը զուգընթաց(2004 թ.):					
ՄԱԿԵԴՈՆԻԱ					ՄԱԿՄՀ-ը ներգրավված է եղել իրավապահ մարմինների աշխատակիցների անչափահասների արդարադատության վերաբերյալ նախնական ուսումնական հատուկ ծրագրի մշակման մեջ: Ոստիկանության ակադեմիայի աշխատակիցներից ընտրվել էր փորձագետների ազգային թիմ, որը պետք է անչափահասների արդարադատության և անչափահաս տուժողների վերաբերյալ աշխատանքի վայրում իրականացվող կրթական ծրագիր մշակեր: Կրթական ծրագրի վերջնական տարբերակը ներկայացվել էր ոստիկանության ակադեմիայի կրթության խորհրդին և ընդունվել: Այսպիսով այդ ծրագիրը դարձավ իրավապահ մարմինների մասնագետների բարձրագույն կրթության ծրագրերի պաշտոնական մի մաս:	
					Արդարադատության նախարարության հովանու ներքո ստեղծվեց անչափահասների ազգային արդարադատության աշխատանքային խումբ, որը պետք է Անչափահասների արդարադատության մասին օրենք մշակեր: Երբ օրենքը վերջնական տեսքի բերվեց և ընդունվեց, աշխատանքային խմբի դերը փոխվեց: Այն դարձավ անչափահասների ազգային արդարադատությունը համակարգող մարմին և Անչափահասների արդարադատության մասին օրենքը կիրարկելու գործողությունների ծրագիր մշակեց:	

ՄՈԼԴՈՎԱ		Պրոբացիայի համակարգը Մոլդովայում սկսել է մշակվել դեռևս 2001 թ. քրեական բարեփոխումների ինստիտուտի և Մոլդովայի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատանքային խմբի կողմից: Գործնական իրականացումը սկսվել է 2004 թ. զեկույց, որը պատրաստվել է մինչև դատավճիռը և առաջին անգամ ներկայացվել է Քիշնևի Ցենտրու համայնքում, որը 2007 թ. փորձարկվեց երեք այլ համայնքներում: Այդ նույն թվականին պրոբացիայի ծառայություն ստեղծվեց նաև դատական ակտերի հարկադիր կատարման վարչությունում: 2008 թ. ուժի մեջ մտավ Պրոբացիայի մասին օրենքը՝ ապահովելով մինչդատական վարույթում, համայնքային պատժի, ուղղիչ և պատիժը կրելուց հետո հետո պրոբացիոն նորարարական մեխանիզմներ:				
ՄՈՆՏԵՆԵԳՐՈ					Մոնտենեգրոյում անչափահասների արդարադատության բարեփոխումների նպատակով ստեղծված ազգային հանձնաժողովը դրական ազդեցություն ունեցավ անչափահասների հետ աշխատող մասնագետների վրա և լիազորում է նրանց պահանջել կառավարությունից՝ իրականացնել բարեփոխումներ: Անչափահասների արդարադատության այս մարմինը, որը բաղկացած է արդարադատության, ոստիկանության, սոցիալական, կրթության ոլորտի անչափահասների արդարադատության մասնագետներից, ծառայում է բարեփոխումների շարժիչ ուժ:	Համագործակցություն է հաստատվել օմբուդսմանի գրասենյակի հետ: Համաձայնություն է ձեռք բերվել օմբուդսմանի գրասենյակի աշխատակիցներին մասնագիտացնել երեխաների իրավունքի ոլորտում և ընդգրկել օմբուդսմանի ներկայացուցիչներին բարեփոխումների տարբեր ծրագրերում, ներառյալ անչափահասների արդարադատության հանձնաժողովը:
ՏԱՋԻԿՍՏԱՆ	Անչափահասների արդարադատության այլընտրանքների ծրագրի նպատակն է պահպանել միջազգային չափորոշիչները և նորմերը, բացահայտել և լուծել այն երեխաների խնդիրները, որոնք հանցանք են կատարել և պատկանում են կրկնահանցագործների ռիսկային խմբին, ինչպես նաև օգնել բավարարելու նրանց ընտանիքների կարիքները: Պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցություն սկսել՝ հանցանքները և կրկնահանցագործությունները կանխելու և իրենց համայնքներում երեխաների վերականգնվելու առավելությունները ներկայացնելու կառավարությանը և իրավապահ մարմինների ներկայացուցիչներին:					

ՍԵՐԲԻԱ		Անչափահաս իրավախախտների մասին օրենքն ընդունվել է 2005 թ. և ուժի մեջ է մտել 2006 թ.: Այդ պահից անչափահասների արդարադատության բարեփոխումները իրավական հիմք ունեն: Նոր օրենքը կարևոր ձեռքբերումներ ունի, քանի որ այն հստակորեն սահմանում է վերականգնողական արդարադատության որոշ տեսակներ (ներողություն հայտնելը, հատուցումը և համայնքային աշխատանքները՝ որպես այլընտրանքային միջոց և քրեական պատասխանատվության փոխարինումն այլընտրանքային միջոցներով): Օրենքը մեղադրյալ անչափահասների քրեական պատասխանատվությունը այլընտրանքային միջոցներով փոխարինման, հետապնդման և դատապարտման, ինչպես նաև ազատազրկման և ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատժամիջոցների կիրառման նոր ընթացակարգեր է սահմանում:		Անչափահաս իրավախախտների մասին 2006 թ. ընդունված օրենքը հստակորեն սահմանում է, որ անչափահաս իրավախախտների գործերով զբաղվող մասնագետները, ներառյալ դատավորները, դատախազները, պաշտպանները և ոստիկանության աշխատակիցները պետք է հավաստագրվեն և երեխայի իրավունքների ու անչափահասների արդարադատության թեմայով մասնագիտացված վերապատրաստման դասընթացների մասնակցեն: Նոր պարտավորություն ստանձնելը առաջացրել է վերապատրաստման դասընթացների պարտադիր մասնակցություն, ինչպես նաև դասընթացների նյութերի մշակում: ՄԱԿՄՀ-ն աջակցել է Անչափահասների արդարադատության մասին օրենքի կիրակմանը և օժանդակել է դատական ուսուցման կենտրոնին, որը պատասխանատու է վերապատրաստման դասընթացներ անցկացնելու համար:	ՄԱԿՄՀ-ը բազմաթիվ գործողություններ է իրականացրել Կրուժևացի անչափահասների քրեակատարողական հիմնարկում (JCIK)՝ բարելավելու հոգեբանասոցիալական խնամքը և իրավախախտ երեխաների պաշտպանությունը, ինչպես նաև մշակել ծրագրեր, որոնք ուղղված են զարգացնելու առօրյա կյանքի համար հմտությունները և ազատազրկումից հետո խնամքի կազմակերպումը,. որոնք ազատությունից զրկված անչափահասներին հնարավորություն կտան վերահնտեգրվել հասարակությանը: Որպես ազատազրկման հիմնարկից ազատման և հատուկ հաստատություններում անչափահասների գտնվելու ժամկետը կրճատելու ջանքերի բաղկացուցիչ՝ ընտրվել էր Կրուժևացի անչափահասների ուղղիչ հաստատությունը՝ որպես վարքագծի կառավարման փորձնական ծրագրի (BMP) վայր՝ «մակարդակների» և «միավորների» համակարգ ներդնելու համար:
		Տուժողի և մեղադրյալի հաշտեցումը Սերբիայում իրականացվել էր փորձնական ծրագրերում երեք տարբեր ուղիներով: Առաջինը՝ Նիս քաղաքում տուժողի և մեղադրյալի հաշտեցման կենտրոն (VOM) էր բացվել: Երկրորդ ուղին էր անչափահասների ուղղիչ հաստատություններում VOM-ը դարձնել կոնֆլիկտների լուծման մոտեցում, իսկ երրորդը՝ ներգրավել VOM-ը սոցիալական ՀԿ-ների շրջիկ խմբերի աշխատանքում՝ 14 սոցիալական աշխատանքի կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ:			
ՈՒԿՐԱԻՆԱ	Արդարադատության վերականգնողական գործողությունները աջակցություն են ստանում Ուկրաինայի մի շարք շրջաններում գտնվող կենտրոններից (UCCG): Վերականգնողական արդարադատության գործընթացների կիրառման ժամանակ դեմառդեմ են բերվում իրավախախտները և նրանց հանցանքից տուժողները, որին մասնակցում է օժանդակող մասնագետը, սովորաբար՝ համայնքից կամավոր: Հանցանքն անհատականացվում է, քանի որ իրավախախտն ըմբռնում է իր հանցանքի հետևանքները, իսկ տուժողները (որոնք հիմնականում արհամարհված են արդարադատության համակարգի կողմից) հնարավորություն են ստանում արտահայտելու իրենց մտքերը, զգացմունքները նրան, ով առաջինը պետք է լսեր դրանք, այն օգնում է տուժողին, ինչպես նաև հանցանքից տուժող հասարակության այլ անդամներին ավելի արագ վերականգնվել:			«Իրավաբանական աջակցության փորձնական ծրագիր» բարեգործական կազմակերպությանը կից Խարկովի հանրային պաշտպանի գրասենյակը ստեղծվել է 2006 թ. օգոստոսին՝ Ուկրաինայում անվճար իրավաբանական օգնության բարեփոխումների հայեցակարգի համաձայն, որը հաստատվել է Ուկրաինայի նախագահի 2006 թ. հունիսի 9-ի որոշմամբ և ֆինանսավորվում է «Վերածնունդ» միջազգային հիմնադրամի կողմից: Խարկովի հանրային պաշտպանի գրասենյակը փորձնական ծրագիր է, որն ուղղված է աղքատ անձանց փորձառու իրավաբանների ներգրավմամբ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելը կազմակերպությունների միջոցով: Այդ գրասենյակների պաշտպանները բարեխղճորեն կատարում են իրենց մասնագիտական պարտականությունները, հաճախորդներին տրամադրում են լիակատար պաշտպանություն և ընդլայնում են վերականգնողական և հաշտարար արդարադատության կիրառման շրջանակները:

ԹՈՒՐՔԻԱ					2001 թ. Թուրքիայի ազգային ոստիկանությունը (TNP) վերակազմավորվեց՝ անչափահասներին առնչվող գործողությունները բարելավելու համար, և «անչափահասների ոստիկանության ստորաբաժանումներ» բացվեցին 81 ոստիկանության քաղաքային բաժիններում: Այդ ստորաբաժանումները գործում են Հասարակական կարգի վարչությանը առընթեր, և յուրաքանչյուրը բաղկացած է հինգ բյուրոյից: 0-18 տարեկան երեխաներին, ներառյալ անօթևան, լքված երեխաներին և փախստական երեխաներին, ինչպես նաև իրավախախտ երեխաներին առնչվող բոլոր դատական և վարչական ծառայություններն իրականացվում են վերոհիշյալ ստորաբաժանումների կողմից: Ներկայումս ամբողջ երկրում կան երեխաների հետ աշխատող ոստիկանության 4000 մարդուց բաղկացած անձնակազմ, որն աշխատանքի վայրում մշտական վերապատրաստում է անցնում՝ երեխաների հետ աշխատելու հմտությունները բարելավելու համար:	Արդարադատության նախարարությունը, տեխնիկական աջակցություն ստանալով ՄԱԿՄՀ-ից և ֆինանսավորում Եվրոպական միությունից, Թուրքիայում, անչափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկներում և անչափահաս կալանավորված անձանց պահելու վայրերում և հատուկ կրթական հաստատություններում աշխատող հոգեբանասոցիալական և այլ մասնագետների վերապատրաստման դասընթացներ անցկացնելու համար նոր չափորոշիչներ է ընդունել: Ի սկզբանե ծրագիրը իրականացվում էր նախաձեռնողների միջոցով, ինչպես նաև նախարարության անձնակազմի օգնությամբ: Այդ գործունեությունը մասնակցության կրթական մեթոդի օրինակ է, որը բացարձակ հաջողություն ունի, այն մշակվել է արդարադատության նախարարությունում, ստեղծված էր նախարարության համար, օգտագործվում էին թուրք խորհրդատուները, որոնք կառավարման դասընթացներ էին անցկացնում, որի ընթացքում ներկայացնում էին անչափահասների հետ ավելի արդյունավետ աշխատելու գործիքներ և տեղեկատվություն: Մոդուլները սովորեցնում էին կալանքի տակ գտնվող անչափահասների հանդեպ ավելի բարյացակամ վերաբերմունք դրսևորել: Այդ ծրագրերն ընդգրկվել են արդարադատության նախարարության վերապատրաստման համակարգում և շարունակական են:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Basic principles on the use of restorative justice programmes in criminal matters, ECOSOC Resolution 2000/14. Քրեական գործերով անչափահասների վերականգնողական ծրագրերի օգտագործման հիմնական սկզբունքները,
2. Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (1950).
3. Council of Europe Convention on Contact concerning Children (2003).
4. European Conventi n on the Exercise of Children's Rights (1996).
5. Guidelines for Action on Children in the Criminal Justice System.
6. Human Rights Council Resolution (A/HRC/10/L.15) on human rights in the administration of justice, in particular juvenile justice (20 March 2009).
7. Recommendation Rec (2000)20 on the role of early psychosocial intervention in the prevention of criminality.
8. Recommendation Rec (88) 6 on social reactions to juvenile delinquency among young people coming from migrant families.
9. Recommendation CM/Rec(2008)11 on the European Rules for Juvenile Defendants subject to sanctions or measures.
10. Recommendation CM/Rec(2009)10 on Policy Guidelines on integrated national strategies for the protection of children from violence.
11. Recommendation Rec (87) 20 on social reactions to juvenile delinquency.
12. Recommendation Rec(2003)20 concerning new ways of dealing with juvenile delinquency and the role of juvenile justice.
13. Recommendation Rec(2005)5 on the rights of children living in residential institutions.
14. Recommendation Rec(2006)2 on the European Prison Rules.
15. Resolution (78) 62 on juvenile delinquency and social change.
16. Resolution No. 2 on Child-friendly Justice, adopted at the 28th Conference of European Ministers of Justice (Lanzarote, October 2007).
17. Resolution (66) 25 on short-term treatment of young defendants of less than 21 years
18. Revised European Social Charter (1996).
19. UN Committee on the Rights of the Child General Comment No. 10 (2007) on "Children's rights in juvenile justice".
20. UN Guidelines on the Administration of Juvenile Justice: the "Vienna Guidelines", ECOSOC Resolution 1997/30 (1997).
21. UN Standard Minimum Rules for Non-Custodial Measures: The Tokyo Rules.
22. United Nations Convention on the Rights of the Child (1989).
23. United Nations Guidelines for the Appropriate Use and Conditions of Alternative Care for Children (2009).
24. United Nations Guidelines for the Prevention of Juvenile Delinquency ("The Riyadh guidelines", 1990).
25. United Nations Guidelines on Justice in matters involving Child Victims and Witnesses of Crime (ECOSOC Res 2005/20, 2005).

26. United Nations Rules for the Protection of Juveniles Deprived of their Liberty (“The Havana Rules”, 1990).
27. United Nations Standard Minimum Rules for the Administration of Juvenile Justice (“The Beijing Rules”, 1985).

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ (ՈՒԺԻ ՄԵՋ ԵՆ ԵՂԵԼ ՆՅՈՒԹԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ)

Ա. Անչափահասներին վերաբերող ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածները

Հոդված 104. Սպանությունը

1. Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

2. Սպանությունը՝

1) երկու կամ ավելի անձանց,

2) անձի կամ նրա մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

3) զուգորդված՝ մարդուն առևանգելով կամ պատանդ վերցնելով,

4) ակնհայտ հղի կնոջ,

5) առանձին դաժանությամբ,

6) շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,

7) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

8) շահադիտական դրդումներով, պատվերով, ինչպես նաև զուգորդված՝ շորթմամբ, ավազակությամբ կամ բանդիտիզմով,

9) զուգորդված՝ ահաբեկչությամբ,

10) խուլիգանական դրդումներով,

10.1) որը կատարվել է զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից,

11) այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով,

12) զուգորդված՝ բռնաբարությամբ կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններով,

13) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,

14) տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով,

15) նախկինում սպանություն կատարած անձի կողմից, բացառությամբ սույն օրենսգրքի 105-108-րդ հոդվածներով նախատեսված արարքների՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

(104-րդ հոդվածը լրաց. 18.03.09 ՀՕ-53-Ն)

Հոդված 112. Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը

1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատ-

ճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

3) (3-րդ կետն ուժը կորցրել է 09.06.04 ՀՕ-97-Ն),

4) առանձին դաժանությամբ,

5) շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,

6) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

7) շահադիտական դրդումներով,

8) ահաբեկչությամբ զուգորդված,

9) խուլիգանական դրդումներով,

10) այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով,

11) բռնաբարությամբ կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններով զուգորդված,

12) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,

13) տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով,

14) անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

(112-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն)

Հոդված 113. Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը

1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է առողջության տևական քայքայում կամ ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ՝

պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

3) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

4) շահադիտական դրդումներով,

5) առանձին դաժանությամբ,

6) խուլիգանական դրդումներով,

7) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Հոդված 116. Առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ

1. Մեկ ուրիշի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

(116-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն)

Հոդված 137. Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը

1. Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափը:

(137-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, 01.06.06 ՀՕ-119-Ն)

Հոդված 175. Ավազակությունը

1. Ավազակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Ավազակությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով,

3) բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով,

4) զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ,

5) կրկին անգամ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Ավազակությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) առողջությանը ծանր վնաս պատճառելով,

4) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Սույն գլխում մանր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):

Սույն գլխում զգալի չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):

Սույն գլխում և սույն օրենսգրքի 216-րդ հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):

Սույն գլխում և սույն օրենսգրքի 216-րդ հոդվածում առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Սույն գլխով նախատեսված դեպքերում հափշտակությունը համարվում է կրկին անգամ կատարված, եթե դա կատարվել է նախկինում սույն օրենսգրքի 175-182-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձի կողմից:

(6-րդ պարբերությունն ուժը կորցրել է 14.12.04 ՀՕ-58-Ն)
(175-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, 14.12.04 ՀՕ-58-Ն)

Հոդված 176. Կողոպուտը

1. Կողոպուտը՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Կողոպուտը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է խոշոր չափերով,

3) կատարվել է բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով,

4) զուգորդվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

5) կատարվել է կրկին անգամ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Կողոպուտը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) (3-րդ կետն ուժը կորցրել է 09.06.04 ՀՕ-97-Ն),

4) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

(176-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, 01.06.06 ՀՕ-119-Ն)

Հոդված 177. Գողությունը

1. Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը, զգալի չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորս-հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Գողությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով,

4) կրկին անգամ,

5) (5-րդ կետն ուժը կորցրել է 09.06.04 ՀՕ-97-Ն)

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

3. Գողությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Տուժողի հագուստից, պայուսակից կամ ձեռքի այլ պահոցից կատարված մանր չափերով գողությունը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրա-պատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

(177-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, խմբ., փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն)

Հոդված 178. Խարդախությունը

1. Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգ-հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Խարդախությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) կրկին անգամ,

4) (4-րդ կետն ուժը կորցրել է 09.06.04 ՀՕ-97-Ն)

5) կաշառք ստանալու պատրվակով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

3. Խարդախությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

(178-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, խմբ., փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն, լրաց. 30.04.08 ՀՕ-49-Ն)

Հոդված 179. Յուրացնելը կամ վատնելը

1. Յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) խոշոր չափերով,

4) կրկին անգամ,

5) (5-րդ կետն ուժը կորցրել է 09.06.04 ՀՕ-97-Ն)

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

(179-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, 24.12.04 ՀՕ-67-Ն, 01.06.06 ՀՕ-119-Ն)

Հոդված 185. Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը

1. Ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը զգալի չափերի վնաս է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը՝

1) կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով,

2) խոշոր չափերի վնաս է պատճառել,

3) կատարվել է՝ կապված անձի կամ նրա մերձավորի կողմից իր ծառայողական կամ հասարակական պարտքը կատարելու հետ,

4) կատարվել է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը՝

1) առանձնապես խոշոր չափերի վնաս է պատճառել,

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,

3) առաջացրել է պատմական, գիտական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաների ոչնչացում կամ վնասում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

(185-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն)

Հոդված 258. Խուլիգանությունը

1. Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ մինչև մեկ ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

2) զուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով,

3) կատարվել է նախկինում խուլիգանություն կատարած անձի կողմից,

4) զուգորդվել է անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով,

5) զուգորդվել է բացառիկ ցինիզմով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

(258-րդ հոդվածը խմբ. 16.12.05 ՀՕ-33-Ն)

Հոդված 259. Ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը

Նախապատրաստվող ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(259-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն)

Հոդված 268. Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի

(Վերնագիրը փոփ. 26.05.08 ՀՕ-76-Ն)

1. Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) կրկին անգամ,

2) խոշոր չափերով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Նույն արարքները, որոնք կատարվել են առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

(268-րդ հոդ վածը փոփ., լրաց., խմբ. 26.05.08 ՀՕ-76-Ն)

Հոդված 324. Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը

1. Քաղաքացու անձնագիրը կամ կարևոր այլ փաստաթուղթ հափշտակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Պաշտոնական փաստաթղթեր, դրոշմներ կամ կնիքներ հափշտակելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը, որը կատարվել է շահադիտական դրդումներով կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Բ. Քրեական օրենսգրքի՝ անչափահասներին վերաբերող հատուկ դրույթներ

ԲԱԺԻՆ 5

ԳԼՈՒԽ 14. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԺԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 85. Անչափահասների քրեական պատասխանատվությունը և պատիժը

1. Անչափահասները քրեական պատասխանատվության են ենթարկվում, և նրանց նկատմամբ պատիժ է նշանակվում սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն բաժնում նախատեսված կանոնները:

2. Հանցանք կատարած անչափահասի նկատմամբ կարող է նշանակվել պատիժ կամ կարող են նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Հոդված 86. Պատժի տեսակները

Անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակներն են՝

1) տուգանքը.

2) հանրային աշխատանքները.

3) կալանքը.

4) որոշակի ժամկետով ազատազրկումը:

Հոդված 87. Տուգանքը

1. Տուգանքը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում:

2. Տուգանքը նշանակվում է պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

Հոդված 88. Կալանքը

Կալանքը տասնհինգ օրից երկու ամիս ժամկետով նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին լրացած անչափահասի նկատմամբ:

Հոդված 89. Ազատազրկումը

1. (1-ին մասն ուժը կորցրել է 24.12.04 ՀՕ-67-Ն)

2. Ազատազրկումն անչափահասների նկատմամբ նշանակվում է՝

1) ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, իսկ միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը երեք տարի ժամկետով.

2) մինչև տասնվեց տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը յոթ տարի ժամկետով.

3) տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը տասը տարի ժամկետով:

(89-րդ հոդվածը փոփ. 24.12.04 ՀՕ-67-Ն)

Հոդված 90. Պատիժ նշանակելը

1. Անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը:

2. Մինչև տասնվեց տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել յոթ տարին:

3. Տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել տասը տարին:

4. Ըստ դատավճիռների համակցության՝ ազատազրկման ձևով նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասներկու տարին:

Հոդված 91. Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով

1. Առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

2. Անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները.

1) նախազգուշացում.

2) ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով.

3) պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում.

4) ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը վեց ամիս ժամկետով:

3. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ:

4. Անչափահասի նկատմամբ կարող է միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց:

5. Եթե անչափահասը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցից պարբերաբար խուսափում է, ապա տեղական ինքնակառավարման մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ նյութերն

ուղարկվում են դատարան՝ նշանակված միջոցը վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար:

6. Նոր հանցանք կատարելիս անչափահասը քրեական պատասխանատվության ենթակա չէ նախկին հանցագործության համար, եթե վերջինիս կապակցությամբ նրա նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց:

Հոդված 92. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների բովանդակությունը

1. Նախազգուշացումը անչափահասի արարքով պատճառած վնասի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված հանցանքների կրկնակի կատարման հետևանքների պարզաբանումն է անչափահասին:

2. Հսկողության հանձնելը ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի վրա անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության և նրա վարքագծի նկատմամբ վերահսկողության պարտականություն դնելն է:

3. Պատճառված վնասը հարթելու պարտականությունը դրվում է՝ հաշվի առնելով անչափահասի գույքային դրությունը և նրա մոտ համապատասխան աշխատանքային ունակությունների առկայությունը:

4. Ժամանցի ազատության սահմանափակումը և անչափահասի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը կարող են նախատեսել որոշակի վայրեր այցելելու, ժամանցի որոշակի ձևերի, այդ թվում՝ մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված արգելք, օրվա որոշակի ժամերից հետո տանից դուրս գտնվելու, առանց տեղական ինքնակառավարման մարմնի համաձայնության այլ վայրեր ուղևորվելու իրավունքի սահմանափակում: Անչափահասին կարող է նաև ուսումնական հաստատություն վերադառնալու կամ տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի տեղավորվելու պահանջ ներկայացվել:

Հոդված 93. Պատժից ազատելը հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով

1. Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է պատժից ազատվել, եթե դատարանը գտնի, որ պատժի նպատակներին կարելի է հասնել նրան անչափահասների հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով:

2. Հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելը նշանակվում է առավելագույնը երեք տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան չափահաս դառնալը:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասում նշված հաստատություններում գտնվելը կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե դատարանը ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատության ղեկավարի միջնորդությամբ գտնի, որ անչափահասը տվյալ միջոցը հետագա կրելու կարիքը չունի:

Հոդված 94. Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելը

Անչափահաս տարիքում հանցանք կատարած և ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը.

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը.

3) առանձնապես ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը:

(94-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, լրաց. 24.12.04 ՀՕ-67-Ն)

Հոդված 95. Քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով

Մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս սույն օրենսգրքի 75-րդ և 81-րդ հոդվածներով նախատեսված վաղեմության ժամկետները համապատասխանաբար կրճատվում են կիսով չափ:

Հոդված 96. Դատվածության մարումը

1. Ազատազրկման հետ չկապված պատիժը կրելուց հետո անձի դատվածությունը համարվում է մարված:

2. Մինչև տասնութ տարին լրանալը հանցանք կատարած անձանց համար սույն օրենսգրքի 84-րդ հոդվածով նախատեսված դատվածությունը մարվելու ժամկետները կրճատվում են և համապատասխանաբար հավասար են՝

1) մեկ տարվա՝ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկումը կրելուց հետո.

2) երեք տարվա՝ ծանր հանցագործության համար ազատազրկումը կրելուց հետո.

3) հինգ տարվա՝ առանձնապես ծանր հանցագործության համար ազատազրկումը կրելուց հետո:

Գ. Քրեական դատավարության օրենսգրքի անչափահասներին վերաբերող հատուկ դրույթներ

ԳԼՈՒԽ 50. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 439. Անչափահասների գործերով վարույթի կարգը

1. Սույն գլխի դրույթները կիրառվում են այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ում տասնութ տարին չի լրացել հանցանքը կատարելու պահին:

2. Անչափահասների գործերով վարույթի կարգը կարգավորվում է սույն օրենսգրքի ընդհանուր կանոններով, ինչպես նաև սույն գլխի հոդվածներով:

Հոդված 440. Անչափահասների գործերով հաստատման ենթակա հանգամանքները

Բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով անհրաժեշտ է պարզել նաև անչափահասի՝

1) տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը).

2) կյանքի և դաստիարակության պայմանները.

3) առողջության և ընդհանուր զարգացման վիճակը:

Հոդված 441. Անչափահասի օրինական ներկայացուցչի մասնակցությունը գործի քննությանը

Անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությանը մասնակցում է անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը:

Հոդված 442. Անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելը

Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում:

Հոդված 443. Անչափահասին պատժից ազատելը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով

Դատարանը, դատավճիռ կայացնելիս, գալով այն եզրակացության, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, կարող է անչափահասին ազատել պատժից և նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: